1080

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՄԱՊԱՀՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ

ՊԵՏ ՅԵՐԵՎԱՆ 1936

636
Շ-21

„Անասնապահության գործը պետք է իրենց ձեռքն առնեն ամբողջ կուսակցությունը, մեր բոլոր աշխատավորները՝ կուսակցականներն ու անկուսակցականները“:

Ի. ՍՏԱԼԻՆ

636
Շ-21

30 JUL 2010

Գրքեր մարմնի բոլոր յուրքերի, միացեք։

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՍՆԱՊԱՀՆԵՐԸ ԿՐԵՄԼՈՒՄ

1080

ՊԵՏՀՐԱՏ 1936 ԵՐԵՎԱՆ

21.490

13 JUL 2013

4950-91



ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՀԱՄԱՐ ԲԵԿՈՒՄՆ ՍՏԵՂԾՎԱԾ Է

Ժողովուրդների մեծ Առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԸ կուսակցության 17-րդ Համագումարում պահանջ դրեց 1934 թվականը դարձնել անասնապահության վերելքի համար բեկման տարի, իսկ մեկ տարի անց՝ առաջավոր կոմբայնավարների և կոմբայնավարուհիների խորհրդակցության մեջ արտասանած ճառում նշեց, որ

«Մարդկանց պարենը միայն հացով չի սահմանափակվում։ Նրանց հարկավոր է նաև միս, ճարպեղեն։ Քաղաքների աճումը, տեխնիկական կուլտուրաների աճումը, ագրարնակության ընդհանուր աճումը, ունեվոր կյանքը—այս բոլորը տանում է դեպի այն, որ աճում է մսի, ճարպեղենի պահանջը։ Հետևապես անհրաժեշտ է ունենալ լավ հիմքերի վրա դրած անասնապահություն՝ մեծ քանակությամբ մանր ու խոշոր անասուններով, որպեսզի հնարավորություն ունենանք բավարարելու բնակչության՝ մսամթերքների աճող պահանջները»։

Ընկեր ՍՏԱԼԻՆԸ վոչ միայն դրեց սոցիալիստական անասնապահության վերելքի խնդիրը, այլև նշեց այդ վերելքի ուղիները։

«Անասնապահության գործը պետք է իրենց ձեռքն առնեն ամբողջ կուսակցությունը, մեր բոլոր աշխատավորները՝ կուսակցականներն ու անկուսակցականները, նկատի ունենալով, որ անասնապահության պրոբլեմն այժմ այնպիսի առաջնահերթ պրոբլեմ է, որպիսին հացահատիկի պրոբլեմն էր յերեկ արդեն հաջողությամբ լուծված»։

(ՍՏԱԼԻՆ)

Մեր առաջ դրված եր մի հսկայական խնդիր, մեզնից պահանջվում եր լուրջ պայքար՝ անասնապահությունը, գյուղատնտեսության այդ հետամնաց ճյուղը—վոր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանում կուլակների կողմից խոշոր ջնջաններ եր կրել—գյուղատնտեսության առաջավոր ճյուղ դարձնելու համար։ Անհրաժեշտ եր կազմակերպել անասնապահական նոր տնտեսություններ, կոլտնտեսական ապրանքային նոր ֆերմաներ, հարկավոր եր կանխել անասունների կորուստը և բարելավել անասունների տոհմը. մեզնից պահանջվում եր ստեղծել կերի կայուն բազա և բարձրացնել անասունների արդյունավետությունը, մեզնից պահանջվում եր զարկ տալ նախիրների լայն վերարտադրությանը և, վոր գլխավորն է, անասնապահության գործը տեղից շարժելու և առաջ մղելու համար պահանջվում էին տեխնիկային տիրապետող մարդիկ, վորովհետև, ինչպես ընկեր ՍՏԱԼԻՆՆ է ասում, «Կադրերն են վորոշում ամեն ինչ»։

Կուսակցական, կոմյերիտական և խորհրդային կազմակերպությունները, ամբողջ կոլտնտեսական մասսան, մեր յերկրի բոլոր աշխատավորները, հետևելով մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ցուցումներին՝ համառ պայքար մղեցին սոցիալիստական անասնապահության, յուրաքանչյուր անասունի պահպանման, ամբողջ սերնդի աճեցման, անասնապահության զարգացման պետական պլանի կատարման և գերակատարման համար և համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, ընդամենը յերկու տարվա ընթացքում, ձեռք բերին զգալի հաջողություններ։

Առաջնորդի դրած խնդիրը՝ անասնապահության վերելքի համար բեկումն ստեղծելու մասին՝ կատարվեց հաջողությամբ։

Միայն 1935 թվականին խոշոր յեղջերավոր անասունների քանակն ամբողջ Միության մեջ ավելացավ 6,9 միլիոն գլխով կամ 17,9%-ով, վոչխարների և այծերի թիվը՝ 8,9 միլիոնով կամ 22%-ով։

Անասնապահության զարգացման պետական պլանն ամբողջ Միության մեջ գերակատարվեց։

1935 թվականին կազմակերպվել է կոլտնտեսային ապրանքային 150 հազար նոր ֆերմա։

Վերջին յերկու տարվա ընթացքում կովազուրկ կոլտնտեսականներին տրված է 3,600 հազար հորթ, յերինջ և կով, ըստ վորում միմիայն կոլտնտեսային ապրանքային ֆերմաներից կոլտնտեսականներն ստացել են 738 հազար հորթ, 4 միլիոն գոճի և 525 հազար գառ։

Հսկայական աշխատանք է կատարվել անասնապահական նոր կադրերի պատրաստման, գոմաշինարարության, կերի բազայի ստեղծման ասպարեզում։

Սոցիալիստական անասնապահության բնագավառում քիչ հաջողություններ չեն ունեցել Խորհրդային Հայաստանի կուսակցական և խորհրդային կազմակերպությունները և կոլտնտեսական մասսաները։

Յերթե 1930 թվականից մինչև 1933 թվականի վերջը կուլակների ագիտացիայի (անասունները վոչնչացնելու համար) և անասնապահության համար տեղերում տարվող անբավարար պայքարի շնորհիվ նկատվում եր անասունների անընդհատ նվազում (մանր յեղջերավոր անասունների քանակը Հայաստանում իջել եր 50 տոկոսով, իսկ խոշոր յեղջերավոր անասունների քանակը՝ 33 տոկոսով), ապա 1934 թվականին անասնապահության բոլոր ճյուղերում վոչ միայն դադարել է անասունների նվազումը, այլև նկատելի յե գլխաքանակի վորոշակի աճում։ Խոշոր յեղջերավոր անասունների քանակը 1934 թվականին աճել է 15,2 տոկոսով, մանր անասունների քանակը՝ յեղջերավոր անասունների քանակը՝ 17,7 տոկոսով, խոզերի քանակը՝ 89 տոկոսով և ձիերի քանակը՝ 3,5 տոկոսով։

Անասունների քանակի համարյա նույնատեսակ աճ—վորոշ փոփոխություններով անասունների տեսակների նկատմամբ—ունենք նաև 1935 թվականին։ Խոշոր յեղջերավոր անասունների քանակն աճել է 12 տոկոսով, վոչխարների քանակը՝ 22 տոկոսով, այծերի քանակը՝ 29,3 տոկոսով, խոզերի քանակը՝ 34,3 տոկոսով և ձիերի քանակը՝ 6,1 տոկոսով։

Անասունների քանակի առանձնապես մեծ աճ 1935 թվականին մենք ունենք հանրայնացված սեկտորում։ Խոշոր յեղջերավոր անասունների քանակը կոլտնտեսություններում աճել է 51,8 տոկոսով, վոչխարների քանակը՝ 35,6 տոկոսով և ձիերի քանակը՝ 38,5 տոկոսով։

Ե՛լ ավելի լավ դրության մեջ է մատղաշների աճեցման և պահպանման գործը։

Մարուկների քանակը 1935 թվականին Հանրապետության մեջ ավելացել է 95,2%-ով, իսկ կոլտնտեսություններում՝ 159,8%-ով։

Հորթերի քանակն ավելացել է 19,4%-ով, իսկ կոլտնտեսություններում՝ 33,6%-ով։

Մեր առաջ դրված եր մի հսկայական խնդիր, մեզնից պահանջվում եր լուրջ պայքար՝ անասնապահությունը, գյուղատնտեսության այդ հետամնաց ճյուղը—վոր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շրջանում կուլակների կողմից խոշոր վնասներ եր կրել—գյուղատնտեսության առաջավոր ճյուղ դարձնելու համար։ Անհրաժեշտ եր կազմակերպել անասնապահական նոր տնտեսություններ, կոլտնտեսական ապրանքային նոր ֆերմաներ, հարկավոր եր կանխել անասունների կորուստը և բարելավել անասունների տոհմը։ Մեզնից պահանջվում եր ստեղծել կերի կայուն բազա և բարձրացնել անասունների արդյունավետությունը, մեզնից պահանջվում եր զարկ տալ նախիրների լայն վերարտադրությանը և, վոր գլխավորն է, անասնապահության գործը տեղից շարժելու և առաջ մղելու համար պահանջվում էին տեխնիկային տիրապետող մարդիկ, վորովհետև, ինչպես ընկեր ՍՏԱԼԻՆՆ է ասում, «Կադրերն են վորոշում ամեն ինչ»։

Կուսակցական, կոմյերիտական և խորհրդային կազմակերպությունները, ամբողջ կոլտնտեսական մասսան, մեր յերկրի բոլոր աշխատավորները, հետևելով մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ցուցումներին՝ համառ պայքար մղեցին սոցիալիստական անասնապահության, յուրաքանչյուր անասունի պահպանման, ամբողջ սերնդի աճեցման, անասնապահության զարգացման պետական պլանի կատարման և գերակատարման համար և համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, ընդամենը յերկու տարվա ընթացքում, ձեռք բերին զգալի հաջողություններ։

Առաջնորդի դրած խնդիրը՝ անասնապահության վերելքի համար բեկումն ստեղծելու մասին՝ կատարվեց հաջողությամբ։

Միայն 1935 թվականին խոշոր յեղջերավոր անասունների քանակն ամբողջ Միությանմեջ ավելացավ 6,9 միլիոն գլխով կամ 17,9%-ով, վոչխարների և այծերի թիվը՝ 8,9 միլիոնով կամ 22%-ով։

Անասնապահության զարգացման պետական պլանն ամբողջ Միությանմեջ գերակատարվեց։

1935 թվականին կազմակերպվել է կոլտնտեսային ապրանքային 150 հազար նոր ֆերմա։

Վերջին յերկու տարվա ընթացքում կովագուրկ կոլտնտեսականներին տրված է 3,600 հազար հորթ, յերինջ և կով, ըստ վորում միմիայն կոլտնտեսային ապրանքային ֆերմաներից կոլտնտեսականներն ստացել են 738 հազար հորթ, 4 միլիոն գոճի և 525 հազար գառ։

Հսկայական աշխատանք է կատարվել անասնապահական նոր կադրերի պատրաստման, գոմաշինարարության, կերի բազայի ստեղծման ասպարեզում։

Սոցիալիստական անասնապահության բնագավառում քիչ հաջողություններ չեն ունեցել Խորհրդային Հայաստանի կուսակցական և խորհրդային կազմակերպությունները և կոլտնտեսական մասսաները։

Յերբ 1930 թվականից մինչև 1933 թվականի վերջը կուլակների ագիտացիայի (անասունները վոչնչացնելու համար) և անասնապահության համար տեղերում տարվող անբավարար պայքարի շնորհիվ նկատվում եր անասունների անընդհատ նվազում (մանր յեղջերավոր անասունների քանակը Հայաստանում իջել եր 50 տոկոսով, իսկ խոշոր յեղջերավոր անասունների քանակը՝ 33 տոկոսով), ապա 1934 թվականին անասնապահության բոլոր ճյուղերում վոչ միայն դադարել է անասունների նվազումը, այլև նկատելի յե գլխաքանակի վորոշակի աճում։ Խոշոր յեղջերավոր անասունների քանակը 1934 թվականին աճել է 15,2 տոկոսով, մանր յեղջերավոր անասունների քանակը՝ 17,7 տոկոսով, խոզերի քանակը՝ 89 տոկոսով և ձիերի քանակը՝ 3,5 տոկոսով։

Անասունների քանակի համարյա նույնատեսակ աճ—վորոշ փոփոխություններով անասունների տեսակների նկատմամբ—ունենք նաև 1935 թվականին։ Խոշոր յեղջերավոր անասունների քանակն աճել է 12 տոկոսով, վոչխարների քանակը՝ 22 տոկոսով, այծերի քանակը՝ 29,3 տոկոսով, խոզերի քանակը՝ 34,3 տոկոսով և ձիերի քանակը՝ 6,1 տոկոսով։

Անասունների քանակի առանձնապես մեծ աճ 1935 թվականին մենք ունենք հանրայնացված սեկտորում։ Խոշոր յեղջերավոր անասունների քանակը կոլտնտեսություններում աճել է 51,8 տոկոսով, վոչխարների քանակը՝ 35,6 տոկոսով և ձիերի քանակը՝ 38,5 տոկոսով։

Ե՛լ ավելի լավ դրության մեջ է մատղաշների աճեցման և պահպանման գործը։

Մատուկների քանակը 1935 թվականին Հանրապետության մեջ ավելացել է 95,2%-ով, իսկ կոլտնտեսություններում՝ 159,8%-ով։

Հորթերի քանակն ավելացել է 19,4%-ով, իսկ կոլտնտեսություններում՝ 33,6%-ով։

Գանների և ուլերի քանակն ավելացել է 31,9%-ով, իսկ կոլտնտեսություններում՝ 41,2%-ով։

Նույնն է նաև խոզերի և մատղաշների այլ տեսակների վերաբերմամբ։

Մի շարք շրջաններ 1935 թվականին անցան առաջավոր շրջանների շարքը և տվին անասունների քանակի մեծ աճ, դրանով իսկ ապացուցելով, որ հնարավոր է անասնապահության ավելի բուռն աճ, քան այն, ինչ գոյություն ունի մեր մի շարք շրջաններում։

Ն.-Բայազետի շրջանը 1935 թվականին տվել է ձիերի աճ 28,2%, խոշոր յեղջերավոր անասունների՝ 22,1%, մանր յեղջերավոր անասունների՝ 36,5%, խոզերի՝ 311,1%։

Մարտունու շրջանը տվել է ձիերի աճ 23,2%, խոշոր յեղջերավոր անասունների՝ 18,4%, մանր յեղջերավոր անասունների՝ 34,5%, խոզերի՝ 318,1%։

Բասարգեչարի շրջանը տվել է ձիերի աճ 26,0%, խոշոր յեղջերավոր անասունների՝ 12,4%, մանր յեղջերավոր անասունների՝ 40,4%, խոզերի՝ 333,3%։

Յեթե անասունների քանակի 1934 և 1935 թվականների աճման տոկոսները վերածենք բացարձակ թվերի, կստանանք յերկու տարվա համար անասունների քանակի հետևյալ ավելացումը.

Խոշոր յեղջերավոր անասուններն ավելացել են 139,500 գլ., մանր յեղջերավոր անասունները՝ 274.500, խոզերը՝ 40,400, ձիերը՝ 4000 և եշերը՝ 12,000։ Ընդամենը 470,400 գլ.։

Աճի տոկոսները և անասունների քանակի մեծանալն ամբողջ միության մեջ և մեզնում առանձնապես աչքի յե ընկնում, յերբ համեմատում ենք կապիտալիստական յերկրների, որոնց թվում նախկին Ռուսաստանի և նախահեղափոխական Հայաստանի անասունների աճի տոկոսների հետ։ Ցարական Ռուսաստանում քառասուն տարվա ընթացքում (1870—1910) խոշոր յեղջերավոր անասունների քանակն ավելացել է 40%-ով, ձիերինը՝ 40%-ով, խոզերինը՝ 31,7%-ով, իսկ վոչխարներինը պակասել է 10,6%-ով։

Կապիտալիստական առաջավոր Ամերիկայում 10 տարվա ընթացքում (1880—1890) անասունների քանակը միջին հաշվով ավելացել է 8%-ով։ 1910 թվականից մինչև 1914 թվականը խոշոր յեղջերավոր անասունների քանակը մնացել է անփոփոխ, իսկ 1933—1934 թ. թ. ընթացքում նվազել է 12%-ով, խոզերինը՝ 33%-ով։

Ֆաշիստական Գերմանիայում վերջին տարում խոշոր յեղջերավոր անասունների քանակը պակասել է 6%-ով, խոզերինը՝ 10%-ով։ Մինչդեռ մեզնում տեղի յե ունենում անասնապահության հախուռն աճ, որը անասունների որոշ տեսակների (վոչխար, այծ) վերաբերմամբ տալիս է մինչև 25%, խոզերի՝ մինչև 40%, խոշոր յեղջերավոր անասունների՝ 12%-ից ավելի, և այլն։

Կարիք չկա և միտք էլ չունի որևե համեմատության դնել անասունների աճը մեզնում դաշնակների տիրապետության ժամանակաշրջանի անասունների աճի հետ, որովհետև դաշնակցական բռնակալները գյուղատնտեսությամբ և մասնավորապես անասնապահությամբ չեն զբաղվել։ Յերկրագործության դաշնակցական մինիստրության արխիվներում մեզ հաջողվել է գտնել անասնապահությանը վերաբերող միայն մեկ դոկումենտ—պարլամենտական հանձնաժողովի որոշումը, որով թյուրքական գյուղերին արգելվում է ոգտվել յայլաղների արոտներից։

Դա յե յեղել դաշնակների ամբողջ «հոգսը» անասնապահության մասին. նրանց որով գյուղատնտեսությունը վերջնական աղքատության եր հասցրած, գյուղացիների ճնշող մեծամասնությունը վոչ միայն կով, այլև վոչխար էլ չուներ, իսկ ունեցողն էլ ցարական չինովնիկների և դաշնակցական մաուզերիստների լծի տակ զրկվել եր իր վերջին անասունից։

Յեվ այդ պատճառով բոլորովին զարմանալի չե, որ Խորհրդային Հայաստանում վերջին յերկու տարվա ընթացքում այնքան անասուն է ավելացել, որքան դաշնակների ժամանակ առհասարակ անգասուն կար։

Անասնապահության աճի թվերը Հայաստանում խոսում են անասնապահության արագ վերելքի համար մղվող վճռական պայքարի, կոլտնտեսությունների կազմակերպչական, տնտեսական-քաղաքական ամրապնդման, կոլտնտեսականների յեկամտի բացառիկ աճման, կոլտնտեսային գյուղի կուլտուրայի և, վերջապես, այն բարգավաճման մասին, որի ճանապարհին ամուր կերպով կանգնել են կոլտնտեսությունները։

Կատարելապես պարզ է, որ այդ ամենը հնարավոր է դարձել շնորհիվ կոմունիստական կուսակցության, Խորհրդային իշխանության, շնորհիվ կոլտնտեսական կարգերի, շնորհիվ մեր մեծ առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԻ, որը բոլոր արգելքները հաղթահարելով՝ մեր

յերկիրը տանում է դեպի նոր հաղթանակներ, դեպի նոր ամրոցների նվաճում։

Անասնապահության աճի մեջ բացառիկ դեր են խաղացել գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրությունը և անասնապահության զարգացման պետական պլանը։

Յեթե մինչև Ստալինյան կանոնադրության հանդես գալը, այսինքն՝ 1934 թվականը, կոլտնտեսականների յուրաքանչյուր 100 տնտեսությանն ընկնում եր 18 ձի, 220 խոշոր յեղջերավոր անասուն, 394,7 մանր անասուն և 33,2 խոզ, ապա 1935 թվականին, յերբ կոլտնտեսությունները աշխատում եյին համաձայն Ստալինյան կանոնադրության, կոլտնտեսականների յուրաքանչյուր 100 տնտեսությանն ընկնում եր 22,8 ձի, 260,3 խոշոր յեղջերավոր անասուն, 458,7 մանր անասուն և 38,5 խոզ։

Ինչպես հաշվով կոլտնտեսական յուրաքանչյուր տնտեսության այժմ ընկնում է 8 անասուն, չհաշված թռչուններն ու փեթակները, մի հանգամանք, վոր 1934 թվի համեմատությամբ նույնպես մեծ առաջադիմություն է։

Տանջակ և հարյուրավոր կոլտնտեսական ընտանիքներ արդեն ունեն մի քանի տասնյակ թռչուններ։ Հազիվ թե Հայաստանում գտնվի կոլտնտեսականի տնտեսություն, վոր թռչուններ չունենա։

Հայաստանում գտնվող փեթակների համարյա կեսը (30,000) պատկանում է կոլտնտեսականներին։ Ավելի և ավելի ծավալվում է կոլտնտեսականների ձգտումը՝ վորպես չափազանց արդյունավետ գործ՝ փեթակներ ձեռք բերելու։

Մեղվաբուծությունը կոլտնտեսականների մոտ զարգանալու հետ միաժամանակ զարգանում է նաև կոլտնտեսություններում։

Յեթե 1934 թվականի սկզբում Հայաստանում կար 63 մեղվաբուծական ֆերմա՝ 6900 փեթակով, ապա 1935 թվականի վերջում ֆերմաների թիվը հասնում է 225-ի, իսկ փեթակների թիվը՝ 18,000-ի։

Հայաստանում նկատելի հաջողություններ են ձեռք բերվել անասնապահության զարգացման պետական առաջին պլանի կատարման և հիմնական ցուցանիշների գերակատարման մեջ։

Անասնապահության զարգացման քանակային պլանը ֆերմաներում կատարված է (տոկոսներով)։

Ձիեր 162,4%
Խոշոր յեղջերավոր անասուններ 118,9 »

Մանր յեղջերավոր անասուններ 125,3%
Խոզեր . . . . . 92 »
Եշեր և ջորիներ . . . . . 116 »

Անհրաժեշտ է հիշատակել, վոր խոզերի քանակը, համեմատած նախապատերազմյան շրջանի հետ, ավելացել է 3 անգամ։

Անասնապահության զարգացման պլանը մատաղաշի նկատմամբ բոլոր սեկտորներում կատարված և հետևյալ կերպ.

Հորթեր և գոմշաձագեր 107,8%
Գառներ և ուլեր . . . . . 113,5 »
Գոճիներ . . . . . 117,4 »
Մտրուկներ . . . . . 80,1 »

Թեև մտրուկների պլանը մեզնում լրիվ չի կատարված, սակայն բավական է նշել մտրուկների աճի տոկոսը Հանրապետության մեջ՝ համեմատած 1934 թվականի հետ (195,2%), և կոլտնտեսություններում (259,8%), վորպեսզի պարզորեն պատկերացնենք այն հսկայական աշխատանքը, վոր կատարվել է 1935 թվականին մտրուկների պահպանման և աճեցման գործում։ Մտրուկների ընդհանուր քանակը հանրապետության մեջ միայն մի տարում ավելի քան կրկնապատկվել է։ Սակայն փաստ է, վոր մտրուկների աճեցման և խոզերի գլխաքանակի պլանը, չնայած բոլոր հնարավորություններին, մենք չկարողացանք կատարել։

Կովազրկության վերացման պլանը, վորի մասին ընկեր Ստալինը դեռևս 1933 թվականի սկզբում՝ հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարում ասել է—«մենք՝ բոլշեվիկներս, կաշխատենք, վորպեսզի բոլոր կոլտնտեսականներն ունենան մի-մի կով»,—Հայաստանի կուսակցական կազմակերպությունները կատարել են պատվով։

Ավելի քան 20,000 գյուղացիներ, վորոնք առաջ յերազում եյին կովի մասին, 1935 թվականին խորհրդային իշխանության ողնությամբ, ընկեր Ստալինի շնորհիվ, ստացան կովեր։

Կոլտնտեսական տնտեսությունների մի զգալի քանակություն, ազնիվ աշխատանքի շնորհիվ, արդեն ունի վոչ թե մեկ, այլ, ինչպես կանոնադրությունն է պահանջում, Հայաստանի շրջանների մեծամասնության համար՝ մի քանի կով։

Վերջին յերկու տարվա մեջ կոլտնտեսականներն ստացել են 24,389 հորթ, վորից 20,252-ն ստացված է 1935 թվականին՝ պլանի 20,000 հորթի դիմաց։

Կուսակցության և կառավարության պահանջը՝ յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ ապրանքային ֆերմա ստեղծելու և ապրանքային ֆերմաները կազմակերպորեն ու անտեսապես ամրացնելու մասին՝ հաջողությամբ կատարված է. համարյա բոլոր կոլտնտեսություններն էլ ապրանքային ֆերմաներ ունեն։ Հայաստանի 1060 կոլտնտեսությունից 980-ը ֆերմաներ ունեն, մի քանիսն ունեն 3—4 ֆերմա։ Ֆերմաների ընդհանուր քանակությունը հանրապետության մեջ հասնում է 1700-ի, որոնցից մոտ 700-ը կազմակերպվել է 1935 թվականին։

Կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում կան ավելի քան 400 հազար գլուխ ամեն տեսակի անասուն, այսինքն՝ հանրապետության բոլոր անասունների մի քառորդը։ Ապրանքային ֆերմաները դարձել են նախիրների վերարտադրության կարևորագույն աղբյուր։ Տանյակ և հարյուրավոր ապրանքային ֆերմաներ վերջին յերկու տարվա մեջ անասունների մատղաշի վոչ մի կորուստ չեն ունեցել։ Ապրանքային ֆերմաները կոլտնտեսականների ունևոր կյանքի աղբյուրն են դարձել։ Հայաստանում քիչ չեն այնպիսի կոլտնտեսություններ, վորոնց՝ անասնապահությունից ստացած՝ յեկամուտը կազմում է կոլտնտեսության ամբողջ յեկամտի գերակշռող մասը։ Հաճախ կտեսնեք կոլտնտեսականներ, վորոնք տարվա մեջ ստացել են իրենց աշխորների դիմաց 10—12 փութ պանիր, 4—6 փութ յուղ, մեղր, բուրդ և այլն։

Ապրանքային ֆերմաները հանդիսացել են տոհմային անասնապահության կազմակերպողներ։ Վերջին յերկու տարվա մեջ կազմակերպված է խոշոր և մանր յեղջերավոր անասունների և խոզերի 50 տոհմային ֆերմա, վորոնց մեջ անասունների քանակը հասնում է ավելի քան 20,000-ի։ Տոհմային ֆերմաներում կան կովեր, վորոնք տալիս են տարեկան մինչև 5000 լիտր կաթ, հորթերի քաշի օրական ավելացումը հասնում է մինչև 1500 գրամի, վոչխարների բրդավորությունը՝ 5 կիլոյի, իսկ կենդանի քաշը՝ 110—120 կիլոյի։ Տոհմային ֆերմաները խորհնտեսություններին հավասար դառնում են ցեղական մատղաշի մատակարարներ. նրանք տալիս են շվից և սիմենտալ ցեղի անասուններ վոչ միայն Հայաստանի, այլև հարևան հանրապետությունների համար։ Աղբրեջանի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի ապրանքային ֆերմաները սիրով ոգտվում են մեր տոհմային ֆերմաների ցեղական մատղաշից։

Ապրանքային ֆերմաները վճռական դեր են խաղացել անասնապահական տնտեսության մեջ կուլտուրա արմատացնելու գործում։ Նրանք ծավալել են հսկայական շինարարություն։ 1934—1935 թվականների ընթացքում կառուցել են ստանդարտ մոտ 1000 նոր գոմ։ Մոտավորապես բոլոր անասունների կեսը ֆերմաներում տեղավորված են նորակառույց՝ լուսավոր, սպիտակացրած և լավ կահավորված, տեղ-տեղ էլ ասֆալտով ծածկված գոմերում։ Անագին շինարարություն է կատարվում յայլաղներում, վորտեղ, բացի անասնագոմերից, հորթանոցներից, մեկուսարաններից և ծածկերից, շինված են նաև բնակարաններ, ընթերցարաններ, հյուրերի համար շենքեր և հատուկ շինություններ՝ կթի վերամշակման համար. խոշոր աշխատանք է կատարված դեպի յայլաղները ճանապարհներ տանելու, նոր ջրամբարներ շինելու և արոտատեղերը բարեկարգելու համար։

Կուլտաշխատավորը յայլաղներում հիմնական դեմքերից մեկն է։ Անդրադիտության վերացման կետեր, քաղխմբակներ, շարժական կինոներ, թերթ, գրականություն, ռադիո, պատեֆոններ,—ահա կուլտուրական այն նորությունները, վոր ունենք ներկայումս մեր յայլաղներում։

Փոխվել է նաև գյուղերի տեսքն անասնապահական շրջաններում։ Նախկին ծառազուրկ գյուղերը—դաշնակների գիշատիչ տիրապետության ժառանգությունը—կերպարանափոխվել են։ Անասնապահական լեռնային շրջանների կոլտնտեսություններում ստեղծվել են կուլտուրայի և հանգստի վայրեր, տնկված են տասնյակ հազարավոր պտղատու ծառեր։ Այժմ այլևս հազվագյուտ յերևույթ չեն էլեկտրիֆիկացիայի յենթարկված գոմերը՝ Լենինականի, Ստեփանավանի, Ալլահվերդու, Սիսիանի, Գորիսի և հանրապետության այլ շրջանների կոլտնտեսական ֆերմաներում։

Առաջ են յեկել ռացիոնալիստական անասնապահության բազմաթիվ հիանալի վարպետներ, իսկական ստախանովականներ, վորոնք ցուցաբերել են առաջնորդի ցուցումները կատարելու համար մղվող բոլշևիկյան պայքարի որինակներ։ Առաջ են յեկել նոր մարդիկ, վորոնք հետ են թողել անասնապահության մեջ մինչև այժմ գոյություն ունեցող կթի նորմաները, մարդիկ, վորոնք իրենց որինակով վարակել են անասնապահական մասսաները և նրանց տարել իրենց հետևից վորպես իսկական առաջնորդներ։

Անասնապահության ասպարիզում նշված հաջողությունները ձեռք բերելու գործում մեծ դեր է խաղացել ԱԽՍՖՀ-ի և Հյուսիսային Կովկասի մարզի և, առանձնապես, Խորհրդային Հայաստանի և Հյուսիսային Օսեթիայի ինքնավար մարզի միջև 1935 թ. կնքված սոցմրցման պայմանագիրը՝ անասնապահության զարգացման մասին, վորի վոգեշնչողն ընկ. Լավրենտիյ Բերիայի հմուտ ղեկավարությունն եր։ Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի բազմազգի ժողովուրդների անխախտ բարեկամության դրոշի տակ եր անցնում այդ սոցմրցումը։

Համամիութենական Ժյուրին, վորի մեջ մտնում էին Միության Հողժողկոմատը, «ՊՐԱՎԴԱ» և «ՍՈՑԻԱԼԻՍՏԻՉԵՍԿՈՅԵ ԶԵՄԼԵԴԵԼՅԵ» թերթերի խմբագրությունները, ստուգելով ԱԽՍՖՀ-ի և Հյուսիսային Կովկասի մրցման առաջին տարվա (պայմանագիրը կնքված է յերկու տարվա համար) արդյունքները՝ շեշտեց, վոր

«Մրցման պրոցեսում ստեղծվել են հարյուրավոր անասնապահական առաջավոր ապրանքային ֆերմաներ, կոփվել են սոցիալիստական անասնապահության հազարավոր առաջավորներ։ Մրցությանը մասնակցել են բոլոր շրջանները, հազարավոր կոլտնտեսություններ, տասնյակ հազարավոր կոլտնտեսականներ և կոլտնտեսուհիներ՝ յերկու մարզերից»։

Ժյուրին նշեց մրցող կողմերի զգալի նվաճումն անասնապահության զարգացման պետական պլանի կատարման ասպարիզում մի շարք ցուցանիշների գծով պլանի գերակատարումը, մանավանդ Անդրկովկասում։ Այնուհետև Ժյուրին արձանագրեց, վոր անասնապահության զարգացման հանրագումարային տվյալներով 1935 թ. Անդրկովկասի սոցիալիստական ճեղերատիվ հանրապետությունն առաջին տեղն է գրավում։

Անդրկովկասի բոլշեվիկները պատվով կատարեցին իրենց մարտական ղեկավար ընկ. Լավրենտիյ Բերիայի այն ցուցումները, վոր յերկու յերկրների միջև ծավալվող սոցիալիստական մրցության մեջ Անդրկովկասի հանրապետությունները պետք է լինեն հաղթող։

Մրցումն առաջ բերեց նոր մարդիկ՝ անասնապահության ստախանովականներ, վորոնք ամբարեցին շատ փորձառություն, բազմաթիվ նոր դրական մոմենտներ, վոր առաջ անհայտ էին անասնապահության մեջ։

Հարկավոր եր ընդհանրացնել անասնապահության համար մղած պայքարի՝ տարիների հսկայական փորձը, տալ անասնապահության զարգացման համար մղած պայքարի հանրագումարը։ Հարկավոր եր առաջավոր անասնապահների պայքարի որինակով նշել աշխատանքի հետագա ուղին։

Հարկավոր եր ամբողջ յերկրին ցույց տալ անասնապահության առաջավորներին և պարգևատրել նրանցից լավագույններին։ Յեվ ահա այդ նպատակով կուսակցությունը և կառավարությունը կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի նախաձեռնությամբ փետրվար ամսին Մոսկվայում հրավիրեցին անասնապահության առաջավորների խորհրդակցություն։

Առաջավորներին, ինչպես հարկավոր եր սպասել, տրվում էին բարձր պահանջներ, առանձին ուշադրություն եր դարձվում աշխատանքի վորակին, այդ պատճառով էլ մեղնում մինչև Մոսկվայի խորհրդակցության հրավիրվելն անասնապահության առաջավորները, ինչպես՝ Սրապ Գրիգորյանը—Թալինի շրջանի Ադիամանի կոլտնտեսության վոչխարաբուծության ապրանքային ֆերմայի վարիչը, Սիսակ Գրիգորյանը—Մարտունու շրջանի Զոլաքարի վոչխարաբուծական ֆերմայի չոբանը, Ռայա Կազակովան—Ախտայի շրջանի Սևանի կաթնապրանքային ֆերմայի կթվոր հորթապահը, Այդին Մահմեդովը—Բասարգեչարի շրջանի Կարակոյունի ֆերմայի հովիվը, Միխակ Զորանյանը—Ալլահվերդու շրջանի Ուզունլարի կոլտնտեսության նախագահը, Նարինգյուլ Հարությունյանը—Սիսիանի կաթնապրանքային ֆերմայի կթվորը, Անաստասիա Դմիտրովան—Ստեփանավանի շրջանի Կալինինոյի կաթնապրանքային ֆերմայի կթվորը և ուրիշները, վորոնք իր ժամանակին Հայաստանի և Անդրկովկասյան կառավարությունների կողմից պարգևատրվել են պատվո գրերով և այլ պարգևներով, գլխավորապես իրենց հանձնված անասուններին և մանավանդ մատղաշն որինակելի կերպով պահպանելու համար, չէին կարող խորհրդակցության պատգամավորներ լինել, վորովհետև պատգամավորներից, բացի քանակային ցուցանիշներից, մատղաշների լրիվ պահպանումից, կթին ու կերակրումը ժամանակին կազմակերպելուց, առաջին հերթին պահանջում էին վորակային ցուցանիշներ։

Առաջավորների համամիութենական խորհրդակցությանը մասնակցելու համար այդ ցուցանիշները լրիվ կատարելուց բացի, պահանջվում եր, վորպեսզի կոլտնտեսային ֆերմայում և բրիգադում, խորհտնտեսության ֆերմայում ու բրիգադում ստացված լինի 3000 լիտր կաթ յուրաքանչյուր կովից, միջին հաշվով 3,2 կիլո բուրդ՝ մի

կոպտաբուրդ վոչխարից և 120 գառ՝ 100 մաքուց, միջին հաշվով 90 մարուկ՝ 100 գամբիկից, մեկ մերունից 50 փութ կենդանի քաշ ունեցող գոճիների սերունդ կամ, միջին հաշվով, 22 գոճի մեկ տարում, մեկ փեթակից՝ 90 կգ մեղր և մեկ հավից՝ 145 ձու։

Խորհրդակցությանը համապատասխան ցուցանիշներով կարող էին մասնակցել կոլտնտեսությունների նախագահները, ֆերմաների վարիչները, բրիգադիրները, կթվորները, հովիվները, տավարածները, անասնաբուժները, զոոտեխնիկները և անասնապահական խորհրդատեսությունների դիրեկտորներն ու քաղբաժնի պետերը։

Ընդհանուր խորհրդակցությանը մասնակցողներից արվող պահանջները շատ ավելի բարձր էին՝ համեմատած այն միջին վորակական ցուցանիշների հետ, վոր ունի մեր հանրապետության անասնապահությունը, բայց և այնպես գտնվեցին մարդիկ, վորոնք իրենց ցուցանիշներով միանգամայն համապատասխանում էին առաջադրած պահանջներին։

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԸ

Հանրապետության անասնապահության ֆրոնտի առաջավոր մարտիկներից հավաքվեցին 16 մարդ։

Իսկ ովքե՞ր են այդ առաջավորները, այդ 16 յերջանիկները, վորոնք ամենքից լավ էին կատարել առաջնորդի ցուցումները, ամենքից լավ էին պայքարել անասնաբուծության համար, նրա վորակի համար, անասունների մթերատվության բարձրացման՝ կաթի, բրդի, մսի, ամբակազմ ձիու համար, վորոնք իրենց աշխատանքով արժանացել էին անասնապահության առաջավորների համամիութենական խորհրդակցության պատգամավոր լինելու պատվին, արժանացել առաջնորդին տեսնելու պատվին և պարգևատրվել Միության բարձրագույն շքանշաններով։ Թող նրանց ճանաչեն ամբողջ յերկիրը, մեր բոլոր անասնապահները, թող նրանց որինակով վարակվեն մեր բոլոր աշխատավորները—կոլտնտեսականներն ու խորհտնտեսությունների բանվորները։

ԱՀԱ ՆՐԱՆՔ



4950-91

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Ցանբիի անասնապահական խորհտնտեսության առաջին ֆերմայի առաջին բրիգադի բրիգադիրն է։ Ծնվել է չքավոր ընտանիքում։ Գրիգորը փոքր հասակում զրկվել է ծնողներից և մինչև 1927 թ. բատրակություն ել անում Մարտունու շրջանում գտնվող կուլակների մոտ։ 1927 թվականին մտել է աշխատանքի՝ Ցանբիի խորհտնտեսությունը, սկզբում աշխատել է վորպես կթվոր, իսկ հետո՝ վորպես բրիգադիր։

Գրիգորը մինչև 1931 թ. անգրագետ ել։ 1932 թվականին նա լիովին վերացրեց իր անգրագիտությունը, սովորելով ֆերմայի վարիչների և բրիգադիրների համար կազմակերպված հատուկ կուրսերում։ 1926 թ. նա մտավ ՀԼԿՅԵՄ շարքերը, իսկ Համկ(բ)կ անդամ է 1932 թվականից։ Գրիգորը շատ անգամ է պարգևատրվել թե դրամով և թե իրերով։ 1935 թ. հանրապետական պրոֆ. խորհուրդը Գրիգորին պարգևատրեց պատվո գրով, իսկ խորհտնտեսությունը

ՀԱՅԿՈՊԵՏԻԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм.ССР

նրան պարգևեց յերկու հորթ։ Գրիգորն այդ հորթերը նվիրեց իր բրիգադի անդամներին։

Նա իր բրիգադում ուներ 75 կով և յուրաքանչյուր կովից 1935 թվականի ընթացքում ստացավ միջին հաշվով 3012 լիտր կաթ։ Լավագույն կովերի կիթը հասցրեց մինչև 4603 լիտրի։ Այդ 75 կովից խտացրած ծին կազմակերպելու ճանապարհով ստացավ 90 հորթ։ 15 կով տարվա ընթացքում ծնեցին 2 անգամ։ Գրիգորի բրիգադում վոչ մի անասունի անկում չի յեղել։

Խորհնտեսության մեջ կատարած իր աշխատանքի ընթացքում Գրիգորը պահել և մեծացրել է 490 հորթ, առանց վորևե անկման։ Նա ստացել է հորթերի քաշի բավականաչափ բարձր աճ։ Նրա «Գոդիաթ» հորթը» 10 ամսական հասակում կշռում եր 328 կգ։

Նա հաջողությամբ կազմակերպեց յեռանվագ կիթ, որը-բոլոր արածացում՝ արոտատեղը բաժանելով կտորների և սահմանելով արածացման հերթականություն։ Գրիգորը լավացրեց կթանների կերակրումը և կերերի ռացիոնալ ոգտագործումը, բրիգադի աշխատողներին ամրացրեց բրիգադին մի քանի տարով։ Նրանց արտադրական ստաժը միջին հաշվով $3^1/_2$ տարի յե, բայց Գրիգորի բրիգադում կան առանձին կթվորներ, վորոնք աշխատում են 7 տարուց ավելի։

1934 թ. Գրիգորը վաստակել է 1500 ռուբլի, իսկ 1935 թ.՝ 3700 ռուբլի։ Նա ձեռք է բերել 2 մահճակալ՝ ամեն մեկը 400 ռուբլի արժողությամբ, տնային իրեր, մի կով։ Ապրում է լուսավոր սենյակում, վորտեղ հարմարեցված ռադիո-ընդունիչն ամեն որ սոցիալիստական անասնապահության այս աննկուն մարտիկին հաղորդում է կուլտուրական կյանքի նորությունները։

ՍԱՐԳԻՍՅԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

Գորիսի շրջանի Բռուն գյուղի կոլտնտեսության նախագահ։ Աքավոր գյուղացու ընտանիքից։ 10 տարի բատրակ է յեղել կուլակ Ադամյանի և Յոլյանի մոտ՝ Գորիսում։

Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ որերից մտավ կոմյերիտական կազմակերպության, իսկ հետո՝ կուսակցության շարքերը։ Յուր 15 տարվա աշխատանքի ընթացքում նա ղեկավարել է կոմսոմոլի կազմակերպությունը, գյուղխորհուրդը և կոլտնտեսությունը։ Արմենակը հանդիսանում է կոլտնտեսության կազմակերպողը և նրա առաջին նախագահը։

1935 թ. Արմենակն առաջին անգամ Խ. Հայաստանում կազմակերպեց վոչխարների խտացած գառնածնություն ՎԱՖ-ում և կարողացավ յուրաքանչյուր 100 մաքուց ստանալ 216 գառ։

Այդ հետևանքին նա հասավ արոտների ճիշտ ոգտագործման, արածացման կտորային սիստեմի կիրառման միջոցով՝ վոչխար-

ների առատ կերն ապահովելով թե մսուրային և թե արոտային շրջաններում։

Խոտացրած գառնածնության կազմակերպման իր փորձն Արմենակը փոխադրեց հարևան Խորհրդային Ադրբեջանի, մասնավորապես՝ Կարիագինի և Կուբաթլուի շրջանների կոլտնտեսությունները, որոնք արոտային շրջանում բարձրանում են Գորիսի լեռնային յայլաները։ Նա կազմակերպել է տավարաբուծական, գոմշաբուծական և ձիաբուծական խոշորագույն ֆերմաներ։ Նրա ֆերմաներում կա 230 կով, 70 գոմեշ, 70 գամբիկ և մի քանի հարյուր գլուխ մատղաշ անասուն։ Արմենակի ֆերմաներում անասնի անկման դեպքեր չեն յեղել։

Հայաստանի անասնապահության ասպարիզում կատարած փայլուն աշխատանքների համար շատ անգամ է պարգևատրվել Արմենակ Սարգիսյանը։



ՄՈՒՍՏԱՖԱՅԵՎ ԱՅՎԱԶ

Ամասիայի շրջանի Գյոլլի գյուղի կոլտնտեսության հորթապահ։ Նրա տարիքը ճիշտ այնքան է, որքան խորհրդային իշխանության տարիքը Հայաստանում։ Նա արդեն կոմյերիտմիության անդամ է։ Այվազն առաջիններից մեկն եր, որ իր չքավոր մոր հետ մտավ կոլտնտեսություն և դարձավ նրա հիմնադիրը։ Արդեն 3 տարի յե, ինչ Այվազն արածացնում է կոլտնտեսության հորթերը։ Նա աճեցրել ու կոլտնտեսությանն է հանձնել 230 լավ սնված ու առողջ հորթ՝ առանց վորև է կորստի։

Այվազին ոգնում են նրա մայրը և իր բացառիկ սերը հորթերի վերաբերմամբ, ուշադիր խնամքը և ճիշտ արածացումը։

Այվազն իրենց կոլտնտեսության մեջ հայտնի յե վոչ միայն իբրև առաջավոր անասնապահ, այլև իբրև ուսման գործի խանդավառ և լավագույն կոմյերիտական։



ԴԱՆԻԼՈՎԱ ԱՆՆԱ

Ղարաղալայի տոհմային անասնաբուծական խորհրդատեսության կթվոր։ 8 տարի է, ինչ նա աշխատում է խորհրդատեսությունում այդ պաշտոնով։ Վոչ մի անգամ անասունների անկում չի տվել։ Աննան 1935 թ. իրեն ամրացված 17 կովից ստացել է միջին հաշվով յուրաքանչյուրից 3320 լիտր կաթ։ Աննայի կովերն ու հորթերն աչքի յեն ընկնում խորհրդատեսության մյուս կովերի ու հորթերի շարքում։ Խորհրդատեսության մեջ եվ նա վերացրեց իր անգրագիտությունը և ավարտեց անասնաբուծական կուրսերը։ Ջեռք է բերել և պահում է հավեր, հորթեր, մերուններ։ Ունի մաքուր, կահավորված բնակարան։ Աննա Դանիլովան լավ աշխատանքի համար հենց միայն 1935 թվականին պարգևատրված է յերեք անգամ։

ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ

Յերկար ժամանակ յեղել է բատրակ և գյուղական տավարած։ Կոլտնտեսություն մտնելուց հետո նրան նշանակեցին ձիաբուծական ֆերմայի վարիչ։ Ֆերման սկզբում ուներ 12 ձի։ Գրիգորը կարողացավ ձիերի քանակը հասցնել մինչև 54-ի։ Վոչ մի անգամ ձիերի անկում չի տվել։ Մարուկներին նա պահպանեց 100-%-ով։ Այդպիսի արդյունքների հասավ գիշերային արոտի կազմակերպման, զամբիկներին ժամանակին առանձնացնելու, քուռակների տակ ծղոտե ցամքար փռելու և զամբիկներին առանձին կացոցներում պահելու շնորհիվ։ Իր աշխատանքի համար Գրիգորը շատ անգամ է պարգևատրվել։ Ստացած աշխորների հաշվին նա 1935 թ. կառուցեց 4 սենյակից բաղկացած յերկհարկանի մի տուն։



ԲԱԴԱԼՅԱՆ ՍՄԲԱՏ

Գորիսի շրջանի Հին Գորիս գյուղի կոլտնտեսության խառն ֆերմայի բրիգադիր։ Նախկին չքավոր ընտանիքից։ Վաղ հասակից Սմբատը զրկվեց հորից։ Մայրն աշխատում եր կուլակների համար և պահում իր ընտանիքը։ Ընտանիքի ծանր նյութական դրությունը Սմբատին ստիպեց 8 տարեկան հասակից իր մոր նման իբրև բատրակ աշխատել կուլակների մոտ։ Համարյա իր ամբողջ կյանքը նա անց է կացրել բատրակության մեջ։ Միայն կոլտնտեսությունը կազմակերպելուց հետո Սմբատն ազատվեց ոտարի համար աշխատելու դառը վիճակից և սկսեց աշխատել կոլտնտեսության մեջ իրեն համար։ Սմբատն առաջիններից մեկն է, վոր դուրս յեկավ կուլակների, բանդիտների դեմ, վորոնք ուզում եյին կոլտնտեսությունը քայքայել։ Կուլակները Սմբատին ատեցին և առաջին գնդակն արձակեցին նրա վրա։ Սակայն նա կենդանի մնաց։ Կուլակության դեմ մղած պայքարից իբրև հիշատակ մնաց նրա մարմնի վրայի կլոր սպին։ Առաջինը Սմբատն է, վոր իրենց կոլտնտեսության մեջ մտցրեց

խոտացրած գառնածնություն։ 39 մաքուց 1935 թ. ստացավ 84 գառ։ Նրա խառն բրիգադում յերբեք անկման դեպք չի յեղել։ Նրա կովերը տալիս եյին ավելի շատ կաթ, քան շրջանի ուրիշ կոլտնտեսությունների կովերը։

Իր բացառիկ լավ աշխատանքի համար նա շատ անգամ է պարգևատրվել։ Սմբատն այս բոլորի հետ միաժամանակ ակտիվ կոմյերիտական է։

———



ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

Կիրովականի շրջանի Համգաշիման գյուղի կոլտնտեսության ձիաբուծական ապրանքային ֆերմայի վարիչ, չքավոր ընտանիքից։ Մի քանի տարի յեղել է բատրակ-տավարած։ Կարմիր բանակում ծառայությունը վերջացնելուց հետո Գրիգորն զբաղվում եր յերկրագործությամբ և անասնապահությամբ. ուներ խոշոր տնտեսություն։ Սակայն կոլտնտեսական շարժման առաջին իսկ որից Գրիգորը մտավ կոլտնտեսություն և աշխատեց սկզբում վորպես բրիգադիր, իսկ հետո վորպես ձիաբուծական ֆերմայի վարիչ։ Հինգ տարի անընդհատ նա տանում է այդ պաշտոնը։ Դրա համար նա ավարտեց հատուկ յեռամսյա ձիաբուծական կուրսերը։ Նա պահպանեց ֆերմայում ծնված քուռակների 95%-ը։ Նրա ֆերմայի բոլոր քուռակները տոհմական են, վորովհետև Գրիգորն առաջինն սկսեց իր ֆերմայում ոգտագործել պետ. ձիաբուծարանի տոհմային հովտակներին։ Գրիգորն իր անմիջական աշխատանքից բացի, տանում է խոշոր հասարակական աշխատանք։ Ընդունված է համակրողների շարքերը։

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԼԵՎՈՆ

Ալլահվերդու շրջանի Ուզունլար գյուղի կոլտնտեսության ԿԱՃ-ի բրիգադիր։ Չքավոր ընտանիքից։ Յերկար ժամանակ բատրակ եր կալվածատեր Մոսինյանի մոտ։ Ութ տարի յե, ինչ Լևոնը կոլտնտեսության անդամ է և միշտ եվ աշխատել է անասնապահության գծով, սկզբում վորպես կթվոր, իսկ հետո՝ բրիգադիր-կթվոր։ Նա իրեն ամրացված կովերի ամեն մի գլխից ստացել է 3030 լիտր կաթ այն ժամանակ, յերբ ամբողջ բրիգադի կովերի յուրաքանչյուր գլխից 1600 լիտր եյին ստանում։

Նրա տեղական ամենալավ կովը՝ Զհուրը տվել է 3200 լիտր կաթ (կենդանի քաշը՝ 300 կգ)։ Լևոնի բրիգադում 40 կով տարվա մեջ ծնեցին 2 անգամ (1935 թ. հունվարին և դեկտեմբերին)։ Լոքո անունով տեղական հորթը 10 ամսական հասակում կշռում եր 362 կգ։ Այդ կազմում է քաշի որական 1 կգ-ից ավելի աճ։

Լևոնի բրիգադում չկան անկումներ, չկան ստերջ կովեր։ Նա այդ ցուցանիշները ձեռք է բերել աշխատանքը ճիշտ կազմակերպելու, լավ կերակրման ու խնամքի շնորհիվ։ Լևոնն իր լավ աշխատանքի համար շատ անգամ է պարգևատրվել։

ՄՈՒՂՆԵՑՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ

Ցանբիի խորհանտեսության դիրեկտոր։ Արտաշեսի ծնողները չքավոր գյուղացիներ էին։ Նրա հայրը՝ Ավետիսը 18 տարի աշխատել է կուլակների մոտ։ Հետո թյուրքերի հարձակման տարին սուլթանի զորքերի կողմից գերի յե վերցվում ու սպանվում։ Ծնողների աղքատությունն ստիպում է Արտաշեսին 12 տարեկան հասակից կատարել վարձու աշխատանք Անդրկովկասի մի շարք քաղաքներում՝ Ղարսում, Թբիլիսիում և Բաղվում՝ ընտանիքին ողնելու համար։ Քաղաքացիական կռվի առաջին իսկ օրերից Արտաշեսը խիզախորեն, առանց վորևե տատանման, դուրս յելավ պաշտպանելու խորհրդային իշխանությունը և դաշնակների դեմ մղած ակտիվ պայքարի համար բանտարկվեց նրանց կողմից։

Խորհրդային իշխանությունը հաստատվելուց հետո Արտաշեսը, վորպես կուսակցության անդամ, Համամլուի շրջանում ղեկավարում էր կուսակցական կազմակերպությունը և ամրացնում խորհրդային իշխանությունը։

Անտանտպահության ասպարիզում Արտաշեսը մեզ մոտ աշխատում է ահա ութերորդ տարին՝ ամբողջ ժամանակ խորհանտեսություններում։ Ցանբիի անասնաբուծական խորհանտեսությունը, վորտեղ ներկայումս Արտաշեսն աշխատում է, ունի հիանալի ցուցանիշներ։

Մեկ կովից 1934 թ. ստացված 11 ցենտներ կաթի դիմաց, 1935 թ. կիթն այդ կոլտնտեսության մեջ հասցրել են մինչև 17,1 ցենտների։ Առանձին բրիգադներ (2 բրիգադ) մեկ կովի կիթը 1935 թվականին հասցրել են 3000 լիտրի։ Հորթերի անկումը բոլորովին վերացրել են։

Նրանք 1934 թվականին ծածկեցին խորհանտեսության 450 հազար ռուբլի վնասը և 1935 թ. տվին 251 հազար ռ. ոգուտ։ Նիստ կերպով փոխվել է բանվորների կուլտուր-կենցաղային դրությունը։

Բոլոր բանվորներն ունեն մեկական կով, ձեռք են բերել մահճակալ, պատեֆոն, սպիտակեղեն և այլն։

Արտաշեսի ղեկավարությամբ խորհանտեսությունում հիմնված է ակումբ, բաղնիք, ռադիո, դպրոց, հեռախոս։ Խորհանտեսությունն իր 1935 թ. պլանները կատարել է 600 դլխով ավելի, գերակատարելով ֆերմաների անասուններ հանձնելու պլանը։ Խորհանտեսությունում կազմակերպված է յերկու ստախանովյան բրիգադ, վորոնք պարտավորվել են մինչև տարվա վերջը տալ 3500-ական լիտր կաթ յուրաքանչյուր կովից։ Խորհանտեսության դիրեկտոր Արտաշես Մուղնեցյանը լավ աշխատանքի համար ՀԺԿ-ի կողմից պարգևատրվել է պատեֆոնով և դրամով։ Յերկու տարի յե, վոր խորհանտեսությունն իր ձեռքում է պահում Հողժողկոմատի փոխանցիկ դրոշը։ Ստացել է նաև Հողժողկոմատի պատվո գիրը։

ԲՈՒՂՈՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

Ամասիայի շրջանի զոոտեխնիկ։ Ինստիտուտն ավարտելուց հետո Գուրգենը չմնաց քաղաքում, այլ յերկար ժամանակով մեկնեց շրջան՝ սոցիալիստական գյուղատնտեսությանը զոոտեխնիկական ոգնություն ցույց տալու համար։ Այդ ժամանակ նա հանդիսանում եր շրջանային առաջին զոոտեխնիկներից մեկը։ Աշխատանքի դրժվար պայմանները, քաղաքի կյանքից կտրված լինելը չվախեցրին Գուրգենին և նա չլքեց աշխատանքը շրջանում։ Նա անհողդողդ նստած եր այնտեղ և հոգեկան բավականություն եր զգում իր աշխատանքների պտուղները տեսնելով։ Նա ապրում եր այդ աշխատանքով։ Այդ եր պատճառը, վոր նրա համար 5 տարին շրջանում անցավ համարյա աննկատելի։ Ամասիայի շրջանում, վորտեղ նա աշխատում է արդեն վեցերորդ տարին, Գուրգենը մտցրել է ցանովի խոտաբույսերի մշակություն (սիլոսացում), կոլտնտեսություններում անց է կացրել զոոտեխնիկական ձեռնարկումներ, ոժանդակել է բոլոր կոլտնտեսություններում ֆերմաներ կազմակերպելու և կոլտնտեսականների կովազրկության վերացման գործին։ Ամասիայի շրջանը Հայաստանի անասնաբուծական առաջավոր շրջանների շարքը դուրս բերելու գործում Գուրգենը խաղացել է մեկն առաջին պատվավոր դերերից։ Նա պատրաստել է հարյուրավոր կոլտնտեսականներ, վորոնք ներկայումս կարող են ինքնուրույն աշխատանք կատարել զոոտեխնիկայի ասպարիզում։ Իր լավ աշխատանքի համար Գուրգենն արժանացել է Հայաստանի Կենտգործկոմի պատվո գրին։



ԽԱՌԴՈՅԵՎ ԽԱՆԱԴ

Չքավոր քյուրդ ընտանիքից։ Ծնողները և ինքը՝ Խանադն ամբողջ ժամանակ արածացնում էին ոտարի վոչխարների հոտերը։ Հինգ տարի յե, ինչ Խանադն աշխատում է Լոռու խորհտնտեսությունում վորպես կթվոր։ Իրեն ամրացված 15 կովի յուրաքանչյուրից միջին հաշվով նա ստացել է 3039 լիտր կաթ։ Իսկ «Վերա» կովը տվել է 4400 լիտր կաթ։ Խանադն իր բրիգադում մտցրեց յեռանվագ կթի, կազմակերպեց որը-բոլոր արածացում և կովերի ճիշտ կերակրում։ Նրա կովերը մնվածությամբ և մաքրությամբ աչքի յեն ընկնում խորհտնտեսության կովերի մեջ։ Խանադի անասուններից վոչ մեկը չի սատկել։

ՈՍՈՅԱՆ ՏԻՐՈՒՀԻ

Յանըխի խորհտնտեսության կթվորուհի, չքավոր ընտանիքից։ Սրանից 15 տարի առաջ Տիրուհին զրկվեց ամուսնուց։ Նա աշխատում էր իբրև բատրակուհի և մեծացնում իր յերեխաներին։ Վեցերորդ տարին է, վոր խորհտնտեսությունում աշխատում է վորպես կթվորուհի։ Տիրուհու հորթերից վոչ մի անկում չի յեղել։ Նրան ամրացված 16 կովի յուրաքանչյուրից միջին հաշվով ստացվել է 3020 լիտր կաթ։ Լավագույն կովերի կթթը հասցրել է 4500 լիտրի։ Լավ աշխատանքի համար չորս անգամ պարգևատրվել է։ Խորհտնտեսությունում ունի լուսավոր սենյակ, սեփական անասուններ։

ԹԱԹՈՍՅԱՆ ՈՒԱՆ

Ն-Բայազետի շրջանի Բատիկյան գյուղի կոլտնտեսության ձիաբուծական ֆերմայի վարիչ։ Բատիկյան գյուղում Ոհանը յերկար ժամանակ բատրակ է յեղել կուլակ Տեր-Ավետիսյանի մոտ, իսկ Ն-Բայազետ քաղաքում՝ կուլակ Բաղդասարյանների մոտ։ Հինգ տարի յե, ինչ աշխատում է վորպես ձիապան և ֆերմայի վարիչ։ Յերբեք չի ունեցել անասունների անկում։

1935 թվականին, ձիերի նկատմամբ լավ խնամք տանելու, ճիշտ կերակրելու, որը-բոլոր արածացում կիրառելու, զամբիկներին ծնելուց 3 ամիս առաջ և յերկու ամիս հետո աշխատանքից ազատելու շնորհիվ, նա կարողացավ իրեն ամրացված զամբիկներից ստանալ մեկական քուռակ և բոլորը պահել—մեծացնել։ Շատ անգամ է պարգևատրվել հողբաժնի և կոլտնտեսության վարչության կողմից։

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՖԱՐ

Լոռու տոհմական խորհտնտեսության բրիգադիր։ Չքավոր գյուղացու ընտանիքից։ Ծնողներն սպանվել են հայ-թուրքական կոտորածի ժամանակ։ Ինքը յեղել է բատրակ զանազան մարդկանց մոտ՝ Ստեփանավանում։, Կաղզվանում և Նոր-Բայազետում։ 1928 թվականից աշխատում է Լոռու տոհմական խորհտնտեսության մեջ սկզբում վորպես կթվոր, իսկ հետո՝ վորպես բրիգադիր։ Պարգևատրված է շատ անգամ թե գրամով և թե նատուրայով։ 1935 թվականին անասնապահության ասպարիզում կատարած հարվածային աշխատանքի համար պարգևատրված է ՀԽՍՀ կենտգործկոմի պատվո գրով։

Սաֆարն իր բրիգադում ուներ 96 կով։ Յուրաքանչյուր կովից 1935 թվականին ստացել է 3014 լիտր կաթ։ Լավագույն կովերի կիթը հասնում է մինչև 4500 լիտրի։

Այդ ցուցանիշները նա ձեռք է բերել յեռանվագ կթի, որը-բոլոր արածացման, արոտատեղը կտորների բաժանելու, հերթականորեն արածացնելու և բրիգադի նյութական-կենցաղային պայման-

ները լավացնելու ճանապարհով։ 1935 թ. վաստակել է 2704 ռուբլի։ Ցեռանվագ կթի և ռացիոնալ արածացման փորձն առաջին անգամ կիրառվել է նրա բրիգադում, հետո փոխադրվել է մյուս բրիգադները։

Ստախանովյան միորյակներն ու հնգորյակները նույնպես առաջին անգամ կազմակերպված են Սաֆարի բրիգադում։

ՍՈՖՅԱՆ ՎԱՐՎԱՌԵ

Ախտայի շրջանի Խոտորջրի կոլտնտեսության կթվորուհի։ 11 տարի է, ինչ կոլտնտեսության անդամ է և միշտ աշխատել է այդ պաշտոնում։ Անասունների կորուստ չի ունեցել։ 1935 թվականին իրեն ամրացված 12 կովից ստացել է 12 հորթ։ Վարվառեն ստերջ կովեր չուներ։ Նրա կովերը միշտ մաքուր էին և չաղ։ Նրա կովերը միջին հաշվով տալիս էին 1500-ական լիտր կաթ։ Կովերը և հորթերը լավ պահելու համար Վարվառեն պարգևատրված է։

ՊՈՂՈՍՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

Լոռու տոհմական խորհանտեսության կթվոր։ Աբրահամի ծնողները յեղել են բատրակ՝ գերմանացի կոմս Հոուլիբի մոտ, վորի կալվածումն ել հենց կազմակերպված է Լոռու տոհմական խորհանտեսությունը։ Ինքը՝ Աբրահամը յեղել է բատրակ նաև Ստեփանավանի շրջանի զանազան կուլակների մոտ։ Արդեն 10 տարուց ավելի յե, ինչ աշխատում է խորհանտեսությունում վորպես կթող։ Շատ անգամ պարգևատրվել է հարվածային աշխատանքի համար։ Խորհանտեսությունում իրեն ամրացված 17 կովից 1935 թ. միջին հաշվով ստացել է 3021-ական լիտր կաթ, իսկ լավագույն կովից—Լիսկայից՝ 4267 լիտր։ Աբրահամն անասունների վոչ մի կորուստ չի ունեցել։

ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆ ՄՈՍԿՎԱ

Երբ անասնապահության 16 լավագույն առաջավորները հավաքվեցին Յերևանում, նրանցից շատերը չեյին հավատում, վոր պետք է գնան Մոսկվա, և միայն Կենտկոմում յեղած խորհրդակցությունից հետո, վորտեղ նրանց հայտնեցին, վոր, վորպես առաջավորների, վորոնք անասնապահության մեջ իրենց որինակելի աշխատանքի շնորհիվ հիանալի տրդյունքներ են տվել, յերկիրը նրանց ուղարկում է Մոսկվա՝ առաջավորների համամիութենական խորհրդակցությանը մասնակցելու և հույս ունի, վոր նրանք կվերադառնան այնտեղից նոր յեռանդով և ավելի լավ կկատարվեն անասնապահությանը, ավելի լավ կկատարեն ղեկավարի ցուցումները,—պատգամավորները հաստատապես համոզվեցին, վոր իսկապես գնում են Մոսկվա։

Նրանց ուրախությունն անսահման եր։

Յեվ իսկապես, ինչպե՞ս չուրախանային Գրիգորը, Այվազը, Լեվոնը, Տիրուհին և մյուսները. չե՞ վոր նրանք իրենց կյանքի համարյա կեսն անց են կացրել ուրիշների համար աշխատելով և, բացի տիրոջ հայհոյանքից, գազանաբարո կեղեքումից, ծաղրից ու կիսաքաղց կյանքից, ուրիշ բան չեն տեսել. իսկ այժմ, շնորհիվ խորհրդային իշխանության, նրանք վոչ միայն ազատվել են շահագործվելուց, վոչ միայն մարդավայել կյանք են վարում, կուշտ են և կուլտուրական կյանք ունեն, այլև արժանացել են Մոսկվա գնալու պատվին։

Մոսկվայի խորհրդակցությունն սկսվելուն մնացել եր մի քանի

որ։ Հարկավոր եր շտապել ճանապարհ ընկնելու։ Պատգամավորների վագոնի շուրջը խռնվել եյին գնացողների բազմաթիվ ընկերները, վորոնք կայարան եյին յեկել ճանապարհ դնելու իրենց պատգամավորներին։

Կայարան եյին յեկել Կենտկոմի, Հողժողկոմատի և այլ կազմակերպությունների աշխատավորները։

Սրտագին բաժանվելով իրենց ընկերներից՝ պատգամավորները վագոնում բռնեցին իրենց տեղերը։

Թբիլիսիում մեր պատգամավորությանը միացան Վրաստանի պատգամավորները։

Անդրկովկասյան ամբողջ պատգամավորությունը տեղավորված եր հատուկ պատգամավորական վագոնում։

Պատգամավորները շուտով ծանոթացան իրար հետ և կազմեցին մի ընտանիք։ Բազվից մինչև Մոսկվա պետք է գնային յերեք որ։ Վճռվեց այդ ժամանակն ոգտագործել ոգտավետ կերպով։

Ամբողջ պատգամավորությունը բաժանվեց խմբակների, վորոնց կցվեցին պատգամավորությունների ղեկավարները։ Մինչև Մոսկվա պիտի մշակեյին ընկեր Ստալինի ճառն ստախանովյան շարժման մասին, ընկ. Բերիայի «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» զեկուցման մի մասը և գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրությունը։

Հենց այդ կարևորագույն հարցերի մշակման մասին անդրկովկասյան պատգամավորության ղեկավարներ ընկ. ընկ. Գումեդինի և Զեյնալովի առաջադրությունը պատգամավորներն ընդունեցին մեծ սիրով։

Մշակումն անցնում եր աշխուժ կերպով. պատգամավորները մասնակցում եյին ամենայն ակտիվությամբ, բազմաթիվ հարցեր եյին տալիս։ Մի քանի պատգամավորներ ուրիշների հետ միասին թեև շտապում եյին որ առաջ Մոսկվա ընկնել, սակայն կատակով ասում եյին. «չի կարելի արդյոք ճանապարհը մի քիչ յերկարացնել և ավելի շատ պարապել»։

Պատգամավորների հետ պարապում եյին մինչև կեսոր, իսկ ճաշից հետո նրանցից յուրաքանչյուրը պատրաստվում եր խորհրդակցությունում յելույթ ունենալու։ Վոմանք պատրաստվում եյին իրենց մտքում, վոմանք գրում եյին, սակայն նրանցից ամեն մեկը հիշելով իր կատարած աշխատանքը և առաջիկա մեծ պայքարն անամոթաության համար, աշխատում եր մտածել, ասել մի նոր բան, պարծենալ իր փորձերով և հաջողություններով, վորպեսզի չկարմրի խորհրդակցությունում, ուրիշ պատգամավորներից հետ չմնա։

Առանձնապես ջանասիրությամբ եր պարապում տարիքով ամենից «ավագ» պատգամավորը՝ Այվազ Մուստաֆայեվը։ Նա ընդամենը 16 տարեկան եր, վորից 4 տարին նա արդեն կարողացել եր նվիրել անամոթաությանը։ Են դլխից Այվազը թողել եր չշփվող, չափազանց համեստ պատգամավորի տպավորություն, բայց բավական եր մի քանի որ միայն ապրել Անդրկովկասի պատգամավորների հետ, և Այվազը դարձավ անճանաչելի. բանից դուրս յեկավ, վոր նա շատ ուրախ, կենսուրախ բնավորություն ունի, խելոք տղա յե, լավ գիտե իր գործը։

Այվազը մեր պատգամավորության սիրելին եր։

ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Կովկասի բարձրաբերձ լեռները, Ազով-Սևծովյան տափաստանները, Մոսկվայի մոտիկ ամարանոցների սոճու անտառներն արդեն մնացել եյին մեր հետևը։

Մեր գնացքը մոտենում եր Հոկտեմբերյան կայարանին։ Վագոնից յերևացող Մոսկվայի մի մասն իր վիթխարությամբ, ֆաբրիկ-գործարանային խողովակների հսկայական քանակով, բարձրաշեն տներով և քաղաքացիների ու տրանսպորտի մեծ շարժումով շշմեցուցիչ տպավորություն գործեց։ Բայց դա Մոսկվայի միայն մի մասն եր, այն ել աննշան մասը. իսկական Մոսկվան դեռ չեր յերևում։ Այն պետք է դեռ ևս տեսնեյինք։

Համկոմկուսի կողմից կայարան յեկած և պատգամավորներին կցված ընկերները նրանց արագորեն տեղավորեցին ավտոների մեջ և տարան խորհուրդների յերրորդ տունը։

Կարգապահությունը, վերաբերմունքը, սպասարկումը և տնունդը՝ խորհուրդների յերրորդ տանը՝ արժանի եյին ամեն մի գովասանքի, և պատգամավոր Արմենակ Սարգիսյանցը մի քանի անգամ իր՝ Զանգեզուրի բարբառով ասում է—«միմիայն մեզ ցույց տված վերաբերմունքը մըն մլլյոն արժի»։

Խորհրդակցությունն սկսելուց առաջ պատգամավորները յեղան մետրոյում, մեծ թատրոնում, ավտոդործարանում, մսի կոմբինատում,

Սենդի ժողկոմատի ցուցահանդեսում, ցիրկում և այլն։ Այս ամենը և մանավանդ մեծարոն պատգամավորներին հեքիաթ էր թվում. նրանք իրենց աչքերին չէին հավատում, վորովհետև չէին կարողանում պատկերացնել, վոր խորհրդային իշխանությունն ընդունակ կլիներ այդքան կարճ ժամանակամիջոցում հողի տակ էա կառուցել այնպիսի շինություններ, վորոնք բազմաթիվ անգամ ավելի լավ են, քան յերկրի յերեսին առաջուց շինած ցարական պալատները և ապարանքները։

Մեծ թատրոնում ներկայացնում էին «Կոնյոկ Գորբունոկ» բալետը։ Մինչև վարագույրը բարձրանալը պատգամավորներն ամբողջ ժամանակ դիտում էին ոթյակների և յարուսների ներքին վոսկեզոծ զարդարանքը, թատրոնի բարձրությունն ու մեծությունը, կենտրոնական ոթյակը, վորտեղ առաջ կարող էին նստել միայն ցարական արքունիքի բարձր աստիճանավորներ, և ինքը՝ ցարը, և վորտեղ այժմ նստում են նույնպիսի աշխատավորներ, բանվորներ և գյուղացիներ, ինչպես իրենք են, վոր այժմ հանդիսանում են կուսակցության և կառավարության ղեկավարներ։

Ամբողջ բալետից պատգամավորների հիշողության մեջ լավ տպավորվել էին ձիերի գողության մոմենտը, պարերը և սապատավոր փոքրիկ ձիուկը, վորը կատարում էր այն ամենը, ինչ վոր պահանջում էին նրանից։

Ինչու յեր սապատավոր ձիուկն ամեն ինչ կատարում, ով էր ստիպում իրեն այդպես ճշտակատար լինել և ում էր ներկայացնում սապատավոր ձիուկը,—այդ հարցերը պարզ չեղան պատգամավորներին։ Ցեվ հետո միայն, անատապահների խորհրդակցության մեջ ընկ. Դեմյան-Բեդնու աննման յելույթից նրանք պարզորեն հասկացան սապատավոր ձիուկի պատմական եությունը։

Դեմյան-Բեդնին իր յելույթի մեջ խոսելով ժողովրդական ստեղծագործության խոշոր նշանակության մասին՝ տվեց իր կարծիքը սապատավոր ձիուկի մասին։

«Ժողովուրդը սապատավոր ձիուկի մեջ մարմնավորել է իր սեփական աշխատանքը, հարկադիր աշխատանքը, կռացած աշխատանքը, մարմնացրել էր իր աշխատավորական սապատը։ Ամբողջ հին աշխատանքը սապատավոր էր, մարդիկ սապատավոր էին։ Ժողովրդի սապատն էր ամեն ինչ անում։ Դուք ինքներդ մեծ մասամբ ջահելներ եք, ընկերներ, տեսնում եք ձեր ծերունիներին, կռացած, կուզիկ։ Դա աշխատանքով ձեռք բերված սապատներն են։ Ցես հիշում եմ մի այսպիսի դեպք. խորհրդային գյուղում մոտեցավ ինձ կորամեջք մի ծերունի և մոտեցրեց ինձ իր յերկու այս տեսակ հաղթանդամ սղանեերին ու ասաց.

Տեսեք, նոր կյանքն ինչպիսի արծիվ վորդիներ է տվել ինձ. իսկ յես ամբողջ կյանքումս կռացած՝ սապատավոր եմ դարձել։ Ընկերներ, դա նշանակալից է։ Ահա ժողովրդական հարկադիր աշխատանքի հազարավոր տարիներով, տարեցտարի աճող այդ սապատը հեղափոխությունը վոչնչացրեց։ Դուք բոլորդ ել այժմ արդեն սապատ չունեք, այլ շտկված մարդիկ եք և շտկված՝ դուք հպարտորեն և համարձակ, գլուխներդ բարձր գնում եք ամբողջ աշխարհի առջև։ Մենք շատ ենք փոխվել, ընկերներ։ Ասել կուզի, մենք ունեցել ենք ներքին կամքի այնպիսի կուտակումներ, վորոնք հնարավորություն են տվել մեզ այժմ իսկապես այնպիսի արծիվներ ցույց տալու մեզ, վորպիսին ենք մենք և վորոնց վրա մենք ինքներս հիանում ենք և իրավունք ունենք հիանալու։

Այնպիսի համագումարներում, ինչպես ձերն է, յես միշտ նկատել եմ ներքին ուրախության և ինքնահիացման այդ հուզիչ մոմենտը։ Նայում եք ընկեր Ստալինին—հիանում ձեզանով։ Վոչ միայն մենք ինքներս ենք փոխվել, այլև ամեն ինչ փոխվել է մեր շուրջը, նկատեցեք, փոխվել է և ինչքան հետաքրքրական է փոխվել։ Չե՞ վոր յեղել է մի ինչ-վոր հին իշխանություն։ Նա փորձել է կառավարել պետությունը, փորձել է անել շատ բան նրանից, ինչ վոր մենք ել ենք անում։ Չե՞ վոր հարկավոր էր ապրել։ Միայն հին իշխանությունն ուրիշների ձեռքով էր ուզում անել այդ։ Ամեն ինչ փորձում էր անել. վոսկի ել էր արդյունահանում, բայց վատ, և կոնցեսիոներներին էր տալիս իր վոսկեբեր հողերը, և նավթն արդյունահանում էր նույնպես ուրիշների, հաճախ՝ կոնցեսիոներների ձեռքով։ Նույն պատմությունը նաև ածխի վերաբերմամբ։ Ամեն ինչ այդ հին, մեր ձեռքով թաղված հիմարների ձեռքին հիմար կերպով ել վերջանում էր։

Իսկ այժմ նայենք, թե ինչպես ինքը՝ ընությունը մեզ մոտ ավելի խելոք է դարձել։ Իսկապես, հանկարծ, սատանան տանի, մեր հետախուզողները վոսկու ամբողջ փթանոց կտորներ են գտնում։ Ինչու։ Վորովհետև վոսկին ավելի խելոք է դարձել, գիտե, թե ուր պետք է գնալ, ում ձեռքն անցներ։ Ավելի շատ նավթ ենք արդյունահանում, քան առաջ էին կարողանում ստանալ։ Առատորեն խփում

են մեր շատրվանները։ Ինչու։ Նավթը նույնպես ավելի յե խելոքացել։ Իսկ ինչպես է ածուխը վառ է առել մեզ մոտ։ Իզուր չե, որ ստախանովյան մեթոդները ծնունդ են առել այդ արտադրության մեջ։ Ընկերներ, ածուխն ավելի յե խելոքացել։ Յերկաթն ավելի յե խելոքացել։ Ամեն ինչ մեր շուրջը խելոքացել է, որովհետև մենք ինքներս դարմանալու աստիճան կուլտուրական ենք դարձել։

Այժմ տեսեք, ինչպիսի կուլտուրական մարդիկ են նստած հովիտների, չոքանների, կթվորների համագումարում։ Կուլտուրան դուրս է ժայթքում մեզնից, մենք ամենակուլտուրական ժողովուրդն ենք։ Մենք բոլորս խելացի յենք դարձել մեր անամենապահության մեջ։ Յես կարդացել եմ հրաշալի ռեկորդիստ-կթվորների մի շարք կարծիքները, որոնց կովերը նույնպես դարձել են խելոք, կարծես՝ ինքնակիթ։ Արդեն կովերն իրենք են գալիս, որպեսզի որական վեց անգամ կթեն նրանց։ «—Յեկել եմ, վերցրու ինձնանից 5—6 հաղար լիտր։ Բայց ինչու, կարծես ամեն ինչ ինքնիրեն է ընկնում մեր ձեռքը։ Ածուխը կարծես ինքն է գալիս մեր ձեռքը, նավթի շատրվաններն սկսել են մի տեսակ հեքիաթային ձևով խփել, կովերն իրենք են կթվում։ Չե, են չի, թե ինքն իրեն է գլուխ գալիս։ Եղ կհամապատասխանի այն առածին, թե՝ „որսորդի գոհն իր վոտով է գալիս“։ Որսորդ ենք դարձել։ Տեխնիկային տիրապետել ենք, կուլտուրական ենք դարձել, աշխատանքը հաջող է գնում, նրա տեմպն ուժեղացել է։ Ահա թե ինչու յե այժմ թվում, թե ամեն ինչ ուղղակի ինքն իրեն է ընկնում մեր ձեռքը»։

ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԸ ԿՐԵՄԼՈՒՄ

Փետրվարի 13-ին պատգամավորներին բաժանեցին Կրեմլ մտնելու անցաթղթեր։ Բոլորի տրամադրությունն ավելի ևս բարձրացավ։

Յուրաքանչյուր պատգամավոր անհամբեր սպասում եր յերեկոյին, որ գնա Կրեմլ, որպեսզի տեսնի այնտեղ անամենապահության ստախանովականների հսկայական բանակը, տեսնի այնտեղ ամենամեծ, ամենից հարազատ մարդուն, սոցիալիստական հաղթանակների մեծագույն կազմակերպչին—ընկեր Ստալինին։

Պատգամավորներն ավտոբուսներով մոտեցան Կրեմլին։ Նրանցից յուրաքանչյուրն ուզում եր առաջինը մտնել Կրեմլ, տեսնել այնտեղ նշանավոր ցար-թնդանոթը և ցար-զանգը, տեսնել տները, որտեղ աշխատում է մեր կառավարությունը, որտեղ ապրում են մեր առաջնորդները, ապրում է Ստալինը։

Մաքուր տներ, ասֆալտած փողոցներ, մարգեր, նորատունկ սոճիներ և հին պալատներ, որոնք այժմ վերածվել են ժողովների դահլիճների և թանգարանների։ Վոչ մի արտասովոր բան չկար Կրեմլում։

Ժամը 6-ին փառավոր լուսավորված մեծ դահլիճում բոլոր տեղերը բռնված եյին։ Հրաշալի տեսարան եր ներկայացնում այդ բոպեյին դահլիճը։ Պատերի լուրջ մարմարիոնը, փայլատ ջահերի մեղմ լույսը, Լենինի մատիսոհ կիսանդրին, ամբիոնը, որի վրայից բազմաթիվ անգամ յելույթ է ունեցել ընկեր Ստալինը և կուսակցության ու կառավարության մյուս ղեկավարները։

Բոլոր պատգամավորների հայացքը բեվեռված է մի կետի վրա—դռան վրա, որ նայում է նախագահությանը, այնտեղ, որտեղից ահա պետք է հայտնվեն կուսակցության և կառավարության ղեկավարները, պետք է յերևա Ստալինը։

Դահլիճում տիրում եր բացառիկ լռություն. ամեն մեկն զգում եր իր հարևանի սրտի բաբախումը, գիտեր նրա միտքը, որովհետև այդ բոպեյին բոլորն էլ միատեսակ եյին մտածում։ Մտքերն ու զգացմունքներն այդ պահին դառնում եյին դեպի նա, որի անունը մարմնացումն եր պայքարի, հաղթության, մեր ժողովրդի մեծության, որի անունը Լենինի անվան հետ միասին հնչում է որպես մարտակոչ և հաղթություն՝ կոմունիզմի հաղթանակի համար ամբողջ աշխարհում։

Դահլիճը վոտի կանգնեց որպես մի մարդ, լռությանը փոխարինեց ծափերի վորոտը և անընդհատ ուրախագին «ուռռա» Ստալինի և մյուս ղեկավարների հասցեյին։

Հազար հինգհարյուր մարդ, Միության համարյա բոլոր ազգերից, որ յեկել եյին Մեծ Միության զանազան անկյուններից, կանգնած՝ յերկար ժամանակ վողջունում եյին իրենց առաջնորդին, իրենց կուսակցությանը, իրենց կառավարությանը։

Հազիվ թե պատգամավորներից որևե մեկն իր կյանքում այնպես ուրախացած լիներ, ինչպես ուրախացել եր նա այդ բոպեյին։ Նախագահության սեղանի շուրջը, կուսակցության և կառավարության ղեկավարների հետ սեղանի ծայրում ընկ. Վորոշիլովի կողքին, պարզ ու համեստ կերպով և վեհորեն կանգնած եր ընկեր Ստալինը։ Կանգնած՝ պատգամավորների հետ միասին նա ևս ծափահարում եր, նա նույնպես ուրախանում եր։ Նա ուրախանում եր

բոլոր պատգամավորների, ամբողջ խորհրդային ժողովրդի ուրախությամբ, վորին տանջակ տարիների ընթացքում ինքը կուսակցության հետ միասին կազմակերպված տարել է հաղթանակից հաղթանակ և հասցրել է ուրախալից կյանքի։

Հայաստանի նշանավոր պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանն իր բանաստեղծություններից մեկի մեջ, վորի վերնագիրն է «Կրեմլի պալատում», այսպես է նկարագրում այդ մոմենտը։

ԿՐԵՄԼԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Ցեվ ինչպես կանաչ-անտառի միջում
Մրրիկ ու վորոտ ծառ-ծառս լինելին՝
Այնպես էլ նրանք Կարմիր դահլիճում
Դիմավորում են մեծն ՍՏԱԼԻՆԻՆ.—

Հազար երբանոք, հազար գնդացիր
Ցնցում են կարծես դալիճները ոնծիր,
Սալյուտ են տալիս զոր-վարին վեռ—
Նոր վերադարձած հաղթանակից կարծես։

Իսկ նա ժպտում է. զահ է, ոներկրա
Ցերկրի այսորվա ծաղկած վիճակից.
Նախ-ին տագնապը այլեվս չկա—
Ապահով՝ յերկրի սահմաններն ու գիծ։

Ցեվ դեմքը խրոխտ մեծն Լենինի,
Վոր լույսերի մեջ բեմումն է բազմած՝
Նույնպես ժպտում է նման ՍՏԱԼԻՆԻ—
—Վեց յերդումն արդեն պատվով կատարած...

Ուժգին, յերկարատև «ուռռաները» ռուսերեն, թուրքերեն, ուկրայիներեն, վրացերեն, ուզբեկերեն, հայերեն և այլ ազգերի լեզուներով լավող «կեցցե՛ ժողովրդի առաջնորդ ընկեր Ստալինը» բացականչությունները հնարավորություն չեն տալիս Միության հողժողկոմ ընկ. Զերնովին բացելու խորհրդակցությունը։

Վերջապես ընկեր Զերնովին հաջողվում է խորհրդակցությունը բացված հայտարարել։ Իր ներածական ճառից հետո, վորի մեջ ընկ. Զերնովը ավեց անամնապահության համար մղած յերկամյա պայքարի հանրագումարը, սկսեցին խոսել պատգամավորները։

Մեր պատգամավորությունից յելույթի համար գրվել եյին յերկու հոգի՝ Գրիգոր Խաչատրյանը և Այվազ Մուստաֆայեվը։ Գրվել ցանկացողների թիվը, անկասկած, ավելի մեծ եր։ Ամենքն եյին ցանկանում խոսել՝ շատ կարելի յե վոչ այնքան իրենց հաջողություն-

ների մասին պատմելու և իրենց տպավորությունները հաղորդելու համար, վորքան յելույթից հետո նախագահությանը մոտենալու և իրենց սիրելի առաջնորդի և նրա զինակիցների ձեռքը սեղմելու համար։

Խորհրդակցության մեջ առաջին յելույթն ունեցավ Արևմտյան Սիբիրի Կամենսկի շրջանի «Կարմիր վուլկան» կոլտնտեսության վոչխարաբուծական ապրանքային ֆերմայի վարիչ ընկ. Գորբ Կանոնը։

Նա պատմեց այն մասին, թե ինչպես 1935 թվականին իրենց հաջողվել է 83 կովից ստանալ 92 հորթ և բոլորն էլ վողջ են մնացել և, լավ խնամքի ու կերակրման շնորհիվ, յուրաքանչյուր որ միջին հաշվով ստացել են քաշի հավելումն որական 800—900 գրամ, մինչդեռ առաջ այդ հավելումը լինում եր 60—70 գրամ։ Հորթերին կերակրել են խոտաջրով։

Տեղական վոչխարները մերինոս խոյերով մետիզացիայի յենթարկելու շնորհիվ, մեռիս մաքիների միջին քաշը բարձրացել է 70 կիլոգրամի և նրանք տալիս են 4 կիլոգրամից ավելի բուրդ, այնինչ առաջներում վոչխարի կենդանի քաշը չեր անցնում 35—38 կիլոգրամից, իսկ բրդինը՝ 600—800 գրամից։

Գորբը հաջողեցրել է 100 մաքուց ստանալ 145 գառ և բոլորին էլ պահպանել առանց կորուստների։ Գառները յոթ ամսական հասակում արդեն կշռում եյին մինչև 50 կիլոգրամ։

Հենց վոր ընկ. Գորբը վերջացրեց իր ճառը, յես անմիջապես նայեցի իմ կողքի նստած մեր առաջավոր վոչխարապահ ընկ. ընկ. Արմենակ Սարգիսյանյանին և Սմբատ Բաղալյանին։ Նրանք նստած եյին չափազանց ինքնագոհ, ժպիտը խաղում եր նրանց դեմքի վրա։

— Ե, — հարցնում եմ նրանց,—ցուցանիշները լավն են։

— Լավն են, բայց մերինից լավը չեն,—պատասխանում են նրանք։—Ցեթե Գորբը 100 մաքուց ստացել է 145 գառ, մենք նույն 100-ից ստացել ենք 215 գառ։ Գորբը մեզնից շատ յետ է մնացել,—պատասխանեց Սարգիսյանյանը։ Իսկ ինչ վերաբերում է բրդին, ինքներդ էլ գիտեք, թե մեր վոչխարներն ինչ տեսակի յեն, նրանց բուրդը կոշտ է, և այնուամենայնիվ մենք յերկու կիլոգրամից պակաս բուրդ չենք ստացել, բայց այ, յերբ ձեռք կբերենք նրբաբուրդ մերինոսներ, այն ժամանակ մենք էլ կստանանք վոչխարից վոչ թե 4 կիլոգրամ բուրդ, ինչպես Գորբն է ստանում, այլ 6—7 կիլոգրամ։

Մեր խոսակցությանը միացավ Յանբեխի խորհրդատեսության բրիգադիր Խաչատուր Գրիգորյանը և շընչաց ակնոցիս.

— Ամենևին նորություն չէ, որ Գորբը 83 կովից ստացել է 92 հորթ. յես ավելի յեմ ստացել։ 75 կովից յես ստացել եմ 90 հորթ, իմ կովերից 15-ը մի տարվա ընթացքում ծնել են յերկու անգամ. ինչ վերաբերում է ածին, Գորբը կազմակերպել է այդ գործը շատ լավ, յես ևս սկսելու յեմ հորթերին խոտաշրով կերակրել։

Գորբի յելույթից հետո խորհրդակցության մեջ, որ տևեց յերեք որ, յելույթ ունեցան կրկին 80 առաջավոր և ղեկավար ընկերներ։

Բազմաթիվ նոր, հետաքրքրական և ուսանելի բաներ ասացին առաջավորները։ Մեր պատգամավորներին առանձնապես դուր յեկավ Դնեպրոպետրովսկի մարզի Ռոսֆրոնտ շրջանի Թելմանի անվան կոլտնտեսության կթվոր ընկ. Եպպ Մարիի ճառը։ 1935 թվականին նա ռեկորդային կթթ է ունեցել իրենց կցված կովերից։ «Նատաշկա» կովը 1935 թվականին տվել է 7328 լիտր կաթ՝ որական 43,5 լիտր, «Ռուսալկա» կովը տվել է 5328 լիտր կաթ, որական՝ 34 լիտր։

Ընկ. Եպպն ընկեր Ստալինին խոսք տվեց 1936 թվականին հասցնել «Նատաշկայի» կթթը մինչև 10,000 լիտրի, «Ռուսալկայինը»՝ 8000-ի, իսկ իր խմբի կովերի յուրաքանչյուրի կթթը, միջին հաշվով, վոչ պակաս 5000 լիտրից՝ 1935 թվականին 3768 լիտրի դիմաց։

Մեր կթվորները—Աննան, Տիրուհին, Վարվառեն և ուրիշներն ուղղակի շշմել եյին այդ թվերից. նրանցից ամեն մեկն աշխատել է վորպես կթվոր ավելի շատ, քան Եպպը, բայց նրանցից վոչ մեկին այդ տեսակ կաթնատվության ծանոթ չեր։

Մեր կթվորների կովերը 4000 լիտրից ավելի կաթ չեն տվել։

—Քուսպ շատ տվեք,—ասում եր ընկ. Տիրուհին,—և այն ժամանակ մեր կովերն ել կտան 10,000-ական լիտր կաթ։ Յես կովերին պակաս չեմ ճանաչում, քան ուրիշ կթվորներ։

Յերբ ընկ. Տիրուհուն և մյուս կթվորներին բացատրեցին, որ բանը միայն քուսպի մեջ չե, այլ հարկավոր է լավ խնամել կովերին, իմանալ կթելու տեխնիկան և կերակրելու կարգը, հաշվի առնել կովերի անհատականությունը, նա համաձայնեց, որ իսկապես գաղտնիքը միայն առատ կերակրելու մեջ չե, մի բան, որ անպայման անհրաժեշտ է, այլ այդ գաղտնիքը կայանում է նաև նրանում, թե վորչափ կանոնավոր է կովի սննդառությունը, վորչափ կանոնավոր են կթում նրան, և այլն։ Նա լիովին հասկացավ այդ և վճռեց անպատճառ հասնել ընկ. Եպպին։

Մեր պատգամավորների զարմանքն ավելի ևս մեծացավ, յերբ Հյուսիսային յերկրի Խոլմոգորսկի տոհմային տնտեսության կթվոր Տախսիա Պրոկոպյեվան իր խոսքի մեջ հայտնեց, որ իրեն հանձնված կովերից ինքը միջին հաշվով ստացել է 6291 լիտր կաթ, ըստ որում իրեն այդ ռեկորդային կթթը հաջողվել է շնորհիվ այն հանգամանքի, որ նա կովերին սիրով և հաճույքով է խնամել, ճանաչել է յուրաքանչյուր կովին, ուսումնասիրել է ամեն մեկին առանձին, նրանց, կեր է տվել, յեղնելով յուրաքանչյուր կովի առանձնահատկություններից։

Ընկ. Տախսիան ամեն որ մաքրել է կովերին, ձմեռն ամեն որ կովերին դուրս է բերել 10—20 րոպեյով զբոսնելու։ Ամառն արոտատեղերում կովերն արածել են առանձին, կովերին, բացի խտացած կերերից, տրված է նաև հանքային կերաղ, վոսկրի ալյուր և ածուխ։

Պրոկոպյեվան խոստացել է 1936 թվականին իր լավագույն կովերի կթթը հասցնել մինչև 10,000 լիտրի։

Լոռու տոհմային տնտեսության մեր կթվորները՝ Սաֆար Ավետիսյանը և Աբրահամ Պողոսյանն աչքերը հառած նայում եյին Պրոկոպյեվային և ուշադրությամբ լսում նրան և ապա սկսեցին խոսել իրար մեջ, թե ինչու մեր կովերն այդքան կաթ չեն տալիս։ Չէ՞ որ իրենց կովերը վատ չեն, տեղական կովեր չեն, համարյա բոլորն ել տոհմային են—շվիցներ և սիմենտալներ։ Կերերը բավարար են, բացի կոշտ կերերից, կովերին տալիս են նաև կոնցենտրատներ,—քուսպ, թեփ և հյութալի կերեր։ Ինչումն է բանը։—«Բանը նրանումն է,—բացատրեցին նրանց,—որ դուք կովերին լավ չեք ճանաչում, ըստ յերևույթին այնպես չեք սիրում ձեր կովերին, ինչպես Պրոկոպյեվան է սիրում, և բարձր կթթ ստանալու համար չեք ոգտագործում բոլոր հնարավորությունները, ինչ անում է Պրոկոպյեվան։ Կիրառեցեք նրա փորձը, և ձեր կովերն ել կտան 10,000 լիտր կաթ»։

— Իհարկե, մենք չենք անում այն ամենը, ինչ որ անում է Պրոկոպյեվան,—համաձայնեց Սաֆարը,—և դրա մեջն է մեր կթի նվազության գաղտնիքը։

— Պրոկոպյեվայի փորձն անպատճառ հարկավոր է կիրառել,—վճռականապես հայտնեցին Սաֆարը և Աբրահամը։

Մեր պատգամավորների մեջ չկային խոզապահներ և մեղվա-

բուծները, վորովհետև մեր խոզապահներից և մեղվաբուծներից վոչ մեկն իր վորակային ցուցանիշներով չեր համապատասխանում խոզապահներից և մեղվաբուծներից արվող պահանջներին։ Ուստի հասկանալի յեր այնհետաքրքրությունը, վորով մեր պատգամավորները լսում եյին Վորոնեժի մարզի Մուչկանովի շրջանի՝ Խորհրդային Միության Կենտգործկոմի անվան կոլտնտեսության հին կոլտնտեսական խոզապահ 60-ամյա ընկ. Աբրահամ Լյուբավշինին և Կրասնոդարի յերկրի «Պրոմկրաինա» կոլտնտեսության մեղվաբուծ ընկ. Վասիլիյ Շալագինին։

Վերջին 5 տարվա մեջ,—զեկուցում եր ընկ. Լյուբավշինը,—մեր խոզաբուծական ֆերմայից ուրիշ կոլտնտեսությունների ծախել ենք 5266 տոհմային գոճի, իսկ ամբողջ աշխատանքի ընթացքում (8 տարի յե խոզապահություն է անում) 7 մերունից ստացել ենք մոտավորապես 10,000 գոճի։

1934 թվականին նա միջին հաշվով մի մերունից ստացել է 16 գոճի, իսկ 1935 թվականին՝ 22,2 գոճի։ Ընկ. Լյուբավշինը հասել է այդ հաջողություններին միմիայն շնորհիվ լավ խնամքի, կերակրելու և դեպի գործն ունեցած սիրուն։

— 1935 թվականին,—ասում է մեղվաբուծ՝ մեղվանոցի վարիչ ընկ. Շալագինը,—ինձ հաջողվել է 105 մեղվի ընտանիքից ստանալ 9,5-ական փութ մեղր յուրաքանչյուրից։

Մեղվանոցի միայն մի տարվա յեկամուտը կազմել է 50,000 ռուբլի։ Մեղունների առանձին փեթակները տվել են ռեկորդային ցուցանիշներ, մի փեթակի ված մեղրի քանակությունը հասցնելով 20 փթի։ Իր սեփական 7 փեթակից ընկ. Շալագինն ստացել է 30 փութ մեղր և 2500 ռուբլի յեկամուտ։

— Այստեղ արդեն մենք պարծենալու վոչինչ չունենք,—ասում եյին մեր պատգամավորները։

Մեղվաբուծության և խոզաբուծության մեջ մեր գործերն այնքան էլ լավ չեյին։ Հազիվ թե Հայաստանի կոլտնտեսություններից մեկի մեջ կարողանաք գտնել այնպիսի ռեկորդային ցուցանիշներ, ինչպիսին ընկ. ընկ. Շալագինն ու Լյուբավշինն են ունեցել։ Դեռ ևս լավ է, յեթե միջին հաշվով կարողանանք ստանալ մի մերունից 8—10 գոճի և մեղունների մի փեթակից 3—4 փութ մեղր։

Իսկ չէ՞ վոր անկարելի և զարմանալի բան չկա այստեղ։ Փորձեցեք ապահովել մեր խոզերին կոնցենտրատներով, պահել նրանց

մաքուր խոզանոցներում, կազմակերպել լավ խնամք, և մի խոզից 22 գոճի ստանալու հնարավորությունն ապահովված կլինի։

Վոչ վոքի համար գաղտնիք չէ, վոր մեր խոզերը շատ քիչ են կերակրվում կոնցենտրատներով։ Մեղվում խոզերն առհասարակ արածում են անտառում, ճռում են կիսաքաղցած, յերբեմն առանց հսկողության։

Պարզ է, վոր խոզաբուծական տնտեսության այս յեղանակով մենք հեռու չենք գնա և Լյուբավշինի ցուցանիշները չենք ունենա մեր կոլտնտեսություններում։—Հարկավոր են, վորքան կարելի յե, շատ կոնցենտրատներ և լավ խնամք,—հաստատում են մեր պատգամավորներից շատերը։

Նույնն եր ասում մեղվաբուծության մասին Լեվոն Նալբանդյանը։

Չէ՞ վոր մեղվաբուծության համար մենք կերի անման բազա ունենք։ Մեր արոտատեղերը, մեր մարգագետինները լիքն են մեղրատու ծաղիկներով, իսկ մեր կորնգանը վոսկի յե, ուղղակի մեղրի աղբյուր։ Մեղվում ինչքան ուղես կարելի յե մեղր ստանալ, հարկավոր է միայն կանոնավորապես կազմակերպել մեղունների ձմրան խնամքը, նրանց աճեցումը, նախապատրաստումը մեղրաբերքին, մեղունների տեղի ընտրությունն ամառ ժամանակ, վորտեղ նրանք սկսում են հավաքել մեղրը։ Միշտ էլ չի հաջողվում մեղ լավ տեղ ընտրել մեղունների համար. չենք ուսումնասիրում կերի բազան, մեղուներին տանում ենք՝ ուր պատահի, դրա համար էլ արդյունքը չնչին է լինում։

Հարկավոր է վերացնել այդ թերությունները և այլևս զարմանալի չի լինի յուրաքանչյուր փեթակից 10-ական փութ մեղր ստանալը։

ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՅԵԼՈՒՅԹԸ

Փետրվարի 15-ին, խորհրդակցության 5-րդ նիստը բացվելուց հետո, վորին նախագահում եր ընկ. Զերնովը, առաջին խոսքը տրվեց ընկեր Գրիգոր Խաչատրյանին։

Գրիգորը լսելով իր անունը՝ վեր թռավ տեղից և արագ քայլերով մոտեցավ ամբիոնին։ Նախ՝ թաշկինակով մաքրեց յերեսը, գրպանից հանեց մի թղթի կտոր, վորի վրա անշուշտ իր յելույթի թեզիսներն

եյին գրված, և բարձր, խրոխտ ձայնով, իր մայրենի լեզվով, ասաց հետևյալ ճառը։

— Ընկերներ, Խորհրդային Հայաստանի առաջավոր կոլտնտեսական-կոլտնտեսուհիների, խորհտնտեսությունների աշխատավորների և աշխատավորուհիների անունից հայտնում եմ Խորհուրդների յերկրի մեծ առաջնորդ Ստալինին (բուռն ծափահարություններ) և նրա զինակիցներին բոցավառ վողջույն (աղմկալից ծափահարություններ)։

Անասնապահական խորհտնտեսության մեջ յես աշխատում եմ 1928 թվականից։ Մինչև այդ ժամանակ յես բատրակ եյի։ Այժմ աշխատում եմ վորպես բրիգադիր։ Մեր խորհտնտեսությունն իր վատ աշխատանքի պատճառով 1934 թվականին անասունների մեծ կորուստ ունեցավ և ցած եր նրա մթերատվությունը։ Այդ տարին նա 450 հազար ռուբլու վնաս կրեց։

Կուսակցության 17-րդ համագումարում մեծ առաջնորդ ընկեր Ստալինի տված ցուցումներից հետո, անասնապահությունը բարձրացնելու մասին կուսակցության և կառավարության տված մի շարք դիրեկտիվներից հետո, խորհտնտեսությունը կարողացավ վերակառուցվել, յեռանդուն կերպով ձեռնամուխ յեղավ անասնապահության բարձրացմանը և արդեն 1935 թվականին կարողացավ վոչ միայն ծածկել իր 450 հազար ռուբլու վնասը, այլև տարին բոլորեց 250 հազար ռուբլի շահույթով։

Խորհտնտեսությունը կարողացավ կովերի կիթը 11 ցենտներից հասցնել 17 ցենտների։

Առանձին բրիգադներ, ներառյալ նաև իմ բրիգադը, յուրաքանչյուր կովից ստացան միջին հաշվով տարեկան 3012 լիտր կաթ, իսկ մեր կովերը տեղական են, վոչ ազնվացեղ։ 40 կովի միջին կաթնատվությունը մենք հասցրինք տարեկան 4000 լիտրի (ծափեր)։

Մի քանի զոոտեխնիկ աշխատում եյին մեզ համոզել, վոր կովերի վորոշ մասն անպայման ստերջ պետք է լինի։

Այդ ճիշտ չե. մենք վոչ միայն կարողացանք վերջ տալ ստերջությանը, այլև մի քանի կովից ստացանք տարվա ընթացքում յերկու ծին։ 15 կով ծնել են յերկու անգամ տարվա սկզբին և վերջին։ 75 կովից իմ բրիգադն ստացավ 90 հորթ։ Բոլոր հորթերն ել առողջ են և վոչ մեկը չսատկեց։ Իմ աշխատանքի ամբողջ ընթացքում յես պահել և առանց կորստի աճեցրել եմ 495 հորթ։

Նուշպիսի նվաճումներ կան նաև վոչխարաբուծության ասպարիզում։ Մեր պատգամավորների մեջ ներկա յե Գորիսի շրջանի Հին Գորիսի կոլտնտեսության ֆերմայի բրիգադիր Սմբատ Բաղալյանը, վոր կարողացավ Ղարաբաղի 100 մայր վոչխարից ստանա 215 գառ (ծափահարություններ)։ Ընկեր Բաղալյանը պարտավորություն ստանձնեց՝ 1936 թվականին 100 մայր վոչխարից ստանալ 250 գառ (ծափահարություններ) և յերկու տարում կազմակերպել չորս ծին։

Թող ձեզ ծիծաղելի չթվա, յեթե յես հաղորդեմ, վոր մեր կոլտնտեսուհիները ևս, ուրախ կյանքի շնորհիվ, տապալեցին յերեխա ծնելու հին նորմաները։ Գորիսի շրջանի Հին Գորիս գյուղի կոլտնտեսուհի Աշխեն Արզումանյանը յերկու տարվա ընթացքում ծնեց հինգ առողջ հրաշալի յերեխա (աղմկալից ծափահարություններ, կենդանություն դահլիճում)։

Այդ յերջանիկ կոլտնտեսուհին բացառություն չի կազմում։ Յես ամուսնացա մեր խորհտնտեսության լավագույն կթվորի հետ։ Նրա կովերը միջին հաշվով տվել են 3220 լիտր կաթ։ Նա աճեցրել է 215 հորթ առանց կորուստների և մի տարում վաստակեց ավելի քան 4000 ռուբլի։

Մարտունու շրջանը, վորտեղ գտնվում է մեր խորհտնտեսությունը, այս տարի շատ մեծ հաջողություններ է ձեռք բերել։ Յերկու տարի առաջ այդ շրջանը շատ յետ եր մնում իր աշխատանքների բոլոր ճյուղերում։ Վերջին տարիներս, շնորհիվ կուսակցության Յերկրային Կոմիտեյի և Անդրկովկասի բոլշեվիկների ղեկավար ընկ. Բերիայի ոպերատիվ ղեկավարության, Մարտունու շրջանն անցավ մեր Հանրապետության առաջավոր շրջանների շարքը։ Մեր մեքենա-տրակտորային կայանի գյուղատնտես ընկ. Կարապետյանը և այդ շրջանի կոլտնտեսային մի բրիգադիր բարձր բերքատվության համար պարգևատրվեցին Խորհրդային Միության շքանշաններով։

1935 թվականին շրջանը մեծ հաջողություններ ձեռք բերեց խոշոր յեղջերավոր անասունների բազմացման ասպարիզում. նրանց թիվն ավելացավ 22%-ով, վոչխարներինը՝ 34%-ով, խոզերինը՝ 200%-ով և ձիերինը՝ 18%-ով։

Մարտունու շրջանն անասնապահության ասպարիզում մրցում է Հյուսիսային Ոսեթիայի Որջոնիկիձեյի շրջանի հետ։ Վերջին

ստուգումը ցույց տվեց, որ մեր շրջանը հաղթող դուրս չեկավ այդ մրցության մեջ։

Անասնապահության ասպարիզում հաջողություններ կան ոչ միայն Մարտունու շրջանում, այլև ամբողջ Հայաստանում և Անդրկովկասում։ Ամբողջ հանրապետությունը մրցում է Հյուսիսային Օսեթիայի հետ։ Վերջին ստուգումը ցույց տվեց, որ Հայաստանը ոչ միայն կատարեց ու գերակատարեց անասնապահության զարգացման պետական պլանը, այլև հաղթող դուրս չեկավ Հյուսիսային Օսեթիայի հետ տեղի ունեցող մրցության մեջ (ծափահարություններ)։

Հայաստանի աշխատավորները վերջերս տոնեցին յերկրի խորհրդայնացման 15-ամյա տարեդարձը։ Այն բացառիկ ջերմ ընդունելությունը, որ ցույց տվին Հայաստանի աշխատավորների ներկայացուցիչներին մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինը և կառավարության անդամները, խանդավառության նոր ալիք բարձրացրեց և նոր յեռանդ ներշնչեց Հայաստանի աշխատավորությանը՝ պայքարելու առաջնորդի, կառավարության և կուսակցության բոլոր դիրեկտիվների ավելի հաջող կատարման համար։

Ցեռ պարտավորվում եմ այս տարի իմ 75 կովից յուրաքանչյուրի կաթնատվությունը հասցնել 4000 լիտրի։ Ցեռ պարտավորվում եմ մատղաշի վոչ մի կորուստ չունենալ այս տարի, այլ ավելի հաճախակի ծնի միջոցով ստանալ կովերի թվից ավելի հորթ։ 75 կովից մենք կտանք 90 հորթ։ Յուրաքանչյուր հորթի քաշի հավելումը մենք կհասցնենք որական 700 գրամի։

Կեցցե՛ մեծ առաջնորդ, մեր սիրելի ուսուցիչ և բարեկամ ընկեր Ստալինը (բուռն ծափահարություններ)։

Կեցցե՛ Խորհրդային կառավարության ղեկավար ընկեր Մոլոտովը

Կեցցե՛ Խորհրդային Միության ժողովուրդների բարեկամությունը (ծափահարություններ, «ուռռաներ»)։

Գրիգորի յելույթը հաջող դուրս չեկավ։ Ճառի ժամանակ նա կանգ չեր առնում, ճառը հարթ եր ընթանում։ Միայն յերկու անգամ նա նայեց իր թղթին։ Մեզանից վոմանք կարծում էին, որ Գրիգորի ճառն անբովանդակ կլինի, գուցե և կկարվի, կմոռանա, բոլորը չի ասի։ Բայց Գրիգորի հմտությունն այստեղ ևս յերևան յեկավ։ Նա առաջավոր հանդիսացավ ոչ միայն արտադրության մեջ, ոչ միայն բարձր կիթ ստանալու, լավ հորթեր աճեցնելու մեջ, այլև առաջավոր՝ յելույթների մեջ։

Դպրոցը և կոմյերիտական դաստիարակությունն ոգնեցին նրան կանոնավոր կերպով և յեռանդուն արտահայտել իր մտքերը։ Նա ավեց անասնապահության պատկերը ոչ միայն իր խորհտնտեսության մեջ, այլև շրջանում և նույնիսկ Հանրապետության մեջ։

Առանձնապես հիանում եր Գրիգորի յելույթով Յանբեխի Խորհտնտեսության դիրեկտոր՝ պատգամավոր Արտաշես Մուղնեցյանը։

— Տեսնում ես,—դարձավ նա ինձ,—թե ինչպիսի հիանալի տղա յենք դաստիարակել մեր խորհտնտեսության մեջ։ Իմ աշխատանքը քիչ չե այդ գործում. ափսոս միայն, որ Գրիգորի նման մանները առայժմ բավականաչափ շատ չեն մեր խորհտնտեսությունում։ Ա՛յ, յեթե մեզ մոտ բոլորն ել Գրիգորի նման լինեին, այդ դեպքում կարելի կլիներ պահանջել մեզանից 10,000 լիտր կաթ ամեն մի կովից։ Խորհտնտեսություն վերադառնալուց հետո հարկավոր է քաղաքաժնի հետ միասին մեծ աշխատանք ծավալել՝ նախապատրաստելու, դաստիարակելու և աճեցնելու համար նոր մարդիկ, անասնապահության նոր ստախանովականներ, և այն ժամանակ մենք անպայման բավականաչափ շատ Գրիգորներ կունենանք։

Հենց որ Գրիգորն ավարտեց իր ճառը, արագությամբ իջավ ամբիոնից և բարձրացավ նախագահության ամբիոնը. առաջինը սեղմեց ընկեր Ստալինի ձեռքը, որը մի ինչ-որ բան ասաց նրան, ապա սեղմեց Ստալինի կողքին նստած ընկեր Վորոշիլովի, ընկ. Մոլոտովի և մյուս ընկերների ձեռքերը։

Յերբ Գրիգորը վերադարձավ իր տեղը, պատգամավորները թափվեցին նրա վրա և սկսեցին հարցնել, թե ինչպես սեղմեց ընկեր Ստալինը նրա ձեռքը, և ինչ ասաց նրան։

— Ճիշտն ասած,—ասաց Գրիգորը,—յես չեմ հիշում, թե ինչպես կատարվեց այդ ամենը։ Այս ամենն ինձ յերազ է թվում։ Յես նույնիսկ այն ժամանակ, յերբ սեղմում եյի ընկեր Ստալինի ձեռքը, չեյի հավատում, որ դա հենց յես եմ, Գրիգորը՝ յերեկվա բատրակը, և վոչ մի ուրիշը, կանգնած ընկ. Ստալինի մոտ, մեր եպոխայի մեծագույն մարդու կողքին։ Ուրախությունից քիչ եր մնում ուշքս կորցնեյի։ Հիշում եմ միայն, որ ընկեր Ստալինը հարցրեց ինձ. «Ինչպե՞ս ես ապրում»։ Յես նրան պատասխանեցի—.«Շատ լավ, ընկեր Ստալին»։

Գրիգորի ելույթից հետո նրա ճառը թարգմանելու համար խոսք տրվեց ինձ։

Թարգմանելն այնքան էլ դժվար գործ չէ, յերբ լեզուն գիտես, բայց թարգմանել Կրեմլում, վորտեղ քեզ լսում են ժողովուրդների առաջնորդը, Քաղբյուրոյի համարյա բոլոր անդամները, 1500 առաջավոր և 2000 հյուր;—հեշտ չե։ Հանկարծ, կմոռանաս, թե ինչ պետք ե թարգմանես, կամ այն չես ասի, ինչ ասված ե յեղել ճառում։ Մի քիչ զգուշությամբ մոտեցա յես Նախագահությանը և ամբիոնը բարձրանալուց առաջ մի անգամ ևս շատ մոտիկից նայելով Նախագահության սեղանի քովը նստած ընկեր Ստալինին, սկսեցի թարգմանել։ Թարգմանելիս չեյի հուզվում, խոսում եյի բոլորովին հանգիստ։

Յեվ նոր միայն հասկացա, թե ինչու Գրիգորը, ինչպես և մյուս պատգամավորները, խոսելիս չեյին հուզվում։ ՎՀրն եր այդ գաղտնիքը։ Գաղտնիքը խորհրդակցության մեջ ստեղծված բարեկամական պայմաններն եյին, առաջնորդի սիրալիր վերաբերմունքը յուրաքանչյուր մի առաջավորին, նրա վերաբերմունքի պարզությունը պատգամավորների հետ, ճառերի ուշադիր ունկնդրությունն ու չափազանց դիպուկ և բովանդակալից ռեպլիկները—այդ բոլորը մեզանից ամեն մեկին ներշնչում եյին խրախուսանք, յեռանդ և անսահման սեր դեպի իր առաջնորդը, հայրենիքը և հանձնված գործը։

Դահլիճում մեծ աշխուժություն առաջացրեց իմ խոսքերը Զանգեզուրցի կոլտնտեսուհի Աշխեն Արզումանյանի մասին, վորը յերկու տարում 5 յերեխա յե ծնել։ Ինձ ասացին, վոր այդ ժամանակ ընկ. Մոլոտովը գլխով շարժումներ եր անում և սաստիկ ծափահարում, վորովհետև այդ յերևույթը վկայում ե մեր Մեծ Միության ժողովուրդների ուրախ և ունևոր կյանքի մասին։

ԱՅՎԱԶ ՄՈՒՍՏԱՖԱՅԵՎԻ ՔԵՖԸ ՏԵՂԸ ՉԵ

Նիստերից մեկի ընդմիջման ժամանակ մենք նկատեցինք, վոր մեր Այվազի տրամադրությունն առաջվանը չե, նա մի բանի մասին մտածում ե և մտահոգված ե։ Յերբ մենք հարցրինք պատճառը, նա միանգամից չպատասխանեց և ապա ասաց, թե խորհրդակցությունը վերջանում ե, իսկ ինքը դեռ ևս խոսք չի ստացել և, ամենայն հավանականությամբ, չի ստանա, վորովհետև յերրորդ որն ե, ինչ

խորհրդակցություն ե, և շատերն են յելույթ ունեցել, ու մի քիչ հետո ավելացրեց, վոր իրեն շքանշան էլ չեն տա, վորովհետև մեկը նրան ասել ե, թե շքանշան տալու յեն միայն նրանց, ովքեր յելույթ են ունեցել։

Պատգամավորները ծիծաղեցին և բացատրեցին նրան, վոր շքանշաններ տալու յեն աշխատանքի ցուցանիշների համար։

Յեթե քո ցուցանիշները հավանություն կստանան, դու էլ կունենաս շքանշան, այնպես վոր տխրելու կարիք չկա և դեռ հավանական ե, վոր խոսք տան քեզ։

— Ինչի՞ մասին ես դու խոսելու,—հարցրեց նրան ընկ. Գուրգեն Արզումանյանը (Հայաստանի Կենտկոմի հրահանգիչը)։

— Ինչի մասին վոր ուրիշներն են խոսում։ Յես նրանցից վատ չեմ խոսի, դուք իմ ջահելությանը մի նայեք։ Յես կոմյերիտական եմ, շատ անգամ եմ յելույթ ունեցել մեր կոլտնտեսությունում և վատ չեմ խոսել։

— Գուցե դու կասես մեզ, թե ինչ ես խոսելու,—պնդում եյին պատգամավորները։

— Կարող եմ ասել, միայն թուրքերեն։ Կսկսեմ այսպես. «Ընկերներ, թույլ տվեք ինձ Խորհրդային Հայաստանի Ամասիայի շքանշանի Գյոլլի գյուղի կոլտնտեսականների և կոլտնտեսուհի-ստախանովականների անունից հայտնել բոցավառ վողջույն մեր հորը, մեր առաջնորդին՝ ընկեր Ստալինին»։

Այստեղ նա կանգ առավ և ասաց.

— Բուրդա բիր շափալաղ ոլաջաղ (այստեղ ծափահարություն ե լինելու)։

— Իսկ դուցե չծափահարեն, ի՞նչ գիտես՞ դու,—վրա եյին տալիս պատգամավորները։

— Չե, անպատճառ կծափահարեն։ Հետո կասեմ այսպես. «Ընկերներ, յես 16 տարեկան եմ, յես խորհուրդների զավակն եմ, ծնվել եմ այն ժամանակ, յերբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիներն Անդրկովկասի պրոլետարիատի հետ միասին, Լենինի-Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, վռնդել եյին մեր ավերված յերկրից դաշնակներին և հաստատել եյին խորհրդային իշխանություն։ Ընկերներ, այժմ յես ապրում եմ ծաղկող, կուլտուրական, դպրոցների խիտ ցանցով ծածկված, գործարաններով, ֆաբրիկներով, բոլշևիկյան կոլտնտեսություններով ու խորհտնտեսություններով

լեցուն յերկրում։ Մեր հանրապետության մեջ հաղթանակում է Լենին-Ստալինյան ազգային քաղաքականությունը, այդ քաղաքականության որինակներից մեկն իմ ներկայությունն է այստեղ, այս խորհրդակցությանը։ Մինթե ձեզանից վորևե մեկը կարող եր մտածել, վոր դաշնակները կհամաձայնեյին վորպես իրենց ներկայացուցիչ Մոսկվա ուղարկել մի Թուրք յերեխայի։ Իհարկե՝ վոչ, վորովհետև դաշնակների ազգային քաղաքականությունը կայանում եր հենց յեղբայրասպան պատերազմի մեջ, հայերին Թուրքերի դեմ գրգռելու մեջ և վոչ թե Թուրքերի ազգային կուլտուրայի բարգավաճման մեջ։ Իսկ այժմ, ինչպես տեսնում եք, յես, Թուրքս՝ Այվազ Մուստաֆայեվս, ներկայացնում եմ Խորհրդային Հայաստանը և գտնվում եմ Կրեմլում՝ մեր սիրելի Ստալինի հետ միասին։

«Ընկերներ, մեր կոլտնտեսության մեջ կյանքը դարձել է ուրախ, մեր կոլտնտեսականներն սկսել են նոր տներ շինել, մահճակալներ, սամովարներ, պատեֆոններ գնել, անասուններ ձեռք բերել։ Մեզանում ամենքն արդեն կովեր ունեն, կազմակերպվել են ֆերմաներ։ Մեր կոլտնտեսությունը կազմակերպելիս մենք ունեյինք այստեղ ընդամենը 15 կով և 150 վոչխար, իսկ այժմ ունենք 415 գլուխ խոշոր յեղջերավոր անասուն և 1480 վոչխար։ Յուրաքանչյուր տընտեսությանն ընկնում է 25 վոչխար և 7 գլուխ խոշոր յեղջերավոր անասուն։

«Շնորհակալություն ընկեր Ստալինին՝ ունևոր, ուրախ կոլտնտեսային կյանքի համար։

«Շնորհակալություն ընկ. Միկոյանին, վոր մեր կոլտնտեսությունները լցրեց եժան բազմապիսի լայն սպառողական ապրանքներով։

«Ընկերներ, մեր կոլտնտեսությունը գտնվում է Տաճկաստանի սահմանի մոտ։ Մեր սահմանապահ զինվորները վոչ միայն պահպանում են մեր սահմանները, այլև մեզ շատ են ոգնում ավելի լավ աշխատելու։

«Շնորհակալություն ընկ. Վորոշիլովին՝ խիզախ սահմանապահներ դաստիարակելու համար։

«Կոլտնտեսության մեջ աշխատում եմ 1931 թվականից, 1933 թվականից աշխատում եմ վորպես հորթապահ։ 1933 թվականին մեծացրել եմ 60 հորթ, 1934 թվականին՝ 75 հորթ և 1935 թվականին՝ 94 հորթ առանց կորուստների, ընդամենը 229 հորթ, վորոնց որական աճը յեղել է 450 գրամ։

«Կոլտնտեսության մեջ աշխատելուս համար ստացել եմ 85 փութ հացահատիկ, $7^1/_2$ փութ պանիր և 2 փութ յուղ։ 450 ռուբլով գնել եմ մահճակալ և կառուցել եմ նոր տուն։ Մի քանի անգամ պարգևատրվել եմ։

«Բացի լավ աշխատանքից կոլտնտեսության մեջ, լավ սովորում եմ դպրոցում, վոր կառուցվել է խորհրդային իշխանության ժամանակ. ակտիվ մասնակցում եմ կոմյերիտական աշխատանքներին։

«Այդ բոլորը յես ձեռք եմ բերել շնորհիվ Լենինյան կոմյերիտմիության և կուսակցական կազմակերպությունների ոգնության, վորի գլուխ են կանգնած Անդրկովկասի լավագույն բոլշեվիկ ընկ. Բերիան։

«Պետք է ասեմ նաև, վոր մեր շրջանը Հյուսիսային Կովկասի յերկրի հետ ունեցած մրցման մեջ հաղթող է հանդիսացել։ Կատարել և գերակատարել ենք անասնապահության բոլոր պլանները։ 1935 թվականին խոշոր յեղջերավոր անասունների աճը յեղել է 19%, մանր անասուններինը՝ 22%, ձիերինը՝ 22,5% և խոզերինը՝ 84%։

«Ցեսխոստանում եմ ընկեր Ստալինին՝ վերադառնալուց հետո ավելի լավ խնամել հորթերին, յուրացնել իմ աշխատանքի տեխնիկան և 1936 թվականին մեր յերկրին տալ այն բոլոր 125 հորթերը վորոնք պիտի ծնվեն, բարձրացնելով նրանց քաշի որական միջին աճը մինչև 600 գրամի։

«Կեցցե՛ մեր սիրելի առաջնորդ ընկեր Ստալինը։

«Կեցցե՛ Կարմիր բանակի առաջնորդ ընկեր Վորոշիլովը»։

Շրջապատելով Այվազին՝ պատգամավորները մի տեսակ բնազդմամբ սկսեցին ծափահարել նրան, բարձրացրին ձեռքերի վրա, գովեցին լավ ճառի համար։ Այվազի տրամադրությունը լավացավ, և նա հույս ունենալով, վոր իրեն անպատճառ խոսք կտան, քանի վոր ինքն այդպես լավ խոսել գիտե, մեզ հետ ավտոբուս նստեց և գնաց Կրեմլ՝ խորհրդակցության։

ՁԻԱԲՈՒԾՆԵՐՆ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԵՆ

Մեր ձիաբուծները—Ներկարարյան Գրիգորը, Խաչատրյան Գրիգորը և Թաթոսյան Ոհանն անհանգստանում են։ Նրանք դժգոհ են, վոր ձիաբուծության զարգացման մասին քիչ է խոսվում։

— Ուղղակի զարմանալի բան է,— ասում է Խաչատրյան Գրիգորը,— ամեն ինչի մասին խոսում են, իսկ ձիաբուծության մասին հայտարյա չեն խոսում։ Ինչուն է բանը։ Չէ՞ որ ձիաբուծությունը, առանձնապես հիմա, արագ թափով զարգացող կոլտնտեսային գյուղատնտեսության և մեր հայրենիքի պաշտպանության համար բացառիկ նշանակություն է ստանում և, յեթե կուզեք՝ առաջնակարգ նշանակություն։ Մինչդեռ մեզ մոտ ձիաբուծության գործը լավ դրության մեջ չի գտնվում։ Բավական չի, որ վերակառուցման շրջանում մենք կորցրինք հսկայական թվով ձիեր։ Ներկայումս էլ ձիաբուծությունը զարգանում է կրիայի քայլերով, շատ դանդաղ։ Հսկայական թվով քուռակ է կորչում բացառապես զամբիկներին վատ խնամելու և դաղանաբար ոգտագործելու հետևանքով։ Քիչ չի պատահում, որ առանձին կոլտնտեսություններում 100 զամբիկից 90—100 քուռակի փոխարեն ընդամենն ստանում են 15—20 քուռակ։ Չէ՞ որ սա հանցագործություն է։ Այդ մասին պետք է այստեղ ասել և ձիաբուծության առաջավորների փորձի հիման վրա պետք է վոչ միայն խորհրդակցության պատգամավորների, այլև բոլոր կոլտնտեսականների, խորհտնտեսությունների բանվորների ուշադրությունը հրավիրել քուռակները խնամքով աճեցնելու և առանց կորստի պահելու, զամբիկները և ընդհանրապես բոլոր ձիերը լավ խնամելու խնդիրների վրա։ Ինչու՞ յես,— շարունակում է Գրիգորը,— կարողացա իմ բոլոր քուռակներին պահել, իսկ հարևան կոլտնտեսությունում քուռակների համարյա կեսը սատկեց։ Յեթե նրանք աշխատեին ինձ պես, նրանց քուռակներն էլ չեյին սատկի։ Իսկ չէ՞ որ իմ հաջողությունների գաղտնիքն այն է, որ յես իմ գործով ապրում եմ։ Յես սիրում եմ յուրաքանչյուր քուռակին, և յուրաքանչյուր քուռակ սիրում է ինձ։ Յերբ յես վորևե քուռակի անունը տալիս եմ, նա դադարում է արածելուց և վազում է ինձ մոտ։

— Այսոր ընդմիջման ժամանակ յես խոսում եյի ընկ. Բուդյոննու հետ, պատմեցի նրան մեր կոլտնտեսության ձիաբուծության և իմ հաջողությունների մասին. նա ինձ գովեց և ասաց, որ մեր ձիաբուծության մասին նրան զեկուցել են, նա շատ գոհ է, որ մեր կոլտնտեսությունում ձիերը գնահատվում են և այնտեղ պայքարում են ամրակազմ ձիու համար։ Ասաց նաև, որ պետք է ուշադրություն դարձնել ձիերի վորակի վրա, ցեղի վրա, լայնորեն ծավալել ձիաբուծության տոհմային գործը և առանց կորստի քուռակներ աճեցնելու փորձը տալ մյուս կոլտնտեսություններին։ Յես նրան խոսք տվի այդ ամենը կատարել։

— Իսկ գիտե՞ք, ընկերներ,— մեջ ընկավ Գրիգոր Ներկարարյանը,— յես էլ այսոր խոսեցի ընկ. Միկոյանի հետ։ Պատահեց այսպես. յերբ յես մեկնում եյի Մոսկվա՝ խորհրդակցության, մեր կոլտնտեսությունը, որ կրում է ընկ. Միկոյանի անունը, հանձնարարեց ինձ անձամբ տեսնվել ընկ. Միկոյանի հետ և զեկուցել նրան մեր կոլտնտեսության դրության մասին։ Ճիշտն ասած՝ չեյի յենթադրում որ շուտով նրան կտեսնեմ։ Ինքներդ գիտեք, թե նա ինչպիսի հսկայական աշխատանք է տանում։ Նրա յուրաքանչյուր րոպեն հաշված է։ Յես վորոշեցի նրան մի յերկտող գրել և ուղարկել նախագահության՝ մտածելով, որ այդպես ավելի հարմար է, վորովհետև խորհրդակցությունից դուրս հազիվ թե հնարավոր լիներ նրա հետ մանրամասն խոսել։ Յեվ ինչ, վորոշ ժամանակ անց, ինձ մոտենում է մի ընկեր և հայտնում, որ ինձ կանչում է ընկ. Միկոյանը։ Յես զգուշությամբ տեղիցս բարձրացա, վորպեսզի խորհրդակցությունը չխանգարեմ և այդ ընկերոջ ցուցումով հանդիսատ մտա նախագահության աջ կողմում գտնվող սենյակը։ Այդտեղ յես տեսա ընկ. Միկոյանին, վորին բարևեցի և մանրամասն զեկուցեցի մեր կոլտնտեսության, մեր պայմանների, կոլեկտիվացած տնտեսությունների թվի, աշխորերի, անասնապահության և ուրիշ աշխատանքների վիճակի մասին։ Ընկ. Միկոյանն ուշադրությամբ լսեց ինձ և տվեց մի շարք արժեքավոր խորհուրդներ, վորոնց մասին յես պետք է զեկուցեմ մեր վարչությանը և կոլտնտեսության անդամներին։

— Իսկ ձիաբուծության մասին ընկ. Միկոյանը քեզ հարցրեց։

— Իհարկե՝ հարցրեց, ամեն ինչի մասին մանրամասն հարցրեց։

— Տեսնում ես, Գրիգոր,— ասաց պատվիրակներից մեկը,— իսկ դու ասում ես թե ձիաբուծության մասին չեն խոսում, ձիաբուծությունը մոռացված է։ Նույնիսկ այնպիսի մի մարդ, ինչպիսին ընկ. Միկոյանն է, այնուամենայնիվ ժամանակ է գտել հետաքրքրվելու ձիաբուծության, նույնիսկ առանձին կոլտնտեսության ձիաբուծության վիճակով։ Իսկ դու շարունակ գանգատվում ես։ Յեվ հետո, ըստ իս, ճիշտ չի լինի ասել, որ խորհրդակցության մեջ ձիաբուծության հարցերը չեն լուսաբանվում կամ քիչ են լուսաբանվում։ Այդ դեպքում ինչի՞ մասին են խոսում Կաբարդինո-Բալկարիայի պատվիրակ Աբազովի յելույթները, ըստ որի նրանց կոլտնտ-

տեսությունում կա այնքան անասուն, որքան մեր ամբողջ շրջանում։ Մեկ մտածիր, նրանք ունեն 29335 գլուխ անասուն, որոնցից 1100 գլուխ ձի։ Հենց միայն գամբիկ ունեն 212 գլուխ, որոնցից ստացել են 211 քուռակ և բոլորին պահպանել են ու եկի խոստանում են անհրաժեշտության դեպքում մեր հերոսական Կարմիր հեծելազորի կարիքների համար միայն իրենց կոլտնտեսությունից հանձնել 600 գլուխ կաբարդինյան ցեղի ձի։ Միթե սա ձիու համար տարվող բոլշևիկյան պայքարի մի նմուշ չե։ Կասես, թե այդպիսի կոլտնտեսություններ դեռ քիչ կան։ Չեմ ժխտում, բայց ասա, մի՞թե մեզանից որևե մեկը կարող է կասկածել, որ վաղը կամ մյուս որը մենք կունենանք հազարավոր և տասնյակ հազարավոր այնպիսի կոլտնտեսություններ, ինչպիսին է Կաբարդինո-Բալկարիայի մարզի Բականսկի շրջանի Կիրովի անվան կոլտնտեսությունը, որտեղ աշխատում է Աբազովը։ Իսկ ընկ. Բուդյոննու յելույթը խորհրդակցությունում. չե՞ որ դա աշխատանքի մի ամբողջ ծրագիր է ոչ միայն ձիաբուծության, այլև ջրե-իշաբուծության և ուղտաբուծության վերաբերյալ։ Իսկ ձիաբուծության որքան առաջավորների անուններ թվեց նա զանազան հանրապետություններից ու յերկրներից, որոնք չեն ունեցել ոչ մի քուռակի անկում, որոնք հիանալի կերպով են դրել ձիաբուծության աշխատանքները։

— Համենայն դեպս մի՛ մոռանա,— ասաց Գրիգորը,— որ ընկ. Բուդյոննին իր յելույթում նշված հաջողությունների հետ միասին հայտարարեց, որ խորհրդակցությունում ձիաբուծության մասին շատ քիչ խոսեցին, որ ոչ ոք պետք յեղած ձևով ուղտաբուծությամբ չի զբաղվում, որի հետևանքով ուղտը, որ հակայական նշանակություն ունի ոչ միայն իբրև փոխադրող կենդանի, այլև տալիս է կաթ, բուրդ, մասամբ նույնիսկ միս, 1935 թվականին քչացել եր. ուղտերի թիվը կրճատվել եր։ Իսկ իշա-ջորաբուծության մասին նա նույնպես ասաց, որ այդ ճակատամասում դրությունը նույնպես լավ չե։ Հետևաբար յես իրավացի յեմ, յերբ ասում եմ, որ մենք դեռ ևս ձիաբուծությանը բավարար ուշադրություն չենք դարձրել և որ բոլորս պետք է ամուր կպչենք այդ գործին։

ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԸ

Խորհրդակցությունը վերջանալու վրա յեր։ Հայտարարված եր, որ այդ յերեկո Թույլ կտան արտահայտվելու ելի մի քանի ընկերոջ և դրանով ել կվերջացնեն։ Բոլորն անհամբեր սպասում եյին ընկեր Ստալինի յելույթին, բոլորը վառվում եյին նրա բերնից մի քանի խոսք լսելու ցանկությամբ։

Այդ յերեկո պատգամավորներն իրեց աչքը չեյին հեռացնում ընկ. Ստալինից. նրանք չեյին հաշտվում այն մտքի հետ, թե մի քանի ժամ հետո պետք է հրաժեշտ տան ընկ. Ստալինին և մեկնեն իրենց տեղերը։ Նրանք ցանկանում եյին ել ավելի շատ նայել ընկ. Ստալինին։ Նրանք հետևում եյին նրա յուրաքանչյուր շարժումին, հետևում եյին, թե նա ինչպես է սեղմում պատգամավորների ձեռները, հետևում եյին նրա խոսակցությանն ու բաց թողած ռեպլիկներին, թե նա ինչքան նրբազգաց է դեպի պատգամավորները, ինչպես պարզ է վերաբերվում իր զինակիցներին և ինչպես է սիրում յերեխաներին։ Այդ ամենից պատգամավորներն ստանում եյին նոր լիցք, նոր յեռանդ։

Պատգամավորների մեջ կային պատանիներ-պիոներներ։ Պատգամավորների հիշողության մեջ խիստ տպավորվեց մի դեպք, որ ցույց է տալիս ընկ. Ստալինի բացառիկ սերը դեպի յերեխաները։ Ընկ. Ստալինը տեսնելով պատգամավորների շարքում Միշա Կուլեշովին— Մոսկվայի մարզի Բելյայեվի շրջանի «Կրասնի լուչ» կոլտնտեսության հորթերի շեֆին և նրա հարևան պիոներ Վանյա Զուլկովին («Բեզբոժնիկ» կոլտնտեսությունից), կանչեց նրանց իր մոտ և գրկելով տղաներին՝ հարցրեց Կուլեշովին։

— Ցելույթ պետք է ունենամ։

Ապա ընկ. Ստալինը մոտեցավ ընկ. Ջերնովին, որ նախագահում եր, և խնդրեց ձայն տալ Կուլեշովին։

Կուլեշովը տրիբունի վրա չեր յերևում. այդ նկատելով՝ ընկ. Ստալինն առաջարկեց տրիբունի մոտ աթոռ դնել և նրան տալ գրաֆինով ջուր։

Կուլեշովին լսում եյին մեծ ուշադրությամբ։

Պատգամավորներն իրենց հիշողության մեջ շատ լավ են պահել նաև այս դեպքը։ Պատգամավորներից մեկը, կարծեմ՝ մի կազակ, դեռ

չեր վերջացրել իր զեկուցման առաջին խոսքերն ընկ. Վորոշիլովի հասցեին, վոր ընկ. Ստալինն առաջինը վերկացավ տեղից, բարձրացրեց ձեռքերը և սկսեց յերկար ժամանակ ծափահարել։ Ամբողջ դահլիճը հետևեց ընկ. Ստալինի օրինակին։

Պատահեց նաև այսպիսի դեպք. Նիստի ժամանակ նախագահություն մտան ընկ. Որջոնիկիձեն և ընկ. Լավրենտի Բերիան։ Ընկ. Ստալինը նրանց նկատելով՝ առաջինն ինքը բարևեց, ընդ վորում այդ նա արեց հասարակ ձևով, առանց վորևե ձևականության։ Ընկ. Ստալինը ներկա յեղավ խորհրդակցության բոլոր նիստերին, և ընդորոշ է այն, վոր նույնիսկ խորհրդակցության ժամանակ նա վոչ մի րոպե չեր կտրվում կուսակցական և պետական գործերից։

Նախագահությունում հատուկ սեղանի մոտ նստած եր մի ընկեր, վորն ամբողջ ժամանակ ընկ. Ստալինին թղթեր եր տալիս և նրանից ստանում ցուցումներ։

ԸՆԿ. ՅԱԿՈՎԼԵՎԻ ՅԵԼՈՒՅԹԸ

Վերջին խոսքը տրվեց ընկ. Յակովլեվին [Համ.Կ(բ)Կ Կենտկոմի գյուղբաժնի վարիչ], վորին պատգամավորները դիմավորեցին փոթորակալից ովացիայով։

Ընկ. Յակովլեվը տվեց մեր անասնապահության վիճակի փայլուն ու սպառիչ անալիզը։ Նա նշեց անասունների գլխաքանակի զգալի աճն ամբողջ Միության մեջ, այն հաջողությունները, վոր կան անասնապահական նշանավոր կադրերի աճեցման գործում՝ հանձինս անասնապահության առաջավորների, և այն խոշոր աշխատանքը, վոր կատարված է կովազրկության վերացման բնագավառում։ Դրա հետ միաժամանակ ընկ. Յակովլեվն առաջավորներին զգուշացնում եր չհանգստանալ, վորովհետև աշխատանքի մեջ դեռ շատ թերություններ կան։

«Մենք լենինյաններ չեյինք լինի, մենք ստալինյաններ չեյինք լինի, յեթե այդ լավ տվյալների հիման վրա ասեյինք. անասնապահության պրոբլեմը լուծված է, այժմ կարելի յե նաև քիչ հանգստանալ. մենք դեռևս լուրջ թերություններ ունենք անասնապահության վերաբերյալ աշխատանքների մեջ և այդ թերությունների մասին չի կարելի լռել, յեթե մենք ցանկանում ենք գործն առաջ մղել»։

Անասնապահության աշխատանքի հիմնական թերություններն ընկ. Յակովլեվը համարում եր տավարաբուծության, առանձնապես ձիաբուծության և վոչխարաբուծության հետ մնալը 1929 թվականի համեմատությամբ։

«Յուրաքանչյուր կոլտնտեսություն և խորհտնտեսություն, վոր արհամարհում է ձիերի ստեղծման և բուծման գործը, վնաս է հասցնում վոչ միայն իր տնտեսությանը, այլև պետության պաշտպանությանը։ Նշանակում է ձիերի բուծման գործին պետք է կպչել ավելի լուրջ, քան լինում եր մինչև հիմա»։

Իսկ վոչխարների մասին ընկ. Յակովլեվն ուղղակի հայտարարեց, վոր

«Մեր վոչխարաբուծությունն անթույլատրելի կերպով հետ է մնում, մինչդեռ վոչխարը պետությանն ու ձեզ՝ գյուղացիներիդ և գեղջկուհիներիդ անհրաժեշտ կենդանի յե. հո հավիտյան չթի հագուստով չպիտք է մնա գաք, ընկերներ, ժամանակն է ձմեռը հագնել մահուդե և բրդե հագուստ։ Իսկ դրա համար հարկավոր է ավելի շատ վոչխար բազմացնել»։

Թույլ է ընթանում կոլտնտեսականների կովազրկությունը վերացնելու գործը։

Կովազրկության վերացման գործում առանձնապես հետ են մնում Ուկրաինան, Ազով-Սևծովյան յերկիրը, Ուզբեկստանը։

«Մենք պետք է վերացնենք կովազրկությունը վոչ միայն ամբողջ ԽՍՀՄ-ում, այլև յուրաքանչյուր յերկրում, շրջանում, կոլտնտեսությունում. մենք պետք է այդ խնդիրը, ինչ գնով ել վոր լինի, լուծենք այս տարի»։

Այնուհետև ընկ. Յակովլեվը խոսում եր այն մասին, թե կոլտնտեսականի հասարակական շահերն իր անձնական շահերի հետ զուգադրելու սկզբունքն ամեն տեղ չեն յուրացրել և ամեն տեղ կյանքում չի կիրառվում։ Մի շարք յերկրների ու մարզերի օրինակներով նա պարզեց կոլտնտեսականի անհատական անասնապահության զարգացումը թերագնահատելու աղաղակող փաստերը։ Ազով-Սևծովյան յերկրում մինչդեռ ֆերմաներում կա մեկ միլիոն գլուխ հանրայնացված վոչխար, կոլտնտեսականների մոտ կա ընդամենը 79 հազար գլուխ վոչխար, այնպես, վոր յուրաքանչյուր տանն ընկնում է մի քանի գլուխ, այնինչ, ըստ կանոնադրության, կոլտնտեսականը պետք է ավելի շատ վոչխար ունենա.

«Ցենթադրենք,—ասում եր ընկ. Յակովլեվը պատգամավորներին, վոր գյուղացին պետք է տեղափոխի ծանր սայլ՝ բեռի հետ միասին։ Նա հնարավորություն ունի լծելու յերկու լավ ձի—հիմնականը

և կողքից լծվողը՝ ավելի թույլը։ Ցենթադրենք, որ ձիապանն այս կամ այն նկատառումով լծում է միայն հիմնական ձին, իսկ կողքից լծվողին թողնում է։ Ի՞նչ դուրս կգա։ Թե հիմնական ձին զորից կվատավի և թե սայլը տեղից չի շարժվի։ Եթե սայլն առաջ շարժվում էլ է, ապա ավելի դանդաղ, քան եթե երկու ձի լծած լինեին։ Նշանակում է՝ թե սայլը ժամանակին տեղ չի հասնի և թե ձին կարող է վատավել։ Պետք է ամբողջ թափով առաջ շարժել կոլտնտեսությունների հանրայնացված նախիրը և միաժամանակ ոգնել կոլտնտեսականներին անհատական ոգտագործման համար ձեռք բերել անասուններ այն նորմաներով, որոնք սահմանված են Գյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրությամբ յուրաքանչյուր շրջանի համար առանձին»։

Ընկ. Յակովլեվը թվական տվյալներով առանձնապես ընդգծեց անասունների մթերատվության բնագավառում հետ մնալը։ Անասնաբուծության առաջավորների որինակով—մեխանիզացիայի միջոցով լավացնելով անասունների ցեղը և բարձրացնելով անասունների մթերատվությունը, նա պահանջեց ոգնել նաև կոլտնտեսականների անհատական անասունների մեխանիզացմանը, կիրառել միլիոնավոր վոչխարների վրա ստուգված արհեստական սերմնավորման մեթոդը, կազմակերպել առհասարակ արտադրողների որինակելի ոգտագործումը։ Այնուհետև ընկ. Յակովլեվը նշեց անասնաբուժական աշխատանքի հետ մնալը խորհրդային աշխատանքի բոլոր ճյուղերից, որի հետևանքով անասունների խոշոր կորուստ է լինում։ Նա խոսեց անասնաբուժների պակասության, կրտսեր անասնաբուժների և անասնապահական կադրերի պակասության մասին և պահանջեց անմիջապես զբաղվել կադրերի պատրաստման խնդրով։

Պետք է մշակել տեխնիկական մինիմում, ինչպես այդ արված է արդյունաբերության մեջ։

Պետք է ավելի լավ դնել ուսուցման գործը դպրոցներում և դասընթացներում, ապահովել դպրոցները համապատասխան գրքերով և վորակյալ դասախոսներով։ Իր փայլուն զեկուցման վերջում, զեկուցում, որ հանդիսանում է անասնապահության համար մշակվող պայքարի նոր՝ իսկական ծրագիր, նրա հետագա էլ ավելի բուռն աճի համար, և որը բազմաթիվ անգամ փոթորկալից ծափահարություններով ընդհատում էին առաջավորները, ընկ. Յակովլեվը հաղորդեց, որ ընկ. Ստալինի առաջարկությամբ յերկրի լավագույն անասնապահները ներկայացվում են ամենաբարձր պարգևի՝ Միության շքանշանների։

Խորհրդակցությունը փակվելուց հետո պատգամավորները դեռ շատ յերկար ժամանակ կանգնած ծափահարում էին առաջնորդին և իր զինակիցներին։

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՆԱՍՆԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՎ

Յերկու որ հետո պատգամավորները նորից գնացին Կրեմլ։ Նրանցից ամեն մեկը մոտենում եր Միության Կենտգործկոմի նախագահության սեղանին և Միխաիլ Իվանովիչ Կալինինից շքանշան ստանում։

Միխաիլ Իվանովիչը շքանշանը հանձնելիս յուրաքանչյուր ստացողին անպայման ձեռք եր տալիս և ջերմ խոսքեր եր ասում։

Պատգամավորները հիացած էին։ Նրանք հիանալի կերպով հասկանում էին, որ շքանշանը տրվում է վոչ միայն արդեն կատարած աշխատանքի համար, այլև վաղվա կատարելիք մեծ աշխատանքի համար։ Պետք է ինչ գնով էլ լինի արդարացնել շքանշանը, արդարացնել խորհրդային պետության բարձր պարգևը։ Նրանցից յուրաքանչյուրը մտքում արդեն պատկերացնում եր այն աշխատանքը, որ նա պետք է կատարի կոլտնտեսություն կամ խորհտնտեսություն վերադառնալուց հետո։

Մեր պատգամավորները, բացառությամբ պատգամավոր կով կթող - հորթապահ Վարվառե Սոֆյանի (Ախտայի շրջանի «Կարմիր հովիտ» կոլտնտեսությունից), պարգևատրվեցին շքանշաններով։

Լենինի շքանշանով պարգևատրվեց միայն Ցանրլիի խորհտնտեսության բրիգադիր Խաչատրյան Գրիգորը։

«Աշխատանքի կարմիր դրոշ»-ի շքանշաններով պարգևատրվեցին.

Սարգիսջանյան Արմենակը
Բաղալյան Սմբատը
Դանիլովա Աննան
Մուստաֆայեվ Այվազը
Ներկարարյան Գրիգորը
Նալբանդյան Լեվոնը

Խաչատրյան Գրիգորը—Համազասպանի կոլտնտեսության ֆիզբուծական ֆերմայի վարիչ։

«Պատվո նշան» շքանշանով պարգևատրվեցին.

Մուղնեցյան Արտաշեսը
Բուղայան Գուրգենը
Խուդոյեվ Խանաթը
Ոսոյան Տիրուհին,
Թադեվոսյան Ոհանը
Ավետիսյան Սաֆարը
Պողոսյան Աբրահամը։

Վարվառե Սոֆյանը շքանշան չստացավ, վորովհետև նրա ցուցանիշները ցածր եյին թե կիթերի և թե աճեցրած հորթերի թվի տեսակետից։ Նա կթել եր ընդամենը 12 կով, վորոնցից 1935 թվականին ստացել եր միջին հաշվով 1500 լիտր կաթ և աճեցրել եր 12 հորթ, մինչդեռ շքանշանով պարգևատրելու համար պահանջվում եր, վոր յուրաքանչյուր կովի կիթը լինի վոչ պակաս, քան 3000 լիտր կաթ, կամ յեթե նա հորթ պահող ե, պահած-մեծացրած լինի վոչ պակաս քան 110 հորթ։

Սակայն Վարվառեն չվիրավորվեց, նա վճռեց վերադառնալուց հետո անպայման կրկնապատկել և յեռապատկել իր կովերի կիթերը և ամեն գնով արժանանալ շքանշանի։

Շքանշանները ստանալուց հետո պատգամավորները կրեմլում նկարվեցին կուսակցության ու կառավարության ղեկավարների հետ, յեղան ընկ. Միկոյանի և Լյուբիմովի կազմակերպած բանկետներում, նրանցից ստացան նվերներ։

Պատգամավորներն շտապում եյին տուն վերադառնալ։ Նրանք ցանկանում եյին տեսնել կոլտնտեսականներին, իրենց հարազատներին, պատմել կուտակված հսկայական տպավորությունները, բոլոր տեսածները, իսկ գլխավորը, պատմել մեր առաջնորդի մասին, անսանապահության առաջավորների մասին և իրենց կատարելիք խոշոր աշխատանքի մասին, վորի մասին խորհրդակցության մեջ խոսեցին ընկ. Յակովլևը և ուրիշ յելույթ ունեցող ընկերներ։

ԱՆԳԻԿՈՎԿԱՍԻ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ԱՆԱՄՆԱՊԱՀՆԵՐԸ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ

ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐԸ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՆ ԿՆՔՈՒՄ

Գնացքում պատգամավոր Արմենակ Սարգիսջանյանն առաջարկություն մտցրեց սոցիալիստական մրցակցության պայմանագիր կնքել Անդրկովկասի շքանշանակիր անասնապահների միջև։

Գնացքում նրանք 50 հոգի էին։

Առաջարկությունն ընդունվեց։ Առաջինը պայմանագիր կնքեց Սարգիսջանյանը։ Նա իր վրա պարտավորություն վերցրեց ստախանովյան 1936 թվականի ընթացքում կատարել հետևյալը. 100 մաքուց յերկու ծին կազմակերպելու և յերկվորյակներ ստանալու միջոցով տարվա վերջին ստանալ 230 գառ։

Յուրաքանչյուր վոչխարից ստացվող բրդի քանակը հասցնել մինչև 3 կգ, 230 կովից, խտացրած ծին կազմակերպելու միջոցով, տարվա վերջին ստանալ և պահպանել 240 հորթ։ Մի կովի կիթը ֆերմայում հասցնել մինչև 2000 լորի, 100 զամբիկից ստանալ և պահպանել մինչև տարվա վերջը 100 քուռակ։ Կոլտնտեսությունում յեղած բոլոր զամբիկներին բոլորովին ազատել աշխատանքից։

Սարգիսջանյանը մրցակցության հրավիրեց հին Գորիսի կոլտնտեսության ՎԱՖ-ի բրիգադիր Սմբատ Բաղալյանին՝ պարգևատրված Աշխատանքի շքանշանով, Ադր. ԽՍՀ-ի Լաչինի շրջանի Ղարաքեշիշ գյուղի կոլտնտեսության ՎԱՖ-ի վարիչ՝ շքանշանակիր Ակպեր Զումշուդովին, Ադր. ԽՍՀ-ի Խիզիի շրջանի Շարաբադ գյուղի կոլտնտեսության ՎԱՖ-ի վարիչ՝ շքանշանակիր Բաբա Նաղի Զաղեյին, Ադր. ԽՍՀ-ի Նարիմանովի շրջանի Վ. Դաշքեսան կոլտնտեսության նախագահ՝ շքանշանակիր Առաքելյան Գրիգորին, Վրաստանի ԽՍՀ Բորչալուի շրջանի Գեսալի գյուղի կոլտնտեսության ՎԱՖ-ի վարիչ՝ շքանշանակիր Ալի Մուստաֆա ողլուն։

Մրցահրավերն ընդունվեց։

Նման պայմանագրեր կնքել են իրար հետ նաև Անդրկովկասի մյուս շքանշանակիրները։

* * *

Յերբ գնացքը կանգ առավ Բագվի կայարանում, մենք հրաժեշտ տվինք Աղրբեջանի պատգամավորներին, իսկ Թբիլիսիում՝ Վրաս-

տանի պատգամավորներին։ Ցերկու դեպքում էլ տեղի ունեցան թռուցիկ միտինգներ և յելույթ ունեցան Անդրկովկասի հանրապետությունների պատգամավորներն ու Ադրբեջանի և Վրաստանի պատգամավորությունների ղեկավարներ՝ ընկ. ընկ. Փոլատ Զադեն և Գվարամիան։ Դրանից հետո մեր գնացքը շարժվեց դեպի Ցերևան։

ԾՔԱՆԾԱՆԱԿԻՐՆԵՐԻ ԴԻՄԱՎՈՐՈՒՄԸ ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

Կայարանը լիքն եր կուսակցական և խորհրդային կազմակերպությունների ներկայացուցիչներով, վորոնք յեկել եյին դիմավորելու շքանշանակիրներին։ Նրանց մեջ եր ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկ. Ամատունին, Գյուղբաժնի վարիչ ընկ. Ցենգիբարյանը և Հողժողկոմ ընկ. Մամիկոնյանը։

Տեղի ունեցավ միտինգ, վորտեղ վողջույնի ջերմ ճառով հանդես յեկավ ընկ. Ցենգիբարյանը և հույս հայտնեց, վոր միանգամայն արժանի այն պարգևը, վորին մեր բանվորա-գյուղացիական կառավարությունը արժանացրել է անանապահության առաջավորներին, մեծ խթան կհանդիսանա անանապահության արագ զարգացման, նոր և նոր ստախանովյան անանապահներ աճեցնելու համար։

Միտինգից հետո շքանշանակիրները հրավիրվեցին Կենտկոմ, վորտեղ կուսակցության ղեկավարների հետ փոխանակեցին իրենց տպավորությունները և նրանցից յուրաքանչյուրն իր վրա վերցրեց կոնկրետ պարտավորություն և հատատ խոսք տվեց Կենտրոնական Կոմիտեին՝ անպայման կատարել իր խոստումը։

Ա.ՆԱՍՆԱՊԱՀ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐԻ ԽՈՍՔԸ

Իսկ ինչ պարտավորություններ վերցրին իրենց վրա շքանշանակիրները և ինչի մասին նրանք խոսեցին Կենտկոմում։

Գրիգոր Խաչատրյան.—Մեծ բախտ վիճակվեց ինձ. յես ստացա Խորհրդային Միության ամենաբարձր պարգևը՝ Լենինի շքանշան։ Այդ յես ստացա նրա համար, վոր իմ բրիգադում կովերի միջին

կաթնատվությունը հասցրի 3012 կիլոյի, մատղաշի և մեծ անասունի վոչ մի կորուստ չունեցա։ Այդքան կաթը յես ստացա այն կովերից, վորոնք 9 ցենտներից ավելի կաթ չեն տվել։ Դրան յես հասա անասուններին ցույց տված լավ և հոգատար խնամքի միջոցով։

Լավ խնամքն այն արդյունքն ունեցավ, վոր իմ բրիգադի կովերից 15-ը տարվա ընթացքում յերկու անգամ ծնեցին և ունեցան առողջ, կայտառ և թմբլիկ հորթեր։ Անցյալ տարի իմ բրիգադում ծնեցին 75 կով, վորոնք տվին 90 հորթ։

Մեծ պարտք ունեմ այժմ։ Ցերը սեղմեցի մարդկության մեծ առաջնորդ ընկ. Ստալինի ձեռքը, խոսք տվի սիրելի ղեկավարին, վոր այս տարի յուրաքանչյուր կովի միջին կաթնատվությունն իմ բրիգադում կհասցնեմ 40 ցենտների, իսկ հորթերի որական աճը՝ 700 գրամի—անցյալ տարվա 600 գրամի և նախատեսված 500 գրամի փոխարեն։ Այս տարի ևս 75 կովից պետք է ստանամ 90 հորթ։

Տիրունի Ոսոյան.—Յես մի խեղճ, այրի կին եյի։ Հետո խորհտնտեսության մեջ աշխատանքի անցա։ Այժմ այնտեղ ինձ հետ է աշխատում իմ աղջիկը, մի յերեխաս էլ սովորում է, իսկ բոլորից մեծ տղաս Կարմիր բանակ է գնացել։

Այսպես, այժմ, շնորհիվ մեր խորհրդային իշխանության, մեր կոմունիստական կուսակցության, յես շատ լավ եմ։ 17 կով եմ կթել անցյալ տարի, 17 հորթ եմ խնամել ու հանձնել, ամեն մի կովից 3012 կիլո կաթ եմ ստացել, իսկ հորթերից ամեն մեկի քաշն որական ավելացրել եմ 500 գրամով, նախատեսված 400 գրամի փոխարեն։ Այս տարի պետք է կթեմ 18 կով։ Վորպեսզի պարզերես դուրս գամ մեր կառավարության, մեր հարազատ Ստալինի առաջ յես խոսք եմ տալիս կովերի միջին կաթնատվությունը 4000 կիլոյի հասցնել, իսկ հորթերի որական միջին աճը՝ 700 գրամի։ Այս խոստումը յես կկատարեմ։

Կենտկոմի քարտուղար ընկ. Ամատունու հարցին՝ «Պատմիր Մոսկվայի մասին», Տիրունին շարունակեց.—Գնացինք Մոսկվա. ինչ Մոսկվա, յերազ եմ տեսել. ինչ կարող եմ պատմել...

Խանդ Խուդոյան.—Անցյալ տարի իմ խնամած կովերից յուրաքանչյուրը 3139 կիլո կաթ տվեց։ Ցես կովերը կթում եմ որական յերեք անգամ։ Դա նպաստում է կաթնատվության բարձրացմանը։ Ունեմ մի քանի խալաթ։ Մաքրելու ժամանակ մի խալաթ եմ հագնում, կթելիս՝ մի այլ խալաթ, և այլն։ Յուրաքանչյուր կով կթելուց առաջ ձեռները լվանում եմ։ Ցես կովերից ստանում եմ մաքուր, բարձրորակ կաթ։

Մոսկվայում շքանշան ստանալիս պարտավորվեցի այս տարի ամեն մի կովից ստանալ 4000 կիլո կաթ։

Սմբատ Բաղայան.—Առաջավոր անասնապահների խորհրդակցությանը գնացի նրա համար, վոր անցյալ տարի յես փայլուն ցուցանիշների հասա։ Անցյալ տարի յես իմ բրիգադում 39 վոչխարից 84 գառ ստացա։

Մոսկվայում ընկ. Ստալինի առաջ պարտավորվեցի յուրաքանչյուր 100 մայր վոչխարից 230 գառ ստանալ։ Պարտավորվեցի նաև հաջող անցկացնել 227 կովի և 34 մատակի ծինը։

Գրիգոր Խաչատրյան.—1935 թ. 20 դամբիկից ստացա 19 մորուկ։ Հոգատար խնամքի շնորհիվ բոլոր մորուկներն էլ լավ դաստիարակվեցան և այժմ նրանք մի-մի նժույգներ են կարծես։ Դամբիկները բեղմնավորելու համար յես ամեն տարի «ՁԱԳ» ամտեսությունից անգլիական ցեղի հովտակ եմ բերել։

Այս տարի էլ վոչ մի մորուկի և ձիու կորուստ չենք ունենա։ Մոսկվայում, յերբ սեղմեցի Խորհրդային Միության մարշալ ընկ. Բուդյոննու ձեռքը, այն ժամանակ ասացի.

— Կարմիր բանակին կտամ անգլիական ցեղի լավ նժույգներ։

Գուրգեն Բուդյան.—Առաջավոր անասնապահների Համամիութենական խորհրդակցությունը վոչ միայն շատ բան ավելացրեց իմ գիտեցածի ու փորձի վրա, այլև նա հեղաշրջեց անասունների աճման և կաթնատվության բարձրացման մասին իմ սովորած «անխախտ» ֆորմուլները։ Սովորել եյի յես, վոր 100 ձիուց յեթե 60 մորուկ ստացվի, ապա դա նորմալ է. նորմալ եր համարվում նաև, յեթե 100 վոչխարից 80 գառ ստացվեր։ Բայց այժմ ծիծաղել կարելի յե այդ նորմաների վրա։ Ցես պարտավորվում եմ այնպես աշխատել, վոր մեր շրջանում յուրաքանչյուր 100 վոչխարից 120 գառ ստացվի, յուրաքանչյուր 100 ձիուց՝ 90 մորուկ և այլն։

Այվազ Մուստաֆայեվ.—Դեռ 16 տարեկան եմ յես։ Ծնվեցի այն որերին, յերբ Խորհրդային Ռուսաստանի ոգնությամբ մեր յերկրից դուրս քշվեցին դաշնակները։ Աչքս բաց եմ արել և տեսել եմ Խորհրդային արև, Խորհրդային որեր։

Ցեռ խնամում եմ մեր կոլտնտեսության ֆերմայի հորթերը։ Անցյալ տարի 94 հորթ եմ խնամում, իսկ այս տարի պետք է խնամեմ 125 հորթ։

Մեզ մոտ, ֆերմայում, մենք ուշքի լույսի նման ենք խնամում անասունները։ Կոլտնտեսությունը կազմակերպելուց հետո շատ ենք հարստացել։ Սկզբում ֆերմայում յեղած 25 կովի փոխարեն այժմ 148 կով ունենք, 75 վոչխարի փոխարեն՝ 1480 վոչխար։

Այս տարի յես այնպես կկազմակերպեմ հորթերի արոտը, վոր նրանց յուրաքանչյուրի որական աճը 500 գրամից պակաս չլինի։

Աննա Դանիլովա։ — Խորտնտեսությունում յես կթում եմ 17 կով, յուրաքանչյուրից անցյալ տարի 3320-ական կիլո կաթ ստացա։ Այնտեղ, Մոսկվայում յես լսեցի մեր Միության առաջավոր կթվորների խոսքը։ Նրանք ինձ շատ բան սովորեցրին։ Այնտեղ զգացի, վոր իմ ստացած կաթը դեռ քիչ է։ Այժմ յես վորոշել եմ ավելի յեռանդով գործի կպչել։ Վոչ միայն կաշխատեմ ամեն մի կովից ստանալ 4500 կիլո կաթ, այլև կոգնեմ և կսովորեցնեմ իմ ընկեր կթվորներին, վոր նրանք ել նույնքան կաթ ստանան։

Լեվոն Նալբանդյան։—Իմ բրիգադի կովերի միջին կաթնատվությունն անցյալ տարի 16,5 ցենտների հասավ։ Տեղական փոքրիկ կովերի համար այս թիվը խոշոր թիվ է։ Բայց իմ բրիգադում կա նաև 40 կով, վորոնց կաթնատվությունը շատ բարձր է։ Այդ կովերից յուրաքանչյուրն անցյալ տարի տվեց 3030 կիլո կաթ։ Կովերը ջրում ենք հենց գոմում։

Այս տարի յես բոլոր կովերի միջին կաթնատվությունը կհասցնեմ 20 ցենտների, հորթերի միջին քաշը՝ 6 ամսական հասակում 150 կիլոյի, անցյալ տարվա 130 կիլոյի փոխարեն։ Անցյալ տարվա մեր հորթերից մեկը՝ «Լոքոն» 10 ամսական հասակում կշռում եր 362 կիլո։ Ցեռ խոսք եմ տալիս աճեցնել այդպիսի շատ հորթեր։

ԾՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ

Կենտկոմում յելույթներ ունեցան նայեվ մյուս շքանշանակիրները։—Նրանք իրենց գործը Յերեվանում վերջացրին մի ընդարձակ նամակ ուղղելով Խորհրդային Հայաստանի բոլոր անասնապահ կոլտնտեսականներին յեվ անասնապահական խորհտնտեսությունների բանվորներին։

Իրենց նամակում շքանշանակիրները գրել եյին.

ՍԻՐԵԼԻ՝ ԸՆԿԵՐՆԵՐ

Մենք յեղանք Մոսկվայում, մասնակցեցինք մեր մեծ հայրենիքի անասնաբուծության լավագույն մարդկանց Համամիութենական խորհրդակցությանը։ Այնտեղ լսեցինք մեր կուսակցության ու կառավարության ղեկավարների խոսքը՝ յերկրի անասնաբուծության ներկա դրության և մեր նոր, շատ մեծ անելիքների մասին։ Այնտեղ խոսեցին մեր յերկրի բոլոր կողմերից յեկած պատգամավորները։ Յեվ ահա մենք վերադարձել ենք այդ խորհրդակցությունից, զինված նոր, հարուստ փորձով, լցված նոր յեռանդով։

Մոսկվայում, Լենինի շքանշանով պարգևատրված ընկ. Գրիգոր Խաչատրյանի բերանով, Հայաստանի բոլոր անասնապահների անունից մենք խոստացանք մեր հարազատ կոմունիստական կուսակցությանն ու կառավարությանը, վոր 1936թ. դարձնելու յենք անասնաբուծության նոր վերելքի տարի։

Ի՞նչ պետք է անել դրա համար։ Կովերի կաթնատվության բարձրացումը մեր պատվի գործն է։ Վոչ միայն ազնվացեղ, այլև տեղական կովերից հնարավոր է ստանալ ավելի շատ կաթ, քան մինչև հիմա ստացել ենք։ այդ կախված է լավ խնամքից ու կերակրելուց, ինչպես ցույց է տալիս Ուզունլարի ֆերմայի որինակը,

վորտեղ տեղական ամեն մի կովից 16,5 ցենտներ կաթ է ստացվել։ Այդպիսի ֆերմաներ կան նաև ուրիշ կոլտնտեսություններում։

Հենց լավ և հոգատար խնամքի շնորհիվ եր, վոր Ցանելիի խորհտնտեսության Լենինի շքանշանակիր Գրիգոր Խաչատրյանի բրիգադի 75 կովն անցյալ տարի 90 հոբթ տվեց, իսկ ամեն մի տեղական կովից 30 ցենտներ կաթ ստացվեց։

Գորիսի շրջանի Բռունի գյուղի կոլտնտեսության ֆերման վոչխարների յերկու ծին կազմակերպելու միջոցով մի տարվա մեջ յուրաքանչյուր հարյուր վոչխարից 215 գառ ստացավ։ Նույնպիսի ցուցանիշներ ձեռք բերեց նաև հին Գորիսի վոչխարաբուծական ֆերման։ Ահա ինչու Բռունի կոլտնտեսության նախագահ ընկեր Արմենակ Սարգիսյանը, Հին Գորիսի ֆերմայի վարիչ ընկեր Սմբատ Բաղալյանն արժանացան Խորհրդային Միության մեծ պարգևին՝ Աշխատանքի կարմիր դրոշի շքանշանի։

Վոչխարը մեր պայմաններում 2 ծին կարող է տալ և պետք է տա։

Մենք կոչ ենք անում ձեզ, վոչխարաբուծության ասպարիզում աշխատողներիդ, այս տարվանից կազմակերպել յերկու ծնի գործը։ Մենք հավատացած ենք, վոր դրանից խոշոր արդյունք կստացվի։

Մենք մի վատ սովորություն ունենք. այդ այն է, վոր մենք վոչխարը տարին մեկ անգամ խուզում և քիչ բուրդ ենք ստանում։

Պետք է վոչխարը խուզել տարին յերկու անգամ, ինչպես այդ անում է Մարտունու շրջանի Զոլաքարի վոչխարաբուծական ֆերմայի վարիչ՝ կոլտնտեսականների Համամիութենական յերկրորդ համագումարի պատգամավոր Համբարձում Սահակյանը, և ինչպես այդ անում են մի շարք առաջավոր ֆերմաներում ու շրջաններում։ Մենք պետք է ազնվացնենք անասունների ցեղը։ Դրա համար պետք է լայն կերպով կազմակերպենք մետիզացիան։

Կովերի բեղմնավորումը պետք է կազմակերպել ծնելուց մի ամիս հետո, չսպասելով հուլիս-օգոստոսին. լրիվ բեռնվածությամբ պետք է օգտագործվեն խոշոր յեղջերավոր անասունների գծով՝ «Շվից», «Սիմենտալ», վոչխարների գծով՝ «Կարակուլ», «Մերինոս» ցեղի արտադրողները, ինչպես նաև խոզաբուծության գծով անգլիական վարազները։ Այս տարի ճշտորեն պետք է կիրառել արհեստական բեղմնավորումը, լրիվ օգտագործելով ազնվացեղ և զտարյուն

արտադրողները, վորի միջոցով մենք կարող կլինենք առաջիկա 1—2 տարում մեր տեղական անասունները դարձնել ազնվացեղ անասուններ։

Ընկերներ, առանց կերի ամուր բազայի հնարավոր չե հասնել զարգացած, կուլտուրական անասնաբուծության։ Մենք չպետք է միայն բավարարվենք խոտհարքներն ու արոտները բարելավելով, այլև պետք է ստեղծենք սեփական խոտասերմերի բազա։ Այդ ասպարիզում դրական գործ են կատարել Լենինականի շրջանի Փ.-Ղարաքիլիսայի, Սիսիանի շրջանի Աղքենդի, Ախտայի շրջանի Աթաբեկյանի, Թալինի շրջանի Աշնակի, Ղրմզլուի, Ադիամանի կոլտնտեսությունները, վորոնք սեփական ցանքից ստացել են հեկտարից 8—9 ցենտներ կոբրնգանի սերմացու։ Մենք բոլորս պետք է հետևենք նրանց. մենք պետք է ավելի շատ խոտասերմեր և արմատապտուղներ ցանենք։ Դրանով կխթանենք մեր անասնաբուծության զարգացման գործը։

Մի շարք կոլտնտեսություններում դեռևս լծում են գամբիկներին. դա անթույլատրելի յե։ Պետք է անմիջապես աշխատանքից ազատել բոլոր գամբիկներին։

Մեր գլխավոր խնդիրներից մեկն ել կովազրկության խպառ վերացումն է։ Ինչպես գիտենք, այդ հարցն անասնապահների խորհրդակցությունում նորից իր ամբողջ սրությամբ դրեց ընկ. Յակովլեվը։ Անցյալ տարի մեր հանրապետության մեջ վերացվեց 20 հազար կոլտնտեսականի կովազրկությունը, բայց այժմ մենք դեռևս բավականաչափ կովազուրկ կոլտնտեսականներ ունենք։

Այդ գործում առանձնապես հետ են մնում մի շարք շրջաններ, ինչպես, որինակ՝ Աշտարակի, Արթիկի, Լենինականի, Հոկտեմբերյանի, Միկոյանի, Ղամարլվի, Շամշադինի, Վեդու շրջանները։ Ինչ ել վոր լինի, պետք է այս տարի վերացնենք նրանց կովազրկությունը և պետք է աշխատենք, վոր մեր կոլտնտեսականներն անպայման ունենան կոլտնտեսության ստալինյան կանոնադրությամբ սահմանված քանակի վոչխար, խոզ, թռչուն, ձի, մեղու և այլն։

Մեղ մոտ սկսվել է մասսայական ծինը։ Սակայն ծնի առաջին իսկ որերին նկատվեցին խոշոր թերություններ։ Մեղրու շրջանում 90 վոչխար վիժել են, Ղարաղալայում մատղաշի կորստի տոկոսը 15-ի յե հասնում, Լոռու տոհմային խորհտնտեսությունում՝ 10%-ի, Ստեփանավանի Կալինինո ֆերմայում՝ 8%-ի, Թալինում հոբթերի կորստի %-ը 11 է, Կոտայքում՝ 6—3, Ալլահվերդում սատկել է

նորածին խոճկորների 12%-ը, և այլն։ Այս ամենը նրանից է, որ այդ վայրերում պահանջվող խնամք և հոգատարություն ցույց չեն տալիս անասունների հանդեպ։ Մեղրում վոչխարները վիժել են նրա համար, որ նրանց կերակրել են ցրտահար յեղած և փտած խոտով։

Մեծ առաջնորդ ընկեր Ստալինին տված մեր խոստումը գործի վերածելու համար մենք պետք է անհապաղ արմատախիլ անենք նման թերությունները, գուրգուրանքով պահպանենք յուրաքանչյուր մատղաշը, ռացիոնալ կերակրումով բարձրացնենք կովերի կաթնատվությունը։

Յեկեք, ընկերներ, յեռանդով գործի կպչենք, զինվենք զոոտեխնիկական գիտելիքներով, ավելի շատ սիրենք մեր գործը, և այն ժամանակ մեր խոստումը գործ կդառնա, այն ժամանակ մենք 1936 թ. իսկապես կդարձնենք անասնաբուծության հզոր վերելքի տարի։

ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐՆ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱԼԻՔ ԲԱՐՁՐԱՅՐԻՆ

Անասնապահության առաջավորների խորհրդակցությունը, մեր պատգամավորների պարգևատրումը Միության շքանշաններով, նրանց նամակը Հայաստանի կոլտնտեսականներին և անասնապահական խորհնտեսությունների բանվորներին, այլև կոլտնտեսություններում նրանց տարած խոշոր մասսայական աշխատանքն ալեկոծեցին կոլտնտեսականների ամենալայն մասսաները և նրանց պայքարի մղեցին սոցիալիստական անասնապահության վերելքի համար։ Շքանշանակիրները կոլտնտեսականների առաջ բաց արին աշխատանքի ստախանովյան մեթոդի «գաղտնիքը»։ Պարզվեց, որ դրա համար անհրաժեշտ է գործին վերաբերվել բարեխղճորեն և սիրել այն, պետք է իմանալ իր գործի տեխնիկան, ճիշտ կազմակերպել աշխատանքը և մաքսիմալ չափով ոգտագործել աշխատանքային ժամանակը։ Այս տարվա ապրիլ ամսին անասնապահության շքանշանակիրների և հարվածայինների նախաձեռնությամբ Կենտկոմի կազմակերպած ստախանովյան տասնորյակը բացեց մարդկային աշխատանքի բարձր արտադրողականության հսկայական աղբյուրների նոր շերտեր։ Ստախանովյան տասնորյակները հայտաբերեցին անասնապահության հարյուրավոր առաջավոր աշխատող տավարածներ, կթողներ, հորթապահներ, հովիվներ, որոնք աշխատանքի նոր մեթոդի՝ ստախանովյան մեթոդի շնորհիվ հասան աշխատանքի բարձր եֆեկտիվության, առանձնապես կովերի կթթը բարձրացնելու, մատղաշներ մեծացնելու և հորթերի քաշի բարձր աճ ստանալու խնդիրներում։

Ստախանովյան տասնորյակին մասնակցեցին 1000 կոլտնտեսական ապրանքային ֆերմա՝ Հանրապետության համարյա բոլոր շրջաններից։

Ստախանովյան տասնորյակի ընթացքում մի շարք շրջաններ ունեցան բավական հաջողություններ։ Վերցնենք թեկուզ կովերի կթթերը.

Շրջաններ	Կովերի կթթը բարձրացավ ստախանովյան տասնորյակի ընթացքում %-ներով
Նոր-Բայազետի	34
Մարտունու	80
Բասարգեչարի	14
Ղափանի	18
Ամասիայի	39
Կիրովականի	30
Ստեփանավանի	37,5
Լենինականի	38,0
Ախտայի	45,0
Կոտայքի	25,0
Ալլահվերդու	60,0

Կովերի կթթը բարձրացնելուն զուգընթաց, ավելի լավ եյին խնամվում ու պահպանվում մատղաշները։

Մարտունու շրջանի ֆերմաներն ստախանովյան տասնորյակի ընթացքում ավին հորթերի կենդանի քաշի 40% միջին որական աճ, Ամասիայի շրջանը՝ 16%, Լենինականինը՝ 30% և Ախտայինը՝ 12%։

Առանձնապես կարևոր է այն, որ ստախանովյան տասնորյակի ընթացքում, մատղաշների նկատմամբ ցույց տրված հոգատար խնամքի շնորհիվ, ֆերմաների մեծ մասում մատղաշներ բոլորովին չատակեցին։

Ստախանովյան տասնորյակի ընթացքում անասունների մթերատվության բարձրացման վերաբերյալ ստացված միջին թվերի ֆոնի վրա չի յերևում առանձին ֆերմաների և անասնապահու-

թյան առաջավորների աշխատանքը, նրանց աշխատանքի շնորհիվ հնարավոր դարձավ մեծ ցուցանիշներ ձեռք բերել անասնապահական մթերքների ավելացման բնագավառում։

Հորթերի քաշի և կովերի կթի բարձրացման ցուցանիշներն ստախանովյան տասնօրյակի ընթացքում, ըստ առանձին ֆերմաների.

	Հորթերի աճը		Աճի %	Կովերի կթը		Աճի %
	20/4	1/5-36 թ.		20/4	1/5-36 թ.	
1. Կիրովականի շրջ.						
1. Ղշլաղ . . .	550	650	118,2	2,0	2,6	130,0
2. Վարդանլու . .	450	530	117,8	3,5	5,0	142,9
3. Դեբեթ . . .	450	620	137,8	3,0	4,5	150,0
4. Հաջիղարա .	400	500	125,0	2,5	3,6	144,0
2. Իջևանի շրջանում						
1. Դոստլու . . .	520	600	115,4	2,4	3,7	154,2
2. Խաչթառակ .	560	680	121,4	2,2	5,5	250,0
3. Կոթի . . .	510	610	119,6	2,4	3,8	158,3
4. Մելիք	565	710	125,7	3,0	5,0	166,7

Տախտակից յերևում է, վոր մեկ ստախանովյան տասնօրյակի ընթացքում ինչպես կիթերի, այնպես էլ հորթերի քաշի որական աճը ֆերմաներում զգալի յե յեղել։

Անասնապահական արտադրանքի ավելացման չափերի մասին ավելի պարզ գաղափար կազմելու համար վերցնենք Կիրովականի շրջանի տվյալները։

Ստախանովյան տասնօրյակի ընթացքում Կիրովականի շրջանի կոլտնտեսական ֆերմաներն իրենց կովերից ստացան 3681 կգ կաթ 2349 կգ-ի փոխարեն, այսինքն՝ ավելացում 56%-ով, վոչխարներից ստացան 2788 կգ կաթ՝ 1785 կգ-ի փոխարեն, այսինքն՝ ավելացում է յեղել 49,8%։ Նույն ֆերմաները տասնօրյակի ընթացքում 5588 գառից ստացան քաշի որական աճ 1362 գ, այսինքն՝ 30,8%-ով ավելի, քան նախորդ տասնօրյակներում։ Այնուամենայնիվ անհրաժեշտ է ընդգծել, վոր կիթերի, աճերի բացարձակ ցուցանիշները դեռևս բավարար չեն յեվ դրանք պետք է խիստ

կերպով բարձրացնել ստախանովյան մեթոդների լայն կիրառման միջոցով։

Ստախանովյան տասնօրյակը մեզ հարուստ նյութ է տալիս այն մարդկանց մասին, վորոնք կարողացել են հասնել աշխատանքի բարձր արտադրողականության։

Մարտունու շրջանի Վ.-Ղարանլուղ կոլտնտեսության կթվոր Արիենիկ Մկրտչյանը տասնօրյակի ընթացքում տեղական հորթերի որական աճը միջին հաշվով հասցրեց 550 գրամի, իսկ «Շամամ» հորթինը՝ 850 գ։ Զորագյուղի կոլտնտեսության կթվոր Արիենիկ Ավետիսյանն իրեն ամրացված «Բուլան» անունով հորթի որական աճը հասցրել է 1050 գրամի, Մարտունու շրջանի Ն.-Գյոդալդարայի կոլտնտեսության կթվոր Սաֆո Շահինյանն իրեն ամրացված «Իշխան» հորթի որական աճը հասցրել է 1300 գ։ Նույն շրջանի Աղամիան գյուղի կոլտնտեսության կթվոր Սիրան Խաչատրյանն ստախանովյան տասնօրյակի ընթացքում իրեն ամրացված «Գլաղ» հորթի կենդանի քաշն որական ավելացրել է 1200 գ, Կիրովականի շրջանի Ղշլաղ գյուղի կոլտնտեսության կթվոր Թագուհի Աբրահամյանը «Զիվան» հորթի որական աճը դարձրել է 1 կգ։

Ստախանովյան շարժումը թափանցել է մեր ամենահեռավոր կոլտնտեսությունները։

Ամասիայի շրջանի Գյոլլի կոլտնտեսության անդամ՝ շքանշանակիր Այվազ Մուստաֆայեվը կարողացել է իրեն ամրացված 100-ից ավելի տեղական հորթերի որական աճը հասցնել միջին հաշվով 500 գրամի, փոխանակ 400 գրամի՝ տասնօրյակի սկզբում, իսկ № 132 հորթի աճը՝ որական 800 գրամի։

Զոլաքար կոլտնտեսության կթվոր Մարգուշ Թովմասյանն ստախանովյան տասնօրյակի ընթացքում «Խապվերան» անունով կովից ստացել է միջին հաշվով որական 4 կգ կաթ՝ տասնօրյակի սկզբին ստացվող 2,6 կգ-ի փոխարեն։

Զորագյուղ կոլտնտեսության կթվոր Համասիյուռ Մհերյանը «Զարդար» կովի կիթը 5,8 կգ-ից բարձրացրել է մինչև 8,1 կգ։ Մարտունու շրջանի Աստղաձորի կոլտնտեսության կթվոր Թարգյուլ Ղարիբյանն իր կովերից ամեն մեկի կիթը 4 կգ-ից բարձրացրել է մինչև 9,2 կգ։ Ամասիայի շրջանի Ղաղանչվի կոլտնտեսության կթվոր Արաքս Թորոսյանն իրեն ամրացրած կովերի 8,4 կգ միջին կիթն ստախանովյան տասնօրյակի վերջում հասցրել է 12,8 կգ-ի։

կթվոր Գոհարը 7 կովից ստացել է 14,7 կգ կաթ՝ մինչև ստախանովյան տասնորյակն ստացած 7,6 կգ-ի դիմաց։ Զիվիլի կոլտնտեսության կթող Լեյլի Ռուստամը կովերի կիթը 14 կգ-ից բարձրացրել է մինչև 18,1 կգ։ Կթվոր Թյուլպան Ալին 12,5 կգ-ից բարձրացրել է մինչև 19,2 կգ։ Յենի-յուլի կթվոր Նամազովա Ֆուրուն իրեն ամրացված կովերից ստացել է 12 կգ կաթ՝ մինչ ստախանովյան տասնորյակն ստացվող 8,6 կգ-ի փոխարեն։

Արտադրողականության միջին նորմաներից բարձր արդյունք աբվող այս առաջավոր անասնապահների ցուցակը սրանով չի սպառվում։ Այդպիսի անասնապահներ ներկայումս կան ամեն մի կոլտնտեսությունում, ֆերմայում։ Սակայն նրանց պետք է ճանաչել, նրանց աշխատանքը պետք է ուսումնասիրել և դարձնել ամբողջ կոլտնտեսական մասսայի սեփականությունը։

Մենք ունենք որինակելի աշխատանքի մի շարք որինակներ նաև ձիերի մատղաշների պահպանման բնագավառում։ Ն.-Ախտայի կոլտնտեսային ֆերման (վարիչ Աբրահամ Խաչատրյան) 24 զամբիկից ստացել ու պահպանել է 24 քուռակ։

Ալափարսի կոլտնտեսության ձիաբուծական ֆերմայի վարիչը 14 զամբիկից ստացել և պահել է 14 քուռակ։ Դզմաշենի կոլտնտեսության ձիաբուծական ֆերմայի վարիչ Անդրանիկ Հայրապետյանն 8 զամբիկից ստացել և պահել է 8 քուռակ։ Միկոյանի շրջանի Մալիշկա գյուղի կոլտնտեսության ձիաբուծական ֆերմայի վարիչ Գարեգին Զաքարյանը 25 զամբիկից ստացել է 25 քուռակ։

Շքանշանակիր Սմբատ Բաղալյանը 29 զամբիկից ստացել է 29 քուռակ։

Ստախանովյան տասնորյակը սոցմրցման ալիքը բարձրացրեց ավելի բարձր աստիճանի։ Հենց միայն Միկոյանի շրջանում 340 կթվոր, տավարած, հովիվ և տավարապահ ներգրավված էին ստախանովյան տասնորյակում լավագույն ցուցանիշներ ստանալու մրցության մեջ։

Կիթերի և հորթերի աճեցման վերաբերյալ առանձնապես շոշափելի ցուցանիշներ ունենք անասնապահական խորհնտեսություններում։

Խորհնտեսությունների, ֆերմաների, բրիգադների անունները	Կթվոր կովերի միջին կիթը ըստ խորհնտեսության	Նույնը տասնորյակում	Ինչքան է բարձրացրել կիթը	%	Յուրաքանչյուր կթվոր կովի համար տարեկան միջին կաթի աճը	Ինչքան % է տրամադրված 1935 թվականի համեմատությամբ
1. Լոռու տոհմնտեսություն	6,9	8,4	1,5	22	5,3	60
2. Ղարաղալայի տոհմնտես.	6,2	8,8	1,6	22	5,5	60
3. Շուրաբադի խորհնտես.	5.0	5,5	0,5	10	3.0	80
4. Յանբլխի տոհմնտեսություն	7,1	8,7	1.6	22	4,8	81
5. Բաղարչայի տոհմնտես.	4,2	4,9	0,7	16	4,0	22
	6,1	7,3	1,2	18	4,5	60

Մասնանշված խորհնտեսություններից կովերի մթերատվության բարձրացման տեսակետից առանձնապես աչքի յե ընկնում Յանբլխի խորհնտեսությունը, վոր կովերի կիթը բարձրացրել է ավելի քան կրկնակի և մեկ կթվող կովի կաթի բացարձակ քանակով առաջին տեղն է բռնում։ Աչքի յեն ընկնում նաև Ղարաղալայի և Լոռու տոհմնտեսությունները, վորոնք կովերի կիթը բարձրացրել են 60%-ով՝ համեմատած անցյալ տարվա նույն տասնորյակի հետ։

Տասնորյակի ընթացքում կիթերի ավելացումով առանձնապես աչքի յեն ընկնում.

Լոռու տոհմնտեսությունում՝ 3-րդ բրիգադը (բրիգադիր Ահարոն), մեկ կովի կիթն ավելացրել է 44%-ով, որական 6,3 լ. կիթը հասցնելով մինչև 9 լիտրի։

1-ին բրիգադը կիթերը բարձրացրել է 20%-ով, հասցնելով մեկ կովինն որական 8,9 լիտրի։

3-րդ ֆերմա, 2-րդ բրիգադ—կովերի կիթն 8,2 լիտրից բարձրացրել է մինչև 10,2 լիտր, ավելացում 36%-ով, և

1-ին ֆերմա, 1-ին բրիգադ (բրիգադիր Սաֆար Ավետիսյան՝ շքանշանակիր)—ամեն մի կովի կիթը բարձրացրել է 25%-ով՝ 6 լիտրից հասցնելով 7,6 լիտրի։

Ղարաղալայի տոհմնտեսությունում 1-ին ֆերմայի 3-րդ բրիգադի (բրիգադիր Անթեան Բաղդասարյան)—յուրաքանչյուր կովի կիթը բարձրացրել է 42%-ով՝ 6,4 լիտրից հասցնելով մինչև 9,1 լիտրի։

2-րդ ֆերմա, 3-րդ բրիգադ (բրիգադիր Կոնովալով Իվան)— կթթը բարձրացրել է 23%-ով 6,4 լիտրից հասցնելով մինչև 8 լիտր։

1-ին բրիգադ (բրիգադիր Սուրեն Նազարյան)—յուրաքանչյուր կովի կթթը բարձրացրել 20%-ով՝ 9 լիտրից հասցնելով 10,8 լիտր։

Յանիխի խորհտնտեսությունում՝ 1-ին ֆերմա, 1-ին բրիգադ (բրիգադիր Խաչատրյան Գրիգոր՝ շքանշանակիր)—յուրաքանչյուր կթվող կովի կթթը բարձրացրել է 7,9 լիտրից մինչև 9,3 լիտր։

2-րդ բրիգադ (բրիգադիր Ներսես Պետրոսյան)—մի կովի կթթը բարձրացրել է 25%-ով՝ 6,0 լիտրից հասցնելով մինչև 7,6 լիտր։

2-րդ ֆերմա, 2-րդ բրիգադ (բրիգադիր Նիկոլայ)—մեկ կովի կթթը բարձրացրել է 30%-ով՝ 6,1 լիտրից հասցնելով 8,4 լիտր։

3-րդ բրիգադ (բրիգադիր Ֆիլիպ Նալբանդյան)—մեկ կովի կթթը բարձրացրել է 20%-ով՝ 10 լիտրից հասցնելով 12,9 լիտր։

Ստախանովյան տասնորյակի ընթացքում յուրանդուն աշխատանքի, բոլոր արտադրական պրոցեսներում հիմնական զոռկանոնները կիրառելու, այլև սոցմրցման մեթոդներ կիրառելու շնորհիվ, մթերատվությունը բարձրացնելու գործում առանձնապես փայլուն ցուցանիշներ են ձեռք բերել հետևյալ կթվորները։

	Ֆերմա	Բրիգադ	Կթողի ազգանունն ու անունը	Խնամած կովերի քանակը	Մի կովի կթի ավելացումը կիլոգրամ.
Լուսու տոհմանտեսություն	2-րդ		Սուլեյմանով Սրապ	12	3,1
	»		Պողոսյան Սրամ	12	2,0
	»		Աղայան Վանո	8	3,8
	»		Ալոյան Գարագաշ	10	3,1
	»		Մխիթարյան Նողեր	9	2,7
	3-րդ		Թովմասյան Սաթիկ	9	4,8
			Մահմեդ Քարակ ողլի	6	3,2
Դարաղայլի տոհմանտեսություն	1-ին		Բագիրյան Նամազ	11	3,5
			Իսկյանդար Հաջի ողլի . . .	12	3,1
			Մահմեդ Իսմայիլ ողլի	10	2,3
			Մուրադյան Կարո	12	2,4
			Տոնոյան Քրիստինե	8	2,7
			Պետրոսյան Մարգարիտ . . .	9	3,2
			Բաղդասարյան Բարգեն . . .	8	2,4
			Ռոստոմյան Նոյեմ	11	2,8
			Բաղդասարյան Աշխեն	10	3,3
			Մնացականյան Կապուշ . . .	9	4,5

Ըստ առաջնակարգ կովերի

Ֆերմա	Բրիգադ	Տոհմանտեսություն	Կթվորը	Կովի անունը	Դեռևս մնացած կթթը	Կթթը ամսվա ընթացքում	Աճ
3-րդ		Լուսու տոհմանտեսություն	Իսլամ Սապրի ողլի . .	Զայկա	8,5	13,5	5
			Աղամյան Գևորգ	291	10,0	13,7	3,7
			Թումանյան Սաթիկ . .	50	14,5	21,3	6,8
			Խաչատրյան Լուդվիգ . .	20	5,3	10,9	5,6
			Հակոբյան Վանո	Նատաշա	12,3	18,0	4,7
			» »	Կապուտ	10,8	19,0	8,2
			» »	Պոչատ	10,8	16,9	6,1
	1-ին	Դարաղայլի տոհմանտեսություն	Սարքյան Ա.	100	4,0	8,3	4,3
			Իսկյանդար Հաջի ողլի	226/339	6,1	10,1	4,0
			Գուրմալայ Գագրամ ղզի	082	8,6	12,6	4,0
			Աղամյան Սիրանուշ . .	129	4,0	8,6	3,6
	2-րդ		Դանիելովա Աննա	164	14,3	17,5	3,2
			Թոթոլյան Քերոբ	202	12,0	16,0	4,0
			» »	185	6,5	11,5	5,0
			Ավետիսյան Դանիել . .	41	14,0	19,3	5,3
			» »	28	10,6	16,6	6,0
			Մարգարյան Կլաուդ . .	198	9,0	13,3	4,3
			Ավետիսյան Սիրուշ . .	125	9,0	13,5	4,5
			Բաբայան Վարդուհի . .	895	8,5	14,0	6,5
			Աբդուլա Նասիբ ողլի . .	03	6,8	10,7	4,0
			» »	95	11,7	17,0	5,3
			Դավոյան Սենիկ	364	10,1	14,3	4,2
		Ցանրվի խորհտնտեսություն	Սարոյան Տոնուհի . . .	Թամբուլ	4,8	8,9	4,1
			Անտոնյան Թարգյուլ . .	Աստղիկ	5,8	11,4	5,6
			» »	Իրոչկա	9,5	13,5	4,0
			Գևորգյան Խանում . .	Բաշո	7,0	10,8	3,8
			Քեզոյան Դուզիկ	Կլարա	4,2	8,5	4,3
			Ազիզյան Մանդակ . . .	Ալվին	6,9	11,5	4,6
			Ռուստամյան Նոյեմ . .	Սուսաննա	6,2	12,0	5,8
			Բաղդասարյան Աշոտ . .	Զերկեզ	6,4	12,0	5,6
			»		6,0	13,0	7,0
			»	Մարիա	3,0	8,0	5,0
			Մնացականյան Անուշ . .	Քուրինգ	4,5	11,0	6,5

Ստախանովյան տասնորյակի ընթացքում հորթերի մեծացման գործում կարևոր մոմենտներից մեկը մրցակցության մեթոդների՝ հորթապահների և կթվորների կոնկրետ պարտավորությունների լայն արմատացումն եր։

Ստախանովյան տասնորյակի ընթացքում հորթերի քաշի ընդհանուր աճն ըստ խորհտնտեսությունների, ամբողջապես վերցրած՝ կազմում եր.

Լոռու տոհմտնտեսությունում տասնորյակի ընթացքում հորթերի քաշի միջին աճը կազմում է 700—850 գ, ընդ վորում մի քանի հորթերի և հորթապահների մոտ միջին աճը կազմում է,

Նազարյան Շ.	1140	գրամ
Նազարյան Գ.	1135	»
Շարմակովա Ցելենա	1035	»

Ղարաղալայի տոհմտնտեսությունում հորթերի քաշի միջին աճը տասնորյակի ընթացքում կազմում է 750—900 գ, ընդ վորում մի քանի հորթապահների մոտ առանձին հորթերի քաշի միջին որական աճը կազմում է.

Կրեյեվա Գալիա	հորթ	Ռեկորդ	1,3	կգ
» »	»	Ռիմա	1,1	»
Սեմինիխինա Մարուսիա	»	Բելկա	1,1	»
Վակուլիեվա Լիդիա	»	Գրիշա	1,3	»
» »	»	Սամսոն	1,2	»

Շուրաբաթի խորհտնտեսությունում.—Հորթերի քաշի միջին աճը տասնորյակի ընթացքում կազմում է 700 գ, ըստ վորում առանձին հորթեր ունեցել են հետևյալ ռեկորդային աճերը.

Մուրադյան Գ.	հորթ	Գրիմա	1,125	կգ
Գրիգորյան Վ.	»	—	1,6	»
Մալխասյան Ս.	»	Բարեղամ	1,6	»
»	»	Խաչիկ	1,4	»
Տերտերյան Բալախան	»	Սարգիս	1,750	»
Բարինով Թուման	»	Սիլվա	1,400	»
Գրիգորյան Ավդան	»	Քասիմ	1,400	»
Բայրամով Հյուսեյին	»	Նազիկ	1,300	»

Ցանրխի խորհտնտեսությունում.—Հորթերի միջին որական աճը կազմում է 500 գ, ընդ վորում ռեկորդայիններն ունեն հետևյալ աճը.

Սարոյան Թագուհի	հորթ	Սիմա	1,350	կգ
Մարտիրոսյան Մախմուր	»	Ժիրայր	1,000	»
Խաչատրյան Վերգուշ	»	Միհրան	1,000	կգ
Թոստոմյան Նոյեմ	»	Գիգանտ	1,000	»
Հովհաննիսյան Վարիա	»	Կոլյա	1,000	»

Բազարչայի խորհտնտեսությունում հորթերի միջին որական աճը կազմում է 500 գ. ռեկորդային աճերը հետևյալներն են.

Սարգսյան Զապովարդ	հորթ	Սաթիկ	1,200	կգ
Սարգսյան Սաթիկ	»	Լուսիկ	1,000	»
Խաչատրյան Փառ	»	№ 57	1,000	»

Ստախանովյան տասնորյակից առաջ կատարված եր խոշոր նախապատրաստական աշխատանք։

Ստախանովյան տասնորյակի հանրագումարը ցույց է տալիս, վոր այնտեղ, վորտեղ այդ աշխատանքը կատարվել է մտածված և բազմակողմանի, հաջողություն ապահովված եր։

Ստախանովյան տասնորյակում մեծ աշխատանք է կատարված մրցակցող ֆերմաների, բրիգադների և նրանց առանձին անդամների կուլտուր-մասսայական ոգևորման համար։ Թերթերի տարածումը, նրանց ընթերցումը, պատի թերթի հրատարակման ուժեղացումը և աշխուժացումն արտացոլում էին սոցիալիստական անասնապահության վերելքի գործում առաջնություն ձեռք բերելու համար տարվող պայքարի բարձր տեմպը։ Նախապատրաստումն առաջին հերթին վերացնում եր ֆերմայում յեղած այն թերությունները, վորոնք արգելակում են աշխատանքի ստախանովյան մեթոդի կիրառումը։

Կոլտնտեսությունների կուսակցական ղեկավարությունն ստախանովյան շարժմամբ սկսեց ավելի խոր թափանցել անասնապահական աշխատանքների պրոցեսների մեջ։

Լավագույն ֆերմաները, նախ՝ կատարեցին հետևյալ աշխատանքները. նրանք զանազան կեղտերից ու աղբից խնամքով մաքրեցին ֆերման, նրա բակը, գոմերը, վորպեսզի անասունների համար ստեղծեն միանգամայն առողջապահական պայմաններ։

Գոմերն ապիտակացնելը և ախտահանելը, գոմաղբի տեղափոխումը, ջրանց հետ միասին կթվորներին խալաթ և սապոն տալն ստախանովյան տասնորյակին նախապատրաստելու առաջին կարևորագույն քայլերն էին։

Ստախանովյան տասնորյակը բրիգադում, ֆերմայում մտցրեց աշխատանքների ճիշտ կարգ ու կանոն ու հաշվառում, ճշգրտեց բրիգադի յուրաքանչյուր անդամի պարտականությունները, կանոնավո-

րեց անասունների վորոշ անձնավորության ամրացնելու խնդիրը և արմատացրեց աշխատանքի գործավարձային վարձատրման ձևը։

Բայց առանձնապես կարևոր է այն, վոր շնորհիվ ստախանովյան տասնորյակի, ֆերմաներում սկսեցին նոր առաջադիմական անասնապահության տեխնիկա կիրառել։

Ցեռանվագ կթիչը կրծի մասաժի հետ միասին և արոտային շրջանում կովերի լրացուցիչ կերակրումն ուժեղ կերպով (Կիրովական, Ստեփանավանի և Մարտունու շրջանները) մեր կոլտնտեսական ֆերմաներում տվորական յերևույթ է դարձել։ Կիրառվում է վոչխարների գարնանային զուգավորում՝ մեկ տարում յերկու ծին ստանալու նպատակով։ Միայն Մարտունու շրջանում գարնանը զուգավորման են յենթարկված մոտ 5 հազար վոչխար, իսկ Ն. Բայազետում՝ 1500 վոչխար, Ալագյազ խորհտնտեսությունում՝ 600 վոչխար։

Կատարված են կովերի համաչափ ծնին անցնելու առաջին քայլերը։ Մարտունու շրջանի կոլտնտեսական ֆերմաներն ապրիլին ծածկել են կովերի 50%-ից ավելին։

Ցերկնվագ խուզին են անցել Մարտունու, Թալինի և մյուս շրջանները։

Կերերի ավելի լավ նախապատրաստումը, կոպիտ կերի մանրացումը և շոգեխաշելը, հանքային աղեր տալը, հորթերին առատ խիժ տալը,—այս բոլոր նորությունները մտել են կոլտնտեսություն ստախանովյան տասնորյակի շնորհիվ։

Այսպիսով ստախանովյան շարժումն զգալիորեն բարձրացրեց ֆերմայում աշխատող կոլտնտեսականների, կոլտնտեսուհիների կուլտուր-տեխնիկական մակարդակը, բարձրացրեց աշխատանքի արտադրողականությունը և դրանով ապահովեց անասնապահական մթերքների արագ աճը։

Խնդիրն այն է, վոր ընդհանրացնենք անասնապահական խորհտնտեսությունների և կոլտնտեսային ապրանքային ֆերմաների լավագույն ստախանովականների փորձը, լայնացնենք այդ շարժումը, մինչև վերջ ջախջախենք անասնապահության մեջ մնացած հին, մեռած ձևերը և կիրառելով առաջավոր գիտության ու պրակտիկայի փորձը՝ ինչպես հարկն է, գիտականորեն, նոր—ստախանովյան ձևով վերակազմենք մեր աշխատանքները։

Այդ է մեզանից պահանջում ընկ. Ստալինը, դրա իրականացման համար պետք է կոլ-խորհրդային կազմակերպությունները, հողային մարմինները և գիտահետազոտական հիմնարկներն անհապաղ վերակառուցեն իրենց աշխատանքները և գլխավորեն կոլտնտեսություններին ցույց տրվող ոգնությունը՝ ստախանովյան շարժումը ծավալելու գործում։

Խնդիրն այն է, վոր ստախանովյան շարժման մեջ ներգրավենք բոլոր անասնապահներին, բոլոր կոլտնտեսությունները, ֆերմաները, բրիգադները և խորհտնտեսությունները։ Պետք է լայն նախապատրաստական աշխատանք տանել, վորպեսզի մեր բրիգադները, ֆերմաներն անցնեն ստախանովյան աշխատանքի, պետք է հաշվի առնել տասնորյակի անցկացման ժամանակ թույլ տրված սխալները, առանձնապես ճիշտ հաշվառման, կովերի, հորթերի և քուռակների կերակրման և խնամքի բնագավառում, առանձին ուշադրություն դարձնելով ստախանովյան մեթոդը մեր աշխատանքի շատ հետ մնացող բնագավառում՝ կերի բազայի և տոհմական աշխատանքի բնագավառում արմատացնելու վրա, վորովհետև սոցիալիստական անասնապահության վերելքի վերաբերյալ միջոցառումների շարքում ներկայումս ամենավճռականն առատ կերի բազայի ստեղծումն է և դրա հիման վրա անասունների ցեղի լավացումը։ Ահա թե ինչու մենք անհրաժեշտ ենք համարում առանձնապես կանգ առնել այդ յերկու կարևորագույն հարցերի վրա և կոնկրետ ուղիներ նշել նրանց արագ լուծման համար։

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ներկայումս, յերբ առաջավոր անասնապահ-ստախանովականները տալիս են անասունների մթերատվության այնպիսի նորմաներ, վորոնք 5—6 անգամ գերազանցում են գոյություն ունեցող միջին նորմաները, ինքնին հասկանալի է, վոր անհրաժեշտ է համապատասխան չափով ավելացնել նաև կերերը։

Վերջին տարիների ընթացքում մենք վորոշ չափով մեծացրել ենք կերի բազան։ Կերաբույսերի ցանքի տարածությունը վերջին 4 տարին յեղել է.

1933 թ.	1934 թ.	1935 թ.	1936 թ.
18940 հա	21230 հա	23180 հա	30000 հա

Առանձնապես խոշոր բեկում ունենք սիլոսացման գործում։ Մինչև մինչև 1932 թ. մենք բառացիորեն վոչ մի տոն սիլոս

չունեցինք, սկսած 1932 թվականից սիլոսի արտադրությունը տարեցտարի ավելացել է.

1932 թվականին	սիլոսացրած է	28200	տոննա
1934 »	»	38650	»
1935 »	»	47950	»
1936 թվին	կսիլոսացվի	50000	»

Ընդարձակվել է նաև բնական խոտհարքների տարածությունը։

1931 թվականին	խոտհարք	209.244	
1932 »	»	210.707	
1933 »	»	213.094	
1934 »	»	207.477	
1935 »	»	224.963	

Սակայն կերի բազայի այս ավելացումը պետք է ընդունել միանգամայն անբավարար, որովհետև նա խիստ հետ է մնում անասնապահության աճումից և բնավ չի բավարարում տարեցտարի ավելացող անասունների կերի պահանջները։

Իսկ որոնք են կերի բազայի ընդարձակման ամենաարագ ուղիները մեր սոցիալիստական անասնապահության համար։

Այդ ուղիները բացառիկ պարզությամբ մեզ ցույց տվին ընկ. Ստալինը և բարձր բերքի համար սոցիալիստական դաշտերի ստախանովականների մղած պայքարի փորձը։

Կերային տարածությունների ընդարձակման հետ միասին մենք պետք է ձգտենք ստանալու կերաբույսերի, խոտհարքների բարձր բերքը և բարձրացնելու արոտների արտադրողականությունը։

Մեր հանրապետության մեջ կերի կարևորագույն աղբյուրները դաշտային և մարգագետնա-արոտային տնտեսություններն են։

Սկսենք դաշտային տնտեսության կազմակերպումից, որը խոտհարքների հետ միասին մեր անասնապահությանը տալիս է ձմեռային կերեր, որոնց պահանջն առանձնապես սուր կերպով է զգացվում։

Հանրապետության 450 հազար հա ցանքի տարածությունից կերաբույսերի բաժինը 5%-ից բարձր չէ։ Այդ չափազանց փոքր տարածություն է։ Ամերիկայում կերաբույսերի, գլխավորապես լոբազգիների (առվույտ, յերեքնուկ) մշակության տակ գտնվում է ցանքի տարածության 17%-ը, Գերմանիայում՝ 13%-ը, Ֆրանսիայում՝ 20%-ը։ Խնդիրն այն է, որ մոտակա տարիները, մաքսիմում

յերրորդ հնգամյակի վերջում, ընդարձակենք կերաբույսերով, առանձնապես լոբազգիներով բռնված տարածությունը և այդ խնդրում, ինչ գնով էլ լինի, հասնենք ու անցնենք կապիտալիստական առաջավոր յերկրներից։ Դրա համար անհրաժեշտ է, որ մենք ցանովի լոբազգի խոտաբույսերի տարածությունը հասցնենք առնվազն մինչև 100 հազար հեկտարի։

Կերաբույսերի տարածության ընդարձակումը վոչ մի դեպքում չպետք է կատարվի ի վնաս հացահատիկային կուլտուրաների տարածության։

«Անասնաբուծության աճումն անհնար է առանց անասունների համար հացահատիկի մեծ պաշարներ ունենալու։ Միայն աճող ու ծավալվող հացահատիկային տնտեսությունը կարող է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են անասնաբուծության զարգացման համար» Ստալին։

Մեզ մոտ բավականաչափ հողամասեր կան, որ կարելի յե զբաղեցնել կերաբույսերով՝ առանց ձեռք տալու հացահատիկային կուլտուրաներին։ Այդ ամենից առաջ մեր խամ հողերն են։

Կերաբույսերի մշակման տարածության այսպիսի ընդարձակումը մեզ հնարավորություն է տալիս հանրապետության բոլոր անասնապահական շրջաններում ստեղծել խոտադաշտային ցանքաշրջանառություն։ Դրա համար անհրաժեշտ է ստեղծել բազմամյա խոտաբույսերի՝ կորնգանի, առվույտի, յերեքնուկի սեփական սերմերի ֆոնդ։

Խոտաբույսերի սերմերի սեփական ֆոնդ ստեղծելու համար վերջին յերկու տարում խոշոր աշխատանք է կատարված. միայն 1935 թ. մեր կոլտնտեսությունները հավաքել են 2400 ցենտներ կորնգանի սերմ։ Այդ մեծ նվաճում է, բայց դեռ բավական չէ, որովհետև մենք յուրաքանչյուր տարի պահանջ ունենք 5—6 անգամ ավելի շատ քանակի կորնգանի, որն ամենից ավելի արժեքավոր կերաբույսն է մեր լեռային պայմանների համար։

Կորնգանի մշակության խոշոր տնտեսական նշանակությունը վոչ միայն նրա կերարժանիքն է, այլև այն, որ նա վորպես բազմամյա սակավապահանջ բույս, հողի շերտն ամրացնում—պաշտպանում է հեղեղներից (լվացվելուց)։ Կորնգանի բազմամյա մշակման խոտադաշտային ցանքաշրջանառությունը լավագույն յերաշխիքն է լեռնալանջերի հողաշերտը հեղեղվելուց ու փչացումներից պաշտպա-

նելու համար, չխոսելով նրա կերարժանիքի մասին, վորպես սպի-տակուցով բարձրորակ հարուստ կերի։

Նկատի ունենալով կորնգանի խոշոր նշանակությունը լեռնա-յին շրջանների համար՝ Անդրյերկոմը, ՀԽՍՀ Ժողկոմխորհը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը Սիսիանի, Միկոյանի, Ազիզբեկովի, Մարտունու և Գո-ռիսի շրջանները, վորտեղ տարածված է տեղական կորնգանի մշա-կություն, ճանաչեցին վորպես կորնգանի պետական բուծարաններ և կորնգանով ցանված ամբողջ տարածություններ թողեցին բացա-ռապես սերմերի համար։

Կորնգանի տեղական կուլտուրան շատ ձեռնտու կերպով իր մեջ միացնում է հետևյալ հատկությունները. նա յերաշտադիմաց-կուն, սակավապահանջ է հողի նկատմամբ և տալիս է մեծ բերք։ Ջրովի հողերում նա սովորաբար տալիս է յերկու քաղ և ավելի, իսկ վոչ ջրովի հողերում՝ մեկ կամ յերկու քաղ։ Կորնգանը յերկու քաղի դեպքում տալիս է մեկ հեկտարից միջին հաշվով 50 ցենտ-नերից ավելի խոտ, իսկ մեկ քաղի դեպքում՝ մինչև 30—40 ցենտներ։

Անհրաժեշտ է անխնա պայքար մղել այն մարդկանց դեմ, վո-րոնք դեմ են դուրս գալիս կորնգանի ցանքերն իրրև սերմացու թողնելուն։

Առաջավոր կոլտնտեսությունների փորձը ցույց է տվել, վոր սերմահավաքը լավ կազմակերպելու դեպքում կարելի յե կորնգանի սերմի բարձր բերք ստանալ։

Մարտունու շրջանի Գյոդալդարայի կոլտնտեսության բրի-գադիր Վաղարշակ Մանվելյանը 12 հեկտար տարածությունից մի-ջին հաշվով ստացավ 8-ական ցենտներ կորնգանի սերմ։

Մարտունու շրջանի Վ. Ղարանլուղ կոլտնտեսության բրիգա-դիր Մնացական Բղնունին միջին հաշվով մեկ հեկտարից ստացավ 6,5 ցենտներ կորնգանի սերմ։

Դրանք յեզակի որինակներ չեն. ամենուրեք, վորտեղ կոլտն-տեսությունները կարողացել են ժամանակին անկորուստ սերմա-հավաք կազմակերպել, այնտեղ կորնգանի սերմի բերքը մի քանի անգամ գերազանցում է վերջինի յելքի նորմաները։

Մեկ հեկտարից 9 ցենտներ կորնգանի սերմ ստանալը վերջնա-կան չե։ Առաջավոր ագրոտեխնիկան կիրառելու դեպքում յերաշխիք կա ստանալու մեկ հեկտարից 15—20 ցենտներ սերմ, իսկ խոտ՝

100 ցենտներ։ Մի բան, վոր ապացուցված է Լենինականի սելեկ-ցիոն կայանի փորձերով։

1935 թվականին Լենինականի սելեկցիոն կայանը 1 հեկտա-րից միջին հաշվով ստացավ 10 ցենտներ կորնգանի սերմ, իսկ 1936 թվականին ստանում է 15 ցենտներ սերմ և 100 ցենտներ խոտ։

Խոտադաշտային ցանքաշրջանառությունն արմատացնելու տե-սակետից, ինչպես բամբակացան, այնպես և լեռնային շրջանների համար պակաս կարևոր նշանակություն չունի առվույտը, մասամբ յերեքնուկը. այդ պատճառով այդ կուլտուրաների սերմնաբուծու-թյունը պետք է դրված լինի պատշաճ բարձրության վրա։

Կորնգանի, առվույտի, յերեքնուկի հետևյալ կարևոր տնտեսա-կան առավելությունն այն է, վոր այդ թիթեռնածաղկավոր բույ-սերը հողի ստրուկտուրան լավացնելու հետ մեկտեղ նրան հարըս-տացնում են ազոտով և դրանով ապահովում հետագա հացահատի-կային կուլտուրայի բարձր բերքը։

Ազոտն եյական պարարտանյութերից մեկն է, վորի պահանջն զգում է հողը։ Ազոտ կարելի յե ստանալ հանքային պարարտա-նյութեր արտադրող քիմիական արդյունաբերության միջոցով։ Բայց ազոտային պարարտանյութ ավելի պարզ ստացվում է բիոլոգիական յեղանակով, այսինքն՝ ազոտ կապող կուլտուրաների՝ կորնգանի, առվույտի և ուրիշ բույսերի միջոցով։

Ինչպես կորնգանը, այնպես եվ առվույտն ընդունակություն ունի հողի մեջ ազոտ կուտակելու իր արմատային սիստեմի շնորհիվ։ Բացի այդ, այդ կուլտուրաների վերերկրյա մասերը, ազոտով հա-րուստ տերևներն ու ցողունները կեր են ծառայում անասուն-ների համար, և գոմաղբի միջոցով ազոտն անցնում է հողի մեջ։

Պարզության համար հիշեցնենք, վոր կորնգանի մեկ հեկտար ցանքը կուտակում է մոտավորապես 150—190 կգ ազոտ, վոր կազմում է 30 ցենտներ գոմաղբ։

Թե ինչ ազդեցություն է գործում կորնգանի և այլ թիթեռ-նածաղկաբույսերի մշակությունը բերքի բարձրացման վրա, այդ լավ գիտեն մեր կոլտնտեսություններն իրենց սեփական փորձից։ Այս-պես, Բասարգեչարի շրջանի մի շարք կոլտնտեսությունների տվյալ-ներով, յերկու տարի կորնգանով զբաղված մեկ հեկտար հողից հացահատիկ մշակելիս ստացվել է 14 ցենտներ բերք, իսկ այն

տաբածությունից, վորտեղ հացահատիկից հետո ցանվել է հացահատիկ, ստացվել է 4 ցենտներ բերք։

Բազմամյա խոտաբույսերի՝ կորնգանի, առվույտի և յերեքնուկի չափազանց կարևոր առանձնահատկություններից մեկն ել այն է, վոր 2—3 տարի այդ բույսերով զբաղված դաշտը համարյա ամբողջովին ազատվում է մոլախոտերից, վորի հետևանքով ստեղծվում են ավելի լավ պայմաններ հետագա կուլտուրայի աճման համար։

Ահա այս են ազոտ հավաքող կուլտուրաների՝ կորնգանի, առվույտի, յերեքնուկի անտեսապես ոգտակար առավելությունները։

Դաշտավարական անտեսության մեջ անասնապահության համար մեծ նշանակություն ունեցող հաջորդ կերային կուլտուրաներն են՝ արմատապտուղները և սիլոսային կուլտուրաները։

Առանց այդ հյութալի կերերի հնարավոր չե ստանալ ստախանովյան կիթեր։ Սակայն մի շարք շրջաններում մենք կարող ենք չափազանց անթույլատրելի վերաբերմունք տեսնել այդ կուլտուրաների ագրոտեխնիկայի նկատմամբ, վորի հետևանքով կերի ճակնդեղի և սիլոսային կուլտուրաների բերքը մնում է ցածր մակարդակի վրա, այն է՝ 100 ցենտներ ճակնդեղ և 5—6 տոն սիլոսացու մասսա։

Կերային կուլտուրաների—ցանովի խոտերի, արմատապտուղների և սիլոսացու բույսերի ագրոտեխնիկան թերագնահատելն է այդ կուլտուրաների ցածր բերք ստանալու պատճառը. այդ ազատագրված է առաջավոր կոլտնտեսական-ստախանովականների փորձով. նրանք ագրոտեխնիկա կիրառելու շնորհիվ կարողացել են բերքը 2—3 անգամ ավելացնել՝ միջին բերքի հետ համեմատած։

Ախտայի շրջանի Ոնդամալ գյուղի կոլտնտեսության բրիգադիր Արամ Աբելյանը մեկ հեկտարից ստացել է 70 ցենտներ վիկի խոտ։

Մարտունու շրջանի Ն.-Ալուչալու գյուղի կոլտնտեսության բրիգադիր Խանատ Պողոսյանը 1935 թվականին 1 հեկտարից միջին հաշվով ստացել է 98 ցենտներ առվույտի խոտ։

Մարտունու շրջանի Վ.-Ղարանլուղի կոլտնտեսության բրիգադիր Մնացական Բգնունին 1 հեկտարից միջին հաշվով ստացել է 92 ցենտներ առվույտի խոտ։

Ստեփանավանի շրջանի Պրիվոլնոյե գյուղի Իլիչի անվան կոլտնտեսության բրիգադիրը 1 հեկտարից ստացել է 440 ցենտներ կերի ճակնդեղ։

Լեջան գյուղի Կամոյի անվան կոլտնտեսության բրիգադիր Աբրամ Վարդանյանը 1 հեկտարից ստացել է 86 ցենտներ վիկի խոտ։

Ղամարլուի շրջանի Ղուկաս Ղուկասյանի անվան կոլտնտեսության բրիգադիրը 1 հեկտարից ստացել է 125 ցենտներ առվույտի խոտ։

Ել չենք շարունակի թվել բարձր բերքի ստախանովականներին. նեբկայումս մեծ է նրանց թիվը։ Խնդիրն այն է, վոր առաջավորների փորձը փոխադրենք մյուս կոլտնտեսությունները՝ յետ մնացող կոլտնտեսությունների բերքատվությունը բարձրացնելով առաջավորների մակարդակին։

Թե ինչ յեղանակով առաջավոր կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները կարողացել են այդքան բարձր բերք ստանալ, այդ մասին նրանք պատմեցին սիրելի առաջնորդ ընկ. Ստալինին՝ բերքատվության առաջավորների խորհրդակցությանը՝ Մոսկվայում։

Անսահման սեր դեպի կոլտնտեսական աշխատանքը, յուրաքանչյուր հողամասի ուսումնասիրում, ագրոտեխնիկայի համառ կիրառում և չթուլացող խնամք բույսերի նկատմամբ—ահա այն ամենը, ինչով բնորոշվում է բարձր բերք տվող առաջավորների աշխատանքը։ Կերի ճակնդեղի բարձր բերք ստանալու համար գյուղատնտեսության առաջավորները խոշոր ագրոտեխնիկական աշխատանք են կատարել։

Ստախանովական Մարիա Դեմչենկոյի պատմածի համաձայն, նա իր հողամասում, վորտեղից ստացել է 500 ցենտներ ճակնդեղ, 9 անգամ քաղհան է արել։ Գարնանը 1 հեկտարի վրա լցրել է 15 հազար լիտր գոմաղբահյութ։

Ցանովի կերաբույսերից հետո կերերի մյուս հիմնական ազբյուրը հանդիսանում են մարգագետիններն ու արոտները։

Մարգագետինների և արոտատեղերի ընդհանուր տարածությունը Հայաստանում հասնում է 1.500.000 հեկտարի։

Մեր հանրապետության մարգագետիններից և արոտատեղերից մենք ստանում ենք կերերի տարեկան պաշարի (ձմեռային և արոտային) 70%-ից վոչ պակաս։

Սակայն մենք ռացիոնալ կերպով չենք ոգտագործում բնական կերային տարածությունների այս հսկայական պաշարը։

Ինչպես հայտնի յե, մեր կոլտնտեսությունները ձմեռային կերի, գլխավորապես խոտի խոշոր պակասություն են զգում։

Այդ բացատրվում է նրանով, որ մենք թեև ամառային արոտատեղերով հարուստ ենք, սակայն բավարար չափով խոտհարքներ չունենք։ Մարգա-արոտատեղային 1,500.000 հեկտար ընդհանուր տարածությունից խոտահարքները կազմում են ընդամենը 120000 հա, այսինքն՝ 8%։

Մեր արոտների գիտական հետազոտությունը ցույց է տվել, որ խոտհարքների տեսակարար կշիռը կարելի յե հասցնել ամբողջ մարգա-արոտային տարածության մինչև 25%։

Այդ կարելի յե անել հասարակ, բոլորովին մատչելի միջոցառումով, այսինքն՝ արոտների մի մասը խոտահարքի վերածելով։

Մենք պետք է խնդիր դնենք՝ մոտակա տարիների ընթացքում հիշված միջոցառումով խոտհարքների տարածությունը հասցնել 200000 հեկտարի։

Խոտի ձմեռվա պաշարի պակասությունը նաև նրանով է բացատրվում, որ մենք խոտհարքներից ստանում ենք խոտի չափազանց ցածր բերք, որը միջին հաշվով չի անցնում 10 ցենտներից՝ մեկ հեկտարից։

Խոտի այսպիսի ցածր բերքի պատճառը նմանապես խոտահարքներում ամենահասարակ ագրոտեխնիկա չկիրառելն է։ Այդ մասին պերճախոս կերպով խոսում են մեր հանրապետության գյուղատնտեսության առաջավորների և բերքատվության ցուցանիշները։

Մարտունու շրջանի Վ. Ղարանլուղի կոլտնտեսության բրիգադը 1935 թվականին 1 հեկտար բնական խոտհարքից միջին հաշվով ստացավ 37 ցենտներ խոտ՝ շրջանի 15 ցենտներ միջին բերքի դիմաց։

Մարտունու շրջանի Ն.-Ալուչալու կոլտնտեսության բրիգադիր Խանամ Պողոսյանը 1 հեկտար բնական խոտհարքից ստացել է 40 ցենտներ խոտ։

Շքանշանակիր Արմենակ Սարգիսյանյանը—Գորիսի շրջանի Բռուն գյուղի կոլտնտեսության նախագահը—1 հեկտար բնական խոտհարքից ստացել է 60 ցենտներ խոտ։

Զոոտեխնիկական գիտությունն ապացուցել է, որ, օրինակ՝ կովի կիթը կրկնապատկելու համար անհրաժեշտ է այդ կովի կերն ավելացնել 30—35%։ Կարելի յե պատկերացնել, թե ինչ տնտեսական եֆեկտ կտանանք, յեթե բնական խոտհարքների բերքը հասցնենք միջին հաշվով թեկուզ 20—25 ցենտներ՝ ներկա 10 ցենտների փոխարեն։

Հնարավոր է արդյոք այդ անել։ Միանգամայն հնարավոր է. դրա ապացույցն է գյուղատնտեսության առաջավորների փորձը։

Ձմեռվա կերի, մասնավորապես խոտի պակասությունը վատ է անդրադառնում նաև արոտների ռացիոնալ ոգտագործման վրա։ Այդ առաջ է գալիս նրանից, որ մեր կոլտնտեսությունները գարնան սկզբին կերի պաշար չունենալով՝ ստիպված են անասունները ժամանակից շուտ թողնել արոտ, յերբ դեռևս շատ քիչ կանաչ կա։

Անասուններին ժամանակից շուտ արոտ թողնելն առանձնապես վատ է անդրադառնում գարնան անձրևներից թրջված խոնավ արոտների վրա, որովհետև այդպիսի արածացման ժամանակ պոկվում են բույսերի դեռևս չամրացած արմատները, և անասունների տրորելու հետևանքով կանգ է առնում բույսերի ընդհանուր աճը։ Իսկ որ գլխավորն է, արածելիս անասունները բավարար կեր չեն ստանում։

Միանգամայն պարզ է, որ այն արոտում, որտեղ բաց են թողնում անասուններին վաղ գարնանից, բուսականությունը փչանում է և դժվար է վերականգնվում։ Զգետք է մոռանալ, որ կաթի, մսի, բրդի արտադրանքի մեծ մասն անասնապահությունը տալիս է արոտային շրջանում։

Արոտային տնտեսությունը ճիշտ վարելու համար մեծ նշանակություն ունի մեր արոտատեղերի վիճակի ուսումնասիրությունը։ Այդ տեսակետից խոշոր պրակտիկ նշանակություն ունի ՀԾԿ-ի կողմից անցկացված մեկ միլիոն հեկտարից ավելի արոտային տարածության պասպորտիզացիան։ Պասպորտիզացիայի նյութերը հիմք կտան արոտատեղերը մշտական ոգտագործման համար կոլտնտեսություններին ամրացնելու և նրանց բարելավման վերաբերյալ միջոցառումները (վոռոգման, պարարտացման և այլ մելիորատիվ աշխատանքների միջոցով) կենսագործելու։

Անասունների կերի ընդհանուր բալանսում վոչ պակաս նշանակություն ունի նաև ձմեռային արոտների ճիշտ ոգտագործումն ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ հանրապետությունից դուրս։ Մենք ունենք 150.000 հեկտարից ավելի ձմեռային արոտատեղ։ Բացի դրանից, Խորհրդային Ադրբեջանում մենք ոգտագործում ենք նաև տասնյակ հազարավոր հեկտար ձմեռային արոտա-

տեղեր։ Սակայն շնորհիվ այն հանգամանքի, որ մենք խոտի ապահովագրական ֆոնդ չենք ստեղծում, ձմեռային արոտատեղերում հաճախակի վատ յեղանակների դեպքում անասունների մեծ կորուստ ենք ունենում։ Պետք է ռացիոնալացնել ոչ միայն ամառային արոտատեղերի ոգտագործումը՝ ժամադաշների համար շենք կառուցելու, կուլտուրական կացարան պատրաստելու միջոցով, այլև պետք է նման աշխատանք կատարել ձմեռային արոտատեղերում. այդ դեպքում այդ կերային տարածությունների ոգտագործման եֆեկտիվությունը շատ ավելի կբարձրանա։

Իսկ ինչ յեղանակով կարելի յե ապահովել արոտների բարձր արտադրողականությունը, առանց անասունների կերը պակասեցնելու։

Դրա համար անհրաժեշտ է ձմեռվա մուրային շրջանի համար պաշարել այնքան կեր, որ վաղ գարնանն անասունները շարունակեն կեր ստանալ գոմում, մինչև որ արոտի կանաչը բավականին բարձրանալով՝ բավարարի անասունների սննդանյութերի պահանջը։ Դրա համար հարկավոր է պաշարել ավելի շատ խոտ և սիլոս։

Պետք է դեն դցել մի քանի մասնագետների ֆնտասակար այն դրույթը, թե կենդանիներին սիլոսով պետք է կերակրել միայն ձմեռվա ամիսներին։ Առաջավոր կոլտնտեսությունների զոոտեխնիկական պրակտիկան ապացուցել է, որ սիլոսը մեծ տնտեսական եֆեկտ է տալիս ոչ միայն ձմեռը կերցնելիս, այլև նույնիսկ ամառվա արոտային շրջանում, դեռ չխոսենք վաղ գարնանը կերցնելու մասին։ Մենք պետք է սիլոսային կուլտուրաների բերքատվության բարձրացման միջոցով ամեն տարի պատրաստվող սիլոսի քանակը հնգամյակի վերջին հասցնենք առնվազն 200.000 տոննի։

Արոտների ճիշտ ոգտագործման հետևյալ միջոցառումն արածացման ռացիոնալացումն է։ Ճիշտ արածացնելու ամենալավ յեղանակն արոտակոորային սիստեմն է։ Մեզ մոտ մի շարք կոլտնտեսություններ արոտակոորային արածացում կիրառում են, բայց ոչ լրիվ չափով։ Արոտակոորային արածացումն այն է, յերբ արոտը բաժանվում է 8—10 կոորի, և անասունները նրանց վրա արածում են հերթականորեն, նրանց վրայի կանաչի բարձրանալուն զուգընթաց։ Ազատ արածացման համեմատությամբ արածացման արոտակոորային սիստեմի կիրառման դեպքում ստացվում է 25%-ով ավելի կանաչ կեր։

Մենք կանգ չենք առնում արոտների արտադրողականությունը բարձրացնող մի շարք բոլորին հայտնի հասարակ միջոցառումների վրա, ինչպիսին են՝ քարեր հավաքելը, մոլախոտերը և թունավոր բույսերը վոչնչացնելը, ջրամբարների կառուցումը և այլն։ Այդ միջոցառումները ևս բավարար չափով չեն գործադրվում մեզ մոտ։

Մենք անհրաժեշտ ենք համարում դրա հետ միասին ավելի մանրամասն կանգ առնել մի արմատական ագրոտեխնիկական միջոցառման վրա, որի գործադրումով հենց առաջին տարվանից մարգագետինների ու արոտների բերքը կրկնապատկվում է։ Մենք նկատի ունենք գոմաղբը և գոմաղբահյութը։ Այդ պարարտանյութերն ստացվում են յուրաքանչյուր կոլտնտեսությունում, խորհտնտեսությունում. նրանք հանդիսանում են ամենից ավելի լիարժեք պարարտանյութերը, որ դրսից բերելու կարիք չկա։ Նրանք յուրաքանչյուր որ կուտակվում են հենց տնտեսության մեջ։ Ինդիրն այդ պարարտանյութերը ճիշտ պահելը և ժամանակին հողի մեջ մացնելն է, իսկ դրա համար անհրաժեշտ է յուրաքանչյուր կոլտնտեսության կից կառուցել հատուկ գոմաղբապահեստներ և միզահորեր։

Լոռու փորձակայանի 3—4 տարվա ընթացքում կատարած գիտական փորձնական աշխատանքներն ապացուցում են, որ խոտհարքները գոմաղբով պարարտացնելիս ոչ միայն բերքն է ավելանում 2—2,5 անգամ, այլև խիստ լավանում է մարգագետնի բուսականության կազմը. նրա մեջ սպիտակուցով հարուստ լոբազգի բույսերի տոկոսն ավելանում է։

Այստեղ մեզ կարող են առարկել, թե գոմաղբի ազդեցությունը բերքի բարձրացման վրա մեզ հայտնի յե. բայց ինչպես կլինի վառելիքի բանը, չէ՞ որ գոմաղբը ծառայում է որպես վառելիք։

Այս պրոբլեմն առանձնապես սուր է դրված անտառազուրկ շրջաններում, իսկ այդպիսի շրջանները մեր հանրապետության մեջ շատ են։

Նախ և առաջ պետք է ընդգծել, որ ֆերմայում կուտակվող ամբողջ գոմաղբը կոլտնտեսությունն իբրև վառելիք չի գործադրում։ Նրա զգալի մասը, վառելիքի պահանջը բավարարելուց հետո (չպետք է մոռանալ, որ կոլտնտեսականները գոմաղբ ստանում են նաև իրենց սեփական անասուններից), կարելի յե ոգտագործել իբրև պարարտանյութ։

Սակայն գոմաղբն ամբողջապես իբրև պարարտանյութ ոգտագործելու համար անհրաժեշտ կլինի ծառատնկումներ կատարել Ուկրաինայի անտառազուրկ շրջանների նման, որտեղ յուրաքանչյուր կոլտնտեսություն հատուկ հողամաս է առանձնացրել ծառեր տընկելու համար և սահմանել է ծառահատման այնպիսի սիստեմ, որի դեպքում լրիվ կերպով ապահովվում է վառելափայտի պահանջը։ Ներկայումս մեզ մոտ ևս առաջավոր կոլտնտեսությունները (Մարտունու, Բասարգեչարի, Ապարանի, Նոր-Բայազետի, Ախտայի շրջաններն) սկսել են արագ աճող անտառային ծառեր տնկել վառելափայտ ստանալու նպատակով։

Ծառատնկման միջոցով լուծվում է վոչ միայն վառելափայտի պրոբլեմը, այլև մերկացած հողամասերի ծառապատումը կբարելավի կլիմայական պայմանները և հզոր ազդակ կհանդիսանա գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում։

ԽՍՀՄ-ում, գլխավորապես նրա միջին գոտում (Պովոլժյե), միայն 1935 թվականին պաշտպանիչ ծառատնկում է կատարված 300 հազար հեկտար տարածության վրա։

Մենք այստեղ չխոսեցինք այն մասին, թե ինչ նշանակություն ունի ծառատնկումը լեռնալանջերը հեղեղումներից պաշտպանելու և, դրա շնորհիվ, ավելի ցածր ընկած արոտներն ու դաշտերը փնասվելուց պահպանելու գործում։

Գոմաղբն իբրև պարարտանյութ ոգտելու մյուս յեղանակը տորֆի ահագին պաշարն իբրև վառելիք և անասունների համար իբրև ցամքար ոգտագործելն է։

Ինչպես հայտնի յե, մեզ մոտ տորֆի պաշար կա Ստեփանավանի, Ամասիայի և Բասարգեչարի շրջաններում։ Արդեն ռեալ կերպով անցել են տորֆի մշակմանը։ միայն անհրաժեշտ է այն մտցնել կոլտնտեսության կենցաղի մեջ։ Ահա սրանք են այն ուղիները, որոնցով կարելի յե գոմաղբն ոգտել իբրև պարարտանյութ։

Խոտհարքների և կերային կուլտուրաների բերքատվությունն արագ բարձրացնելու համար, բացի գոմաղբից, մեր կոլտնտեսությունների համար հսկայական նշանակություն ունի գոմաղբահյութը կամ կենդանիների մեզը, որ, դժբախտաբար, մեր կոլտնտեսությունները համարյա չեն ոգտագործում պարարտացման համար։ Գոմաղբահյութն ամենաարժեքավոր պարարտանյութերից մեկն է, որովհետև նրա մեջ պարունակվում են այն գլխավոր սննդանյութերը, որոնց կարիքն զգում են կերաբույսերը, այն ել հեշտ յուրացվող վիճակում։ Զգալի քանակով գոմաղբահյութ կա ամեն մի կոլտնտեսությունում. առանձնապես կարևորն այն է, որ գոմաղբահյութը որպես վառելիք չի ոգտագործվում, այդ պատճառով ել կոլտնտեսությունում ստացվող ամբողջ մեզը կարելի յե ոգտագործել իբրև պարարտանյութ։

Խնդիրը կենդանիների մեզն ամբողջովին, առանց կորստի պահելն է։ Դրա համար գոմերին մոտիկ պետք է շինել հատուկ միզամբարներ, որի պատերն ու հատակը մեզի համար անթափանց լինեն։

Յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է գիտենա, որ մի մուրային շրջանի ընթացքում մեկ կովը, չհաշված ուրիշ տեսակի ու խմբի կենդանիներին, արտադրում է մոտ 2 տոնն մեզ։

Մեզն առանց կորստի միզամբարների մեջ հավաքելու համար անհրաժեշտ է, որ գոմի հատակն անթափանց լինի։

Միանգամայն ակներև է, որ, բացի մյուս բոլոր բաներից, միզամբարների կառուցումն ահագին նշանակություն ունի որպես կոլտնտեսության շենքերի ու բակերի մաքրություն պահպանելու արմատական միջոց։

Մեզի հավաքման համար նման հորեր պետք է կառուցել և յայլաներում՝ արոտները պարարտացնելու համար։

Արթիկի և Լենինականի շրջանների մի քանի կոլտնտեսություններ մեզ հավաքելու համար ոգտագործում են սիլոսի հորերը և խրամատները։ Այդ միանգամայն անթույլատրելի յե, որովհետև մեզով կեղտոտված սիլոս կերցնելիս անասունները կարող են վարակվել։

Միզամբարների մեջ հավաքված գոմաղբահյութը (մեզը) վաղ գարնանը հատուկ տակառների մեջ փոխադրում են խոտհարքներն ու արոտատեղերը և շաղ են տալիս նրանց վրա։ Սակայն նախքան գոմաղբահյութը խոտհարքներ փոխադրելը պետք է լուծել ջրով՝ մեկ մաս մեզին յերկու մաս ջուր խառնելով։ Այդ պատճառով միզամբարը հեռու չպետք է լինի ջրից։

Մեկ հեկտար խոտհարքի համար պետք է փոխադրել 20 և ավելի տոնն ջրկացրած գոմաղբահյութ՝ նայած նրա վորակին։ Մեր կոլտնտեսություններն առայժմ տվյալներ չունեն, թե վորքան է բարձրանում խոտհարքների բերքը գոմաղբահյութով պարարտացնելու շնորհիվ։ Յեվրոպական առաջավոր յերկրների, որինակ՝ Շվեյցա-

բիայի տվյալները ցույց են տալիս, որ գոմաղբահյութով պարարտացնելուց խոտհարքների 1 հեկտարից ստացվում է մինչև 70 ցենտներ խոտ։ Գոմաղբահյութով միայն խոտհարքներն ու արոտները չեն պարարտացնում։

Գոմաղբահյութը կարելի է մեծ հաջողությամբ գործադրել բերքի մակերեսային պարարտացում նաև կերի ճակնդեղի համար, այլև սիլոսային կուլտուրաների համար։

Գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն, կոլտնտեսությունները պետք է իրենց ֆերմաներին հատկացնեն որոշ հողամասեր և դրանք ոգտագործեն ֆերմային կից կերակուլտուրաներ ցանելու համար։

Ստալինյան կանոնադրության այդ ցուցումը բոլոր կոլտնտեսություններում չէ, որ կատարված է։ Յեվ հազիվ թե գտնվի մի կոլտնտեսություն, որ ֆերմային կից բավականին հող չունենա կերային ցանքաշրջանառություն ստեղծելու համար՝ ցանելով արմատապտուղներ և սիլոսային կուլտուրաներ։

Ստեփանավանի շրջանի Ստալինի անվան կոլտնտեսությունն ամեն տարի իր ֆերմայամերձ փոքր (4—5 հա) հողամասից ստանում է 20—25 հազար փութ կերի ճակնդեղ։ Միության առաջավոր կոլտնտեսություններում ֆերմայամերձ հողերից 1 հեկտարից ստանում են 85 տոննն սիլոսացու կերի կաղամբ։

Ահա սրանք են առատ կերի բազա ստեղծելու կարևորագույն միջոցառումները։

Այժմ յուրաքանչյուր կոլտնտեսականի, կոլտնտեսուհու համար պարզ է, որ մթերատվության ստախանովյան նորմաները, այսինքն՝ 3000 լիտր ավելի կաթ, 5—6 կգ բուրդ և մսի բարձր յելք, մեկ տարում վոչխարի յերկու ծին ստանալը և ցեղական անասուններին մասսայաբար մետիս և տոհմական անասուններով փոխարինելը պահանջում են ամենաարագ կերպով ստեղծել առատ կերի բազա, որն ապահովի անասնապահական մթերքների մաքսիմալ յելքը։

Այնուամենայնիվ մենք չսպառեցինք լրացուցիչ կերի պաշար ստանալու բոլոր ուղիները։

Գիտությունն ու պրակտիկան ապացուցել են, որ յերբ խոտհունձն ուշացնում են, խոտի սննդանութերը 35—40%-ով կորչում են։ Խոտի մեջ գտնվող սննդանյութերի, մանավանդ ամենից ավելի արժեքավոր նյութի ապիտակուցի այդպիսի անտնտեսավարի վատնում մենք նկատում ենք մեր շատ կոլտնտեսություններում։

Վերցնենք մի ուրիշ հարց։ Ինչպես ենք մենք նախապատրաստում խոտն անասուններին կերցնելու համար։ Միության առաջավոր խորհնտեսություններն ու կոլտնտեսություններն արդեն մի քանի տարի յե, ինչ հրաժարվել են խոտն անասուններին առանց նախապես ծղոտահատով մանրացնելու կերցնելու վոչ-խնայողական ձևից։ Միայն այս հասարակ միջոցառումը կտա մինչև 10—15% խնայողություն։ Իսկ վորքան սննդանյութ ենք մենք որական կորցնում խոտը չմանրացված վիճակում բաժանելով՝ դեզից գոմ փոխադրելու և հենց գոմում բաժանելու ժամանակ։ Այդ ամենից կարելի յե խուսափել խոտը մանրացրած վիճակում բաշխելու դեպքում։ Մանրացրած խոտի որական պաշարը կարելի յե նախապատրաստել 1 ժամում տրակտորի կամ ուրիշ շարժիչի միջոցով աշխատող ծղոտահատ կամ սիլոսահատ մեքենաներով։ Նույնը վերաբերում է հատիկին, որ տրվում է չաղացված վիճակում։

Մենք կանգ չենք առնում մարգագետիններից՝ յերկու անգամ քաղ ստանալու հարցի վրա, որը միանգամայն հնարավոր է, ինչպես և չենք խոսում մատղաշներին աճեցնելու համար արհեստական արոտներ ստեղծելու մասին, որը միանգամայն անհրաժեշտ է։

Մեծ կորուստներ ենք ունենում նաև սիլոսն անփույթ կերպով պատրաստելու հետևանքով, յերբ հորերի, խրամատների պատերը վատ են սվաղված լինում (գոնե տեղական կավով) և սիլոսային մասսան՝ վատ տափտափված ու ծածկված։

Ծղոտի սննդարարությունը կարելի յե կրկնապատկել սիլոսելու միջոցով, որ ապացուցվեց Շուրաբաթի և Յանբիի խորհնտեսություններում կատարված փորձերով։ Նույն արդյունքը կարող է ստացվել ծղոտը կրաջրով մշակելիս։ Մենք այլևս չենք շրջանակի թվել կերերի նախապատրաստման ձևերը. զոոտեխնիկական գիտությունն ու պրակտիկան մեզ տալիս են կերերի ռացիոնալ ոգտագործման բազմաթիվ ձևեր, մնում է, որ յուրաքանչյուր կոլտնտեսություն դրանք լայն կերպով կիրառի իր ֆերմայում։

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ միանգամայն բավական չէ անասուններին կոպիտ և հյութալի կերերով բավարարել։ Պրակտիկան ցույց է տվել, որ կոպիտ և հյութալի կերերին նույնիսկ քիչ քանակությամբ ուժեղ կեր ավելացնելն ինչպես ամառային

սեզոնում, այնպես էլ ձմեռային սեզոնում, հաշվելով գոնե մեկ կովին 5 ցենտներ տարեկան կոնցենտրատ, վոչխարին՝ 1 ցենտներ, իսկ մեկ խոզին՝ 3 ցենտներ, հսկայական էֆեկտ է տալիս անասունների մթերատվության ավելացման խնդրում։

Այդ պատճառով, վորպես կանոն, կոլտնտեսությունները պետք է ամեն տարի ընդհանուր բերքից պարտադիր կերպով առանձնացնեն ֆերմաների համար անհրաժեշտ քանակով խոտացրած կեր և հատկացնեն բացառապես անասուններին կերցնելու համար։

Կորնգանով և ուրիշ բազմամյա լոբազգի կուլտուրաներով զբաղված տարածությունն ընդարձակելով և մինչև 100 հազար հեկտարի հասցնելով, բնական խոտհարքները՝ մինչև 200 հազար հեկտարի, սիլոսի քանակը մինչև 200 հազար տոն դարձնելով, առանձնացնելով անհրաժեշտ քանակության կոնցենտրատ՝ հնարավոր կլինի տավարի քանակը յերրորդ հնգամյակի վերջում հասցնել առնվազն մինչև 1 մլ. գլխի, վոչխարների քանակը՝ 2 մլ. գլխի, խոզերինը՝ 200.000 գլխի, ձիերինը՝ մինչև 70 հազար գլխի։

Անասունների գլխաքանակի այս ավելացումը միաժամանակ մեզ կտա գոմաղբի հսկայական լրացուցիչ պաշար, վորը կորնգանի ազոտի հետ (1 հա կորնգանը հողին տալիս է 150—190 կգ ազոտ) միասին կբարձրացնի հացահատիկային կուլտուրաների բերքը։

Այս է ընկ. Ստալինի ցուցումի՝ 3—4 տարվա ընթացքում 7—8 միլիարդ փութ հացահատիկ ստանալու խնդրի իրագործման ուղիներից մեկը, մի ցուցում, վորն իր մեջ ճիշտ կերպով զուգորդում է նաև կերի բազայի ընդարձակման խնդրի լուծումը սոցիալիստական անասնապահության համար։

ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՈՀՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Սոցիալիստական անասնապահության հետևյալ վոչ պակաս հետաքրքրող բնագավառը տոհմական գործն է։

Անասնապահության 1500 առաջավորներն ամբողջ յերկրի առաջ ցուցադրեցին իրենց նվաճումները վոչ միայն անասունների քանակի աճման, այլև նրանց մթերատվության բարձրացման բնագավառում։

Բացի քանակից, մոտակա տարիներին, անասնապահության առաջավորների փորձի հիման վրա, մեզ հարկավոր է տանել խոշոր աշխատանք՝ անասունների մթերատվությունը, վորակը հասցնելու այն մակարդակին, վորին հասել են անասնապահության ստախանովականները։

Ինչ սովորեցրեց անասնապահության առաջավորների փորձը։ Նրանց փորձը ցույց տվեց, վոր կոլտնտեսականի ազնիվ աշխատանքը՝ զուգակցված անասնապահության տեխնիկայի յուրացման և անասունների նկատմամբ հոգատար վերաբերմունքի հետ, հրաշալի արդյունքներ է տալիս անասունների մթերատվության բարձրացման գործում։

Շքանշանակիր Գրիգոր Խաչատրյանն իր բրիգադի կովերի կթը հասցրել է ավելի քան 3000 կգ-ի։

Մոսկվայի մարզի «Կրասնայա Զարյա» կոլտնտեսության կթվոր Պերսիանցեվան իր մի խումբ կովերի միջին 1200 լիտր կթը հասցրել է 3420 լտրի։

Ստեփանավանի շրջանի Սարատովկա կոլտնտեսության կոլտնտեսուհի Ժաբինան իր «Ռոզա» անունով կովի կթը հասցրել է մինչև 5400 լտրի։

Նման որինակներ շատ կան նաև մյուս տեսակի կենդանիների վերաբերյալ։

Սակայն սխալ կլիներ մոռանալ, վոր միայն լավ կերակրելով կարելի յե ձեռք բերել անասունների մթերատվության այդպիսի բարձր ցուցանիշներ։ Անասնապահության առաջավորների փորձը ցույց է տվել, վոր այդպիսի բարձր մթերատվություն մեծ մասամբ հնարավոր է ստանալ ցեղական կամ լավացրած կենդանիներից։

Միանգամայն պարզ է, վոր վոչ-ցեղական կովի կթը 600 լտրից մինչև 3000—4000 լտրի հասցնել, առանց նրան վերափոխելու և լավացրած ցեղական կով դարձնելու, բավական դժվար է։

Անասունների մթերատվության բարձրանալու հետևանքով կբարձրանա կոլտնտեսությունների անասնապահության յեկամտաբերությունը։ Կարիք կա արդյոք ապացուցելու, վոր յերկու-յերեք անգամ շատ կաթ տվող կովերը կամ յերկու անգամ շատ բուրդ տվող վոչխարները կոլտնտեսության համար ավելի ձեռնտու կլինեն։

Այստեղից պարզ է, թե ինչու կուսակցությունն ու կառավարությունն անասնապահության բնագավառում աշխատողների առաջ խնդիր դրին՝ 1937 թվականին ավարտել վոչ-ցեղական անասուն-

ներին ցեղական լավացրած անասուններով փոխարինելու աշխատանքը։ Այդ աշխատանքը կարելի չէ կատարել սոցիալիստական անասնապահության պրակտիկայում միանգամայն փորձված ճանապարհով, այն է՝ տեղական վոչ-ցեղական անասուններին մեխանացնելով տոհմական անասունների հետ։

Վերջին տարիները մեխիզացիան ընդգրկում է վոչ-ցեղական անասունների ավելի ու ավելի լայն մասսիվներ։

Միայն մեր հանրապետության մեջ 1936 թվականի ընթացքում մենք արտասահմանյան լավագույն ցեղերով պետք է մեխանացնենք ավելի քան 120 հազար գլուխ տավար և վոչխար։

Նախահեղափոխական Հայաստանը յերբեք խնդիր չի դրել փոքր ինչ պլանային մեխիզացման յենթարկել անասուններին։ Այն ժամանակ այդ ուղղությամբ կատարված ձեռնարկումները կրում [եյին մասնավոր-կալվածատիրական ընույթ և առանձին կալվածատիրական - կուլակային տնտեսությունների սահմաններից դուրս չեյին գալիս։ Այն ժամանակվա վորևե տոհմական գործի մասին խոսելու կարիք չկա, վորովհետև այդպիսի բան գոյություն չի ունեցել։

Բոլորովին այլ է գործը Խորհրդային իշխանության ժամանակակած 1924 թվականից ամեն տարի Հայաստան տոհմական անասուն է ներմուծվում։

Մեխիզացիան, վորպես տոհմական գործի հիմնական տարրերից մեկը, տարվում է սիստեմատիկաբար, վորպես մի պլանաչափ պետական ձեռնարկում։

Անասունների մեխիզացման աշխատանքները տարվում են ցեղերի շրջանացման խիստ մշակված պլանով, ըստ վորի վորոշված է թե վոր շրջանում ինչ ցեղ է պլանային ընդունված տեղական անասունների լավացման համար։ Ցեղերի շրջանացման աշխատանքների հիման վրա Հայաստանի համար, իբրև պլանային լավացնող ցեղեր, ընդունված են.

տավարի համար—շվից և սիմենթալ ցեղերը.

վոչխարի համար—ռամբուլյե տիպի նրբաբուրդ մերինոսը, պրեկոս և կարակուլ ցեղի վոչխարները.

այծերի համար—անգորական այծը.

խոզերի համար—անգլիական խոշոր սպիտակը.

ձիերի համար—անգլիական զտարյուն արագավազը։

Պլանային ցեղերի այդպես սահմանափակ լինելու նպատակն է՝

ստեղծել միատիպ կենդանիներ՝ անասունների ստանդարտ սերունդ ստանալու համար։

Ակամա հարց է առաջ գալիս՝ տոհմական անասունների ինչպիսի աղբյուրներ ունենք մեխիզացման այդքան ընդարձակ պլան կատարելու համար։

Վերջին մի շարք տարիների ընթացքում մենք ամեն տարի Միության այլ վայրերից Հայաստան ենք ներմուծել հարյուրավոր գլուխ տոհմական անասուններ։

1934 թ. ներմուծված եր 150 գլուխ շվից ցեղի ցուլ և անգլիական ցեղի վարազ, 1935 թվականին՝ մոտ 800 գլուխ, իսկ 1936 թվականին ներմուծված տոհմական անասունների ընդհանուր թիվը կազմում է 7000 գլխից ավելի։

Մեխանացման համար տոհմական անասուններ ներմուծելը հետագայում ևս կհանդիսանա տեղական տավարի լավացման ամենագլխավոր միջոցառումը։ Ամերիկան մինչև հիմա ել տարեցտարի Յեվրոպայից ներմուծում է լավագույն տոհմական կենդանիներ՝ իր նախիրների հետագա կատարելագործման համար։

Ներմուծմանը զուգընթաց, մենք մեր հանրապետության մեջ արդեն ստեղծել ենք տոհմական անասունների ոջախներ։ Մեզ մոտ է գտնվում շվից տավարի Ստեփանավանի պետական տոհմաբուծարանը, վոր մտնում է Միության 17 պետտոհմաբուծարանների ցանցի մեջ։ Նա իր գործունեությամբ ընդգրկում է 30000 գլխից ավելի տավար։

Նրա մեջ են մտնում մեր յերկու գլխավոր տոհմական խորհրդատեսությունները՝ Լոռու և Ղարաղալայի, վորոնք ունեն 2000 գլուխ տոհմական անասուններ։ Ստեփանավանի պետտոհմաբուծարանի նշանակությունն արդեն հիմա դուրս է յելել մեր հանրապետության սահմաններից։ Միայն 1935 թվականին տոհմաբուծարանից արտահանված է Վրաստան, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս և ուրիշ հանրապետություններ մոտ 1000 գլուխ տոհմական անասուն։

Ինվենտարիզացիայի տվյալներով՝ մեր ամբողջ հանրապետության մեջ 1935 թ. հունվարի 1-ին կար հետևյալ թվով տոհմական անասուն.

Չի՝ 150 գլուխ, տավար՝ 23770 գլուխ, վոչխար և այծ՝ 305 հազար գլ. մագեխ և բալբաս, վորոնք ներկայումս մեխանացվում են մերինոսով և կարակուլով, և խոզեր՝ 7300 գլուխ։

Այդ տոհմական կազմի մեջ շվից և սիմենթալ արտադրողները կազմում են 600 գլուխ, վորոնք 1936 թվականին ներմուծելիք շվից ցուլերի հետ միասին լիովին կապահովեն մեռիսացման 1936 թվականի պլանի կատարումը։

Բայց դրա համար անհրաժեշտ է հաղթահարել մի քանի շրջաններում գոյություն ունեցող հակապետական այն պրակտիկան, ըստ վորի առաջին սերնդի մեռիս ցուլերը մեռիսացման համար նպատակահարմար չեն։ Մեռիսացման այդ ահագին պահեստը պետք է լրիվ կերպով ոգտագործվի։ Մենք մեր հանրապետության մեջ ունենք մոտ 5000 արտադրող ցուլ, վորոնց մեծ մասը ցեղական չի։ Նրանց պետք է առաջին հերթին փոխարինել առաջին սերնդի մեռիս ցուլերով։ Զոոտեխնիկայի պրակտիկայով ապացուցված է, վոր առաջին սերնդի ցուլերով կատարված մեռիզացիայի առավելությունը՝ համեմատած վոչ ցեղական ցուլերով կատարվածի հետ՝ ակներև է։

Ներկայումս, յերբ մենք տոհմական արտադրողների հսկայական պակաս ունենք՝ առաջին սերնդի մեռիսների ոգտագործման վերաբերյալ յեղած ամեն մի արհամարհանք անհրաժեշտ է դիտել վորպես մի հակապետական քայլ։

Պետք է խիստ պատժել բոլոր նրանց, ովքեր կամորձատեն կամ չեն ոգտագործի առաջին սերնդի մեռիսներին և դրանով կարգելակեն մեր վոչ-ցեղական անասունների մեռիսացման տեմպերը։

Բացի դրանից, մենք ունենք մեռիսացման այլ ռեզերվներ, վոր մենք դեռ լրիվ մոբիլիզացիայի չենք յենթարկել։ Լավ պահելու դեպքում ցուլն ընդունակ է ծածկել 100 և ավելի կով։ Լոռու տոհմաընտեսությունում մի ցուլ՝ «Մեյստեր» անունով, 1935 թվականին ծածկել է 150—200 կով։ Իսկ պրակտիկայում, մի շարք կոլտնտեսություններում և նույնիսկ խորհտնտեսություններում առանձին, նույնիսկ դատարյուն ցուլերն ամբողջ տարին ծածկում են վոչ ավելի քան 20—30 կով։

Հանրապետության տոհմական ֆոնդի այսպիսի գիշատիչ վատնումն անհրաժեշտ է ամենավճռական կերպով արմատախիլ անել։

Այդ տեսակետից առաջին քայլը պետք է լինի մեր կոլտնտեսությունների պրակտիկայից վերացնել ազատ զուգավորումը՝ հետաքրքիր անասնապահության այդ ամենալի ժառանգությունը, և անցնել ձեռնաքաշ զուգավորման և առանձնապես զուգավորման ավելի կատարյալ տեխնիկային—արհեստական սերմնավորմանը։

Արհեստական սերմնավորման առավելությունը, ձեռնաքաշ զուգավորման հետ համեմատած, այն է, վոր արհեստական սերմնավորման մեթոդը հնարավորություն է տալիս մեկ լավագույն արտադրողով սերմնավորել 5—6 անգամ ավելի շատ թվով մայրեր։

Աշխատանքի այդպիսի արտադրողականության դասական որինակ է հանդիսանում Խորհրդային Միության լավագույն սերմնավորող՝ Հյուսիսային Կովկասի կոլտնտեսական Յակով Ցըբուլիի փորձը. նա կարողացել է մի լավագույն խոյի սպերմայով սերմնավորել 3554 մաքի։ Բացի այդ, արհեստական սերմնավորումն անասունների ստերջությունը—մեր անասնաբուծության այդ խարազանն իջեցնում է մինչև 2%-ի։

Պետք է պատկերացնել, թե ինչ ահագին հեղափոխող ազդեցություն է գործում արհեստական սերմնավորման մեթոդը, յեթե հաշվի առնենք, վոր միայն մի սեզոնում հնարավոր է լավագույն տոհմական արտադրողների բարձր արտադրողականության ժառանգական հատկությունները փոխանցել մի քանի հազար մայր անասունի։

Տոհմական գործի ընդգավառում արհեստական սերմնավորումը կարող է հեղաշրջում առաջացնել։

Այդ մեթոդի շնորհիվ մի քանի անգամ կարագանան տոհմական անասունների ընդլայնված վերարտադրման տեմպերը։

Արհեստական սերմնավորման մեթոդը մացվում է մեզ մոտ՝ Հայաստանում՝ առաջին անգամ, վորպես պետական առաջադրանք։

Մեռիսացման խնդիրն առանձնապես լայն է դրված, շնորհիվ ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համկ(բ)կ Կենտկոմի, այլև ՀԽՍՀ Ժողկոմխորհի և Հկ(բ)կ Կենտկոմի վորոշումների՝ նրբագեղմ վոչխարաբուծության զարգացման պետական պլանների մասին։ Այդ վորոշման համաձայն, Հայաստանում առաջին անգամ միայն 1936 թվականին պետք է մեռիսացվի 65 հազար գլուխ վոչխար, վորից 30 հազարն արհեստական սերմնավորման մեթոդով։ Այդ պլանը կատարելու համար Հայաստան է ներմուծված 1300 գլուխ ռամբուլյե տիպի մերինոս և պրեկոս ցեղի նրբաբուրդ խոյ։

Դրանք ինչ ցեղեր են և վորքան ձեռնտու յե նրանց բազմացնել մեզ մոտ՝ Հայաստանում։ Նախքան այդ հարցին պատասխանե-

լը, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել ուրիշ ցեղերի վրա, որոնք մեզ մոտ ստացել են քաղաքացիական իրավունք։

Ներկայումս, յերբ մեխանացման չափերը հիացնում են իրենց վիթխարությամբ, ակամա ցանկություն է առաջանում հիշել այդ աշխատանքի առաջին ետապները։ Կար ժամանակ, յերբ գիտական մանագեսների վորոշ մասը, վորոնց մեջ առանձնապես կենտրոնակ են ազգայնական հայացքները, մեծ աղմուկ եյին բարձրացնում մեզ մոտ ոտարերկրյա ցեղ—շվից ներմուծելու դեմ, իսկ ամենավերջին շրջանում՝ նաև կարակուլի դեմ։ Նրանք պահանջում եյին մաքուր դրությամբ պահել մեր տեղական ցեղերը։ Պակաս չանք չպահանջվեց մեր գիտականների շրջանում գտնվող այդ նացիոնալիստական ելեմենտների դիմադրությունը կոտրելու համար։

Իսկ հիմա կոլտնտեսություններն այնքան շվից ցուլ են պահանջում, վոր մենք ի վիճակի չենք բավարարելու։ Հարցրեք Կոտայքի շրջանի Զառ գյուղի կոլտնտեսության վոչխարաբուծական ֆերմայի վարիչ Յերվանդ Մինասյանին, վոր յերկու տարվա ընթացքում իր հոտի 1000 գլ. վոչխարը մեխանացրել է կարակուլ ցեղի հետ։ Նա հիացած է կարակուլով։ Նա ձեզ կպատմի, թե ինչպես բարձրացավ կոլտնտեսության յեկամուտը՝ կարակուլով մեխանացնելու հետևանքով։ Յուրաքանչյուր տարի կոլտնտեսությունը հարյուրավոր կարակուլի մորթի, հատը 50—60 ռուբլով, հանձնում է պետությանը։

Կարակուլ բազմացնող կոլտնտեսությունների համար պետության սահմանած արտոնությունների շնորհիվ, Զառի կոլտնտեսությունը 1600 մաքուց վոչ մի կիլո միս պետությանը չի հանձնում։

Իսկ վորքան հակապետական խոսակցություններ կային Հայաստանում կարակուլի բուծման շուրջը։ Այժմ դրանք հոգս են ցնդել

Նման խոսակցություններ են տեղի ունենում ներկայումս նաև բալբաս ցեղի շուրջը։

«Զթողնել արդյոք բալբասը մաքուր դրությամբ, այսինքն՝ այդ ցեղը չմեխանացնել։ Չե՞ վոր այդ ցեղի բուծման համար մենք ստեղծեցինք հատուկ պետական բուծարան Մարտունում», ասում են նրանք։

Մարտունու պետ-տոհմաբուծարանը ճնում է, սակայն նրա աշխատանքի մեթոդները փոխվում են։ Բալբասը մենք կմեխանացնենք ռամբուլյե տիպի նրբաբուրդ մերինոսով և դուրս կբերենք մեր նոր ցեղը, բայց արդեն նրբաբուրդ։ Ի՞նչն է ռամբուլյե և պրեկոս ցեղերի առավելությունը։

Այդ ցեղերն ստացված են սպանական մերինոսից։ Ի դեպ ասած՝ Սպանիան իր բնական պայմաններով շատ նման է Հայաստանին։

Ռամբուլյեյի և պրեկոսի առավելությունները՝ համեմատած բալբասի և մեր մյուս կոպտաբուրդ ցեղերի հետ՝ յերևում է հետևյալ տվյալներից։

	Կենդանի քաշը կիլոգրամ		Բրդի քանակը	
	Խոյի	Մաքու	Խոյի	Մաքու
Բալբաս	60 70	50—55	2,5	1,8
Պրեկոս	80—90	60—65	6—7	4—5
Ռամբուլյե	70—80	50—55	7—8	5—6

Նրբաբուրդ խոյերով մեխանացնելու դեպքում տեղական կոպտաբուրդ վոչխարների կենդանի քաշը վոչ միայն չի պակասում, այլև ավելանում է, իսկ բրդի քանակը կրկնապատկվում և նույնիսկ յեռապատկվում է. պետությունն ել այդ բուրդը կրկնակի թանգ է գնահատում։ Այն ֆերմաները, վորոնք իրենց վոչխարները մեխանացնում են նրբաբուրդ վոչխարներով, յուրաքանչյուր մաքուց 8 կգ փոխարեն պետությանը հանձնում են 6 կգ միս։

Միությունում ռամբուլյե ցեղի մերինոսների ամենալավ հոտը գտնվում է Ուկրաինայում, վորը միջին հաշվով 1 մաքուց տալիս է 6—8 կգ, իսկ մեկ խոյից՝ 10—12 կգ նուրբ բուրդ, և 100 մաքուց տալիս է 145 գառ, շնորհիվ մեծ տոկոս յերկվորյակների։

Խնդիրն այն է, վոր մոտակա մի քանի տարում մեր կոպտաբուրդ վոչխարները նրբաբուրդ խոյերի միջոցով մեխանացնելով ստեղծենք հայկական ռամբուլյեյի տիպը։

Ինչու կուսակցությունն ու կառավարությունն այդպես խիստ են դրել նրբաբուրդ վոչխարաբուծության զարգացման հարցը։ Վորովհետև մեր յերկրի աշխատողներն ավելի մեծ պահանջներ են դնում բուրդ վերամշակող արդյունաբերությանը, նրանք պահանջում են ամուր, բարձրորակ բրդի գործվածք՝ գեղեցիկ հագնվելու համար։

Նախահեղափոխական գուղացիությունն այդպիսի պահանջներ չեր դնում և չեր ել կարող դնել։

Պետության առաջադրանքի համաձայն, նրբաբուրդ խոյերով մեխիսացման պետք է յենթարկվեն վոչ միայն կոլտնտեսությունների հոտերը, այլև կոլտնտեսականների հոտը։ Մի քանի աշխատողների մեջ նկատվում են կոլտնտեսականների հոտի լավացման նկատմամբ անուշադիր վերաբերմունքի տենդենցներ։ Այդ մասին լավ ասաց Համկ(բ)կ Կենտկոմի գյուղբաժնի վարիչ ընկ. Յակովլեվն անասնապահության առաջավորների խորհրդակցության ժամանակ՝ Մոսկվայում. «Ըստ յերևույթին կան դեռևս այնպիսի „ձախիկներ“, յեթե արտահայտվենք մեր լեզվով, կուսակցական լեզվով, իսկ պարզապես՝ „հիմարներ“ (ընդհանուր ծիծաղ դահլիճում), վորոնք կարծում են, թե իրենք պաշտպանում են սոցիալիզմը, յերբ ֆերմաների վոչխարներին ծածկում են տոհմական նրբաբուրդ ռամբուլյե տիպի մերինոսով, իսկ կոլտնտեսականների սեփական վոչխարները կամ ծածկում են վոչ-ցեղական, վատ արտադրող, կոպտաբուրդ, փոքր քաշ ունեցող խոյերով, կամ կոլտնտեսականների վոչխարների համար բոլորովին խոյ չեն տալիս»։

Գյուղատնտեսական արտելի Usալինյան կանոնդրության համաձայն վոչ միայն հնարավորություն պետք է տալ կոլտնտեսականին անհատական ոգտագործման համար անասուններ պահելու, այլև աշխատել, վոր նրա անասունները լավացրած լինեն։

Մեխիզացիայի ընդարձակ ծրագիրն իրագործելու համար հատուկ կուրսերի միջոցով արդեն պատրաստված են 100 հոգուց ավելի սերմնավորող՝ տեխնիկ անասնապահներից, զոոտեխնիկներից, ֆերմայի վարիչներից և լավագույն հովիվներից։

Սակայն միայն դրանով մեխիզացիայի գործը հաջողություն չի ունենա։ Պետք է բավական քանակությամբ շենքեր կառուցել սերմնավորման կետերի համար և դրանք կահավորել։ Անհրաժեշտ է կառուցել վոչխար լողացնելու ավազաններ՝ քոսով հիվանդացածը կանխելու համար։ Յեվ, վերջապես, ամենագլխավորը, առաջին անգամ Հայաստանում ստացված 1300 գլուխ նրբաբուրդ խոյերին պետք է այնպես պահել, խնամել ու կերակրել, վոր զուգավորման մոմենտին և զուգավորման ամբողջ սեզոնում նրանց սպերման քանակով ու վորակով մնա բարձր մակարդակի վրա։

Պետք է ամբողջապես մերկացնել հնարավոր թշնամական վերաբերմունքը վոչխարների մեխիսացման նկատմամբ և ամենավրձռական կերպով արմատացնել մեխիզացիան։

Մեծ խնդիր է դրված նաև խոզաբուծության մեխիսացման ուղղությամբ։ 1936 թվականին բոլոր մայր խոզերը պետք է մեխիսացվեն անգլիական խոշոր սպիտակ ցեղով (յորքշիր)։

Ամբողջ աշխարհում այդ ցեղն ընդունված է վորպես վոչ-ցեղական խոզերի ամենալավ ազնվացնողը։ Այդ նպատակի համար միայն 1936 թվականին կներմուծվի և կբաշխվի կոլտնտեսություններին 500 ցեղական յորքշիր վարազ-արտադրող։

Մեզ մոտ խոզաբուծության զարգացման հարցի մեջ նորն այն է, վոր խոզաբուծությունը, վոր քանակով ներկայումս արդեն յերկու և ավելի անգամ ավելացել է՝ համեմատած նախապատերազմյան քանակի հետ, պետք է զարգացնենք ամեն տեղ, հանրապետության բոլոր շրջաններում, մասամբ այդտեղ խոզեր փոխադրելով հիմնական խոզաբուծական շրջաններից՝ Շամշադինից, Իջևանից, Դիլիջանից և այլն։

Այդ կարելի կլինի կատարել, յեթե նոր շրջաններում յուրաքանչյուր կոլտնտեսություն պահի առնվազն 2—3 մերուն և մեկ ցեղական վարազ։ Միաժամանակ անհրաժեշտ է կազմակերպել այդ շրջանների կոլտնտեսականներին՝ նրանց սեփական տնտեսության համար՝ տոհմական և լավացրած գոճիներ լայն կերպով վաճառելու գործը։

Առանձնապես մեծ չափով մենք հետ ենք մնում ձիաբուծության լավացման բնագավառում։

Մեր շրջանների մեծ մասում բուծվող տեղական ձին դեռևս բարձահասակ և վաղահաս չե և այդ պատճառով բավարար չափով չի համապատասխանում մեր բանակի և գյուղատնտեսության պահանջներին։

Մեր տեղական ձիու ազնվացումը մենք կատարում ենք տարբեր արյունախառնության անգլիական արագավազի միջոցով, վորը հանդիսանում է լավագույն ունիվերսալ լավացնողը վոչ-ցեղական ձիեր ունեցող շատ յերկրների համար։

Ձիերի գլխաքանակի ընդլայնված վերարտադրմանը խոշոր վնաս է հասցնում զամբիկների գիշատիչ ոգտագործումը։ Ձիու հետ այդպես վարվելու հետևանքով, այն շրջաններում, վորտեղ մի շարք տարիներ զուգավորման կետերում աշխատում էին պեռձիաբուծարանի ախոռի ցեղական հովտակները, բավարար քանակությամբ տոհ-

մական սերունդ չկա։ Այդ բացատրվում է նրանով, որ զամբիկնե-
րի որոշ տեսակը վիժում է, իսկ մատղաշները վատ խնամքի հետևանքով շատ քիչ են պահպանվում։

Ձիաբուծության ընդարձակում տեղի ունեցող խայտառակ
դեպքերին վերջ դնելու համար Հայաստանի Կենտկոմն ու Ժողկոմխորհը որոշում են կայացրել բոլոր զամբիկներին կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում ազատել ամեն տեսակի աշխատանքից, իսկ կոլտնտեսականների և մենատնտեսների զամբիկներն ազատել աշխատանքից, համաձայն գոյություն ունեցող որենքների՝ յերկու ամիս ծնելուց առաջ և 15 որ՝ ծնելուց հետո։

Այս որոշումը կատարելու և միաժամանակ ձիաբուծական
ֆերմաներում աշխատանքները լավացնելու դեպքում ավելի արագ տեմպերով կընթանա ձիերի տոհմական վերարտադրման գործը։

Ձիաբուծության հետ միասին՝ մեծ խնդիր է դրված ջորեբու-
ծության և իշաբուծության զարգացման ուղղությամբ։ Կենդանի քաշող ուժի ընդհանուր բալանսի մեջ այդ յերկու ճյուղն ել մեծ ժողովրդատնտեսական նշանակություն ունեն, նկատի ունենալով մեր հանրապետության լեռնային ռելյեֆը։

Վերջին տարիները մենք ջորեբուծության համար սկսել ենք
ներմուծել բուխարական եշեր, սակայն առանձին կոլտնտեսությունների պրակտիկան ցույց տվեց, որ տեղական եշերի խնամքով ընտրությունը տեղական ջորիներ ստանալու համար վատ արդյունքներ չի տալիս։

Այդ պատճառով, ջորեբուծական ֆերմաների համար բուխա-
բական եշեր ներմուծելուն զուգընթաց, մենք խնդիր ենք դրել հատուկ իշաբուծական ֆերմաներ կազմակերպելու միջոցով տեղական եշեր բազմացնել։

Ջորիների տնտեսական նշանակությունը լավ հայտնի յե Մեղ-
րու, Միկոյանի, Ազիզբեկովի, Ղափանի և ուրիշ շրջանների մեր կոլտնտեսականներին։ Նրանք պահանջկոտ չեն, շատ դիմացկուն են և, վերջապես, յերկարակյաց են։ Սպանիայի մի քանի շրջաններում ջորիներն ապրում են մինչև 90 տարի։ Այս հանգամանքները ջորուն դարձնում են անգնահատելի։ Մենք դեռ չենք խոսում այն նշանակության մասին, որ ունի ջորեբուծությունը յերկրի պաշտպանության համար։

Այդ ամենը մեզնից պահանջում է մեծ ուշադրություն դարձնել ջորեբուծության և իշաբուծության զարգացման վրա։

Այսպիսով մեզ մոտ անասունների բոլոր տեսակները պետք է
յենթարկվեն պլանաչափ մասսայական մեխիզացիայի։

Ներկայումս, յերբ մասսայական մեխիզացիան դարձել է իրա-
կանություն, շատ կարևոր է ճիշտ կերպով սահմանել, թե վոր լավացող պլանային ցեղը վոր շրջանում պետք է տեղավորենք։ Համաձայն ցեղային շրջանացման պլանի, շվից ցեղը մենք պետք է տարածենք հանրապետության բոլոր շրջաններում։ Սիմենթալ ցեղը ծրագրվում է տարածել նախալեռնային շրջաններում, Ստեփանավանի, Սիսիանի, Ախտալի, Լենինականի շրջանների առանձին գյուղխորհուրդներում և բոլոր բամբակացան շրջաններում։

Սիմենթալը բամբակացան շրջաններում տարածելը վոչ վոքի
չպետք է շփոթեցնի, վորովհետև այդ շրջանները ներմուծվում են գլխավորապես սիմենթալ ցուլեր, վորոնք պետք է մեռիսացնեն բամբակացան շրջանների կովերին, վորոնց մեռիս սերունդը մինչև հասուն դառնալը, անկասկած, տեղի կլիմայական պայմաններին վարժված կլինի։

Նրբաբուրդ վոչխարաբուծությունը պետք է տարածվի բոլոր լեռ-
նային շրջաններում։ Կոտայքի, Արթիկի, Միկոյանի և մասամբ Ազիզբեկովի շրջանները, այլև բոլոր բամբակացան շրջանները հատկացվում են կարակուլ վոչխարների տարածման համար։

Անգլիական ցեղի յորքշիր խոզը և անգլիական արագավազը
պետք է հանդիսանան տեղական խոզերի և ձիերի լավացնողները՝ Հայաստանի բոլոր շրջաններում։

Անասունների լայն մեխիզացիա անցկացնելու հետ միասին
անհրաժեշտ է պլանաչափ սելեկցիոն-տոհմական աշխատանք ծավալել։

Սելեկցիոն-տոհմական աշխատանքի կարևորագույն տարրն է
հանդիսանում իրենց ժառանգական՝ անտեսապես ոգտակար՝ հատկությունները սերնդին լավ փոխանցող արտադրողների ստուգումն ու ընտրությունը։

Պետք ճիշտ կերպով ընտրվեն լավագույն մայրերը՝ լավագույն
արտադրողներների հետ նրանց զուգավորելու համար։ Տոհմական գործի այս տարրական պահանջը մեր մի շարք խորհտնտեսություններում ու կոլտնտեսական ֆերմաներում դեռևս չի կատարվում։

Մեզ մոտ շատ անբավարար է տարվում (նույնիսկ պետ-տոհմաբուծարաններում) կոլտնտեսություններին, կոլտնտեսականների և մենատնտեսների տոհմական անասուններին հայտաբերելու և ՇՏՄ (շրջանային տոհմական մասյան) և ՊՏՄ (պետական տոհմական մատյան) գրանցելու աշխատանքը։

Մի շարք շրջաններ մինչև այժմ էլ դեռևս վոչ մի պատկերացում չունեն, թե ինչ տոհմական ֆոնդ ունեն իրենց շրջանում։ Դրա հետևանքով անասունների ընդհանուր թվից ՊՏՄ և ՇՏՄ են գրանցված ընդամենը 11.000 անասուն։

Շատ վատ է դրված կոնտրոլ-տոհմական հաշվառումը տոհմական ֆերմաներում և խորհնտեսություններում, իսկ առանց ճիշտ դրված կոնտրոլ-տոհմական հաշվառման բոլորովին չի կարելի ճիշտ սելեկցիոն-տոհմական աշխատանք պատկերացնել։

Մենք դեռ վոչ բավարար չափով, ավելի ճիշտ՝ համարյա բոլորովին չենք ներգրավել կոլտնտեսականներին մասսայական-սելեկցիոն աշխատանքի մեջ։ Իսկ չէ՞ որ նրանց մեջ կան լավ վարպետներ՝ տոհմական անասունների ընտրության և մեծացման գործում։

Այդպիսի կոլտնտեսականներին պետք է ճանաչել, պետք է խրճիթ լաբորատորիաների միջոցով առաջ մղել կոլտնտեսական փորձարարությունը տոհմական գործում։

Պետք է վերջ դնել այն կորվածությանը, որ գոյություն ունի մեզ մոտ գիտահետազոտական հիմնարկների և խրճիթ-լաբորատորիաների միջև։

Անհրաժեշտ է սելեկցիոն տոհմական աշխատանքի մեջ ընդգրկել կոլտնտեսական ապրանքային ֆերմաների լավագույն առաջավոր կոլտնտեսականներին։ Այն ժամանակ սելեկցիոն-տոհմական աշխատանքը, անասունների լայն մեխանացման հիման վրա, առաջ կմղվի այնպիսի տեմպերով, որ մեր տեղական անասուններն արագ կվերափոխվեն և մենք կունենանք բարձր մթերատու տոհմական սոցիալիստական անասնաբուծություն։

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

Ցավ, վերջապես, այս տարվա ամենակենսական խնդիրը յուրաքանչյուր կոլտնտեսականի, խորհնտեսության բանվորի, բրիգադի, ֆերմայի, կոլտնտեսության, խորհնտեսության, պետկոոպկազմակերպության—այդ ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԽՍՀ ԺԿԽ-ի կողմից հաստատված անասնաբուծության զարգացման 1936 թվականի պետական պլանի կատարումն ու գերակատարումն է։ Այդ նշանակում է, այս տարի յերկրին տալ, այսինքն՝ աճեցնել և պահել 1936 թվականի վերջին 8.500 քուռակ, 151.890 հորթ, 345.080 գառ և ուլ, 72670 գոճի։

Այդ նշանակում է 1936 թվականի վերջին ձիերի թիվը հասցնել մինչև 52.000 գլխի, տավարի թիվը՝ մինչև 671,530 գլխի, խոզերի թիվը՝ միայն խորհնտեսություններում ու կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում՝ մինչև 35.800 գլխի, իսկ վոչխարների ու այծերի թիվը միայն խորհնտեսություններում և կոլտնտեսական ապրանքային ֆերմաներում՝ մինչև 360—380 հազար գլխի։

Այդ նշանակում է այս տարի հնձել 205.000 հա—բնական խոտհարք, 16.000 հա ցանովի խոտ, սիլոսացնել 50.000 տոն վայրի բուսականություն և սիլոսային կուլտուրաներ և բարելավել 75.000 հա մարգագետին ու արոտատեղ։

Այդ նշանակում է կովագրկությունը վերացնելու նպատակով կոնտրակտացիայի յենթարկել և հանձնել կոլտնտեսականներին՝ 17.000 հորթ, կոնտրակտացիայի յենթարկել կոլտնտեսական ապրանքային ֆերմաների համար 12.000 հորթ, կազմակերպել տասնյակ և հարյուրավոր ջորեբուծական, եշաբուծական ձիաբուծական և այլ ֆերմաներ, հանձնել կոլտնտեսականներին ու կոլտնտեսություններին 15.000 հավի ճուտ, 1000 գոճի և ուրիշ տեսակի անասուններ, հանձնել կոլտնտեսականներին 30.000 վոչխար և գառ, կազմակերպել նոր զոոշրջաններ ու անասնաբուժական կետեր և պատրաստել նոր կադրեր։

Պետք է ամենայն լրջությամբ և պատասխանատվությամբ շեշտել, որ այս տարվա անասնապահության զարգացման պետական պլանի կատարումը՝ մի շարք շրջաններում և կենտրոնում—Հողժողկոմատում հանդստացուցիչ տրամադրություններ գոյություն ունենալու հետևանքով և անասնապահության զարգացման համար հենց տարվա սկզբից թույլ պայքար ծավալելու շնորհիվ՝ գտնվում է վտանգի տակ։

Առանձնապես վատ է ընթանում աշխատանքը ձիերի գլխաքանակի և քուռակների աճեցման, խոզերի գլխաքանակի և խոճկորների աճեցման պլանի կատարման համար։ Շատ շնչին ուշադրու-

թյուն և զարգվում կովազրկության վերացման, ֆերմաների համար հողթեր գտնելու, կոլտնտեսականներին վոչխարներ և եզ գառներ տալու, բեղմնավորման, մեխանացման, արոտներն ու խոտհարքները բարելավելու և անասնագոմերի կառուցման պլանների կատարման վրա։ Այդ աշխատանքները մեզ մոտ գտնվում են ուղղակի խայտառակ վիճակում։

Պետական պլանը բոլոր գծերով հաջողությամբ կատարելու և գերակատարելու համար մենք ունենք բոլոր հնարավորությունները։ Անհրաժեշտ է լայն կերպով արմատացնել աշխատանքի ստախանովյան մեթոդը։ Հաշվի առնել անցյալ տարվա անասնապահության զարգացման պետական պլանի կատարման ընդհանրացում մի շարք ցուցանիշների խայտառակ թերակատարումը։

Կենտրոնական և շրջանային կուսակցական և խորհրդային կազմակերպություններն ու հողորգանները պետք է ամենայն վճռականությամբ պայքար ծավալեն լրիվ կատարելու ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Ժողկոմխորհի հունիսի 26-ի՝ անասնապահության զարգացման պետական պլանի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի վերջին պլենումի անասնապահական կոլտնտեսությունների ամրացման մասին ծրագրային, միանգամայն կոնկրետ և պարզ վորոշումների յուրաքանչյուր կետը։

Պետք է առանց հետաձգելու բոլոր զամբիկներին ազատել աշխատանքից և նրանց փոխադրել ֆերմաները, լավ կազմակերպել գուգավորումը, լրիվ պահպանել քուռակները։ Պետք է մեծ աշխատանք տանել խոզերի և մյուս անասունների հիվանդության դեմ պայքարելու համար, խոզաբուծությունը տարածել հանրապետության բոլոր շրջաններում։ Պետք է լրիվ պահպանել հոտերին, կազմակերպել խաացրած ծին, վոչխարների յերկու խուզ։ Պետք է ուժեղ կերպով պայքարել վերացնելու կոլտնտեսականների կովազրկությունը։ Պետք է լայն կերպով ծավալել խոտերի ցանքը, առանձնապես կորնգանի։ Բարելավել արոտները և խոտհարքները, կատարել բեղմնավորման ու մեխանացման պլանը և նախապատրաստվել անասունների համար որինակելի ձմեռ կազմակերպելու համար։

Յեվ վերջապես, ամենագլխավորը, հաջողություններով չպետք է մեծամտել, հիշելով, վոր անասնապահության պրոբլեմն առայժմ մնում է պրոբլեմ, և մենք դեռ այն լրիվ կերպով չենք լուծել։ Մենք

անասունների թվի տեսակետից, հոսմեմատած նախահեղափոխական ժամանակաշրջանի և 1929 թվականի հետ՝ հետ ենք մնում, առանձնապես վոչխարների և տավարի թվով, մենք խիստ հետ ենք մնում Միության շատ շրջաններից նաև վորակի տեսակետից։ «Մեր անասնաբուծական կոլտնտեսությունները դեռ հետ մնացող կոլտնտեսություններ են՝ Հայաստանի կոլտնտեսությունների մեջ, իսկ անասնաբուծությունը դեռ գյուղատնտեսության հետ մնացող ճուղն է»։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1936 թ. սեպտեմբերյան պլենումի հանձնարարականը կոլտնտեսություններն ամրապնդելու, ձեռնարկումների մասին» վորոշումից

Մենք մեծ աշխատանք ունենք կատարելու և այդ մենք անպայման պետք է կատարենք։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		Եջ
1.	Անասնապահության վերելքի համար բեկում ստեղծված է	5
2.	Անասնապահության առաջավորները	16
3.	Անտ Նրանք	17
4.	Առաջավորները գնում են Մոսկվա	39
5.	Առաջավորները Մոսկվայում	41
6.	Առաջավորները Կրեմլում	44
7.	Գրիգոր Խաչատրյանի յելույթը	51
8.	Այվազ Մուսատֆայեվի քեֆը տեղը չէ	56
9.	Ձիաբուծներն անհանգիստ են	59
10.	Վերջին նախատ	63
11.	Ընկ. Յակովլևի յելույթը	64
12.	Առաջավոր անասնապահների պարգևատրումը Միության շքանշաններով	67
13.	Շքանշանակիրները մրցակցության պայմանագիր են կնքում	69
14.	Շեֆնշանակիրների դիմավորումը Ցերեվանում	71
15.	Անասնապահ շքանշանակիրների խոսքը	71
16.	Շքանշանակիրների նամակը	75
17.	Շքանշանակիրներն ստախանովյան շարժման ալիք բարձրացրին	78
18.	Մեր խնդիրները կերի բազայի բնագավառում	89
19.	Մեր խնդիրները ոռնմական աշխատանքի բնագավառում	104
20.	Անասնաբուծության զարգացման պետական պլանի մասին	117

Սրբագրիչ՝ Գ. Հակոբյան
Գլավլիտի լիցեզիա № Ն—1132, հրատ. № 384, պատ. 747, տիրաժ 2000
Հանձնված է արտադրության 1936 թ. ապրիլի 16-ին
Տպագրված և ստորագրված 1936 թ. նոյեմբերի 26-ին.

Գուդերատի տպարան, Ցերեվան Նալբանդյան 11

«Ազգային գրադարան»
NL0299024

730

21.490

Գինը 1 ռ. 25 կ.
Կազմը — 75 կ.

А. Шахназарян

ЖИВОТНОВОДЫ АРМЕНИИ В КРЕМЛЕ

Сельхозгиз 1936 Ереван